

ՄԱՍ 1.
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2008-2016թթ.

Գլուխ 1. Ժողովրդագրություն և միգրացիա

Թեև 90-ականներին Հայաստանի բնակչության ծնելիության մակարդակի անկման և մահացության մակարդակի աճի, ինչպես նաև բնակչության ինտենսիվ արտագաղթով պայմանավորված բնակչության թվաքանակի նվազումը որոշակիորեն կայունացավ 2000-ական թվականներին, սակայն նվազման միտումը՝ որպես երևույթ դեռևս շարունակվում է: Այսպես, ՀՀ 2011թ. հոկտեմբերի 12-ի դրությամբ անցկացված մարդահամարի արդյունքներով ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը՝ ՀՀ 2001թ. մարդահամարի նկատմամբ, նվազել է շուրջ 195 հազ. մարդով, կամ 6%-ով: Ընդ որում, միջմարդահամարային տարիների ընթացքում (2001-2011թթ.) ՀՀ բնակչության բնական հավելաձևը, այն է՝ բնակչության թվաքանակի բնական ճանապարհով ավելացումը, կազմել էր շուրջ 126 հազ. մարդ, իսկ միգրացիայի մնացորդը՝ փոփոխությունը (նվազումը)՝ շուրջ -313 հազ. մարդ:

1.1. Բնակչության թվաքանակի փոփոխությունը

Բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումն իրականացվում է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշով¹, որպես հաշվարկի հիմք ընդունելով ՀՀ վերջին՝ 2011թ.-ի մարդահամարի արդյունքները: Դրանք արդիականացվում են եռամսյակային պարբերականությամբ: 2017թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 2 986.1 հազ.մարդ և 2016թ. տարեսկզբի համեմատ այն նվազել է 12.4 հազ.մարդով (տես՝ աղյուսակ 1.1), որը ձևավորվել է հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված բնակչության բնական հավելաձևի և միգրացիայի մնացորդի (զնահատված ցուցանիշի²) տարբերությամբ:

Աղյուսակ 1.1: Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները, 2012-2017թթ.

	Բնակչության թվաքանակը, տարեսկզբին	Բնական հավելաձ	Միգրացիայի մնացորդ ²	Ընդհանուր հավելաձ/նվազում (+, -)
2012	3 021.4	14.9	-9.4	5.5
2013	3 026.9	14.6	-24.4	-9.8
2014	3 017.1	15.3	-21.8	-6.5
2015	3 010.6	13.9	-25.9	-12.0
2016	2 998.6	12.4	-24.8	-12.4
2017	2 986.1			

¹ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի տվյալներով (2011թ. հոկտեմբերի 12-21-ը) Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը (de jure բնակչություն) կազմել է՝ 3 018 854 մարդ, իսկ առկա բնակչության թվաքանակը (de facto բնակչություն)՝ 2 871 771 մարդ:

² Ցուցանիշները վերագնահատվել (ճշգրտվել) են հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով ձևավորված, միգրացիոն գործընթացներն արտացոլող ամփոփ ցուցանիշների հիման վրա, մանրամասն մեթոդաբանական պարզաբանումները տես՝ <http://www.armstat.am/am/?nid=82&id=1547>:

2017թ. տարեկարգի դրությամբ արձանագրված ՀՀ մշտական բնակչության կազմում քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 63.7%, իսկ գյուղականինը՝ 36.3%:

Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության 47.5 %-ը կազմել է արական, իսկ 52.5%-ը՝ իգական սեռի բնակչությունը: Բնակչության միջին տարիքը, 2017թ.-ի տարեկարգի դրությամբ, կազմել է 36.2 տարի և ձևավորվել է 3.7 տարվա խզվածք արական և իգական սեռերի միջև, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 34.3 և 38.0 տարին:

Աղյուսակ 1.2: Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը, 1990-2017թթ.

(տարեկարգին)

Տարիներ	Ամբողջ բնակչությունը (հազ. մարդ)	Տոկոսով ընդամենը բնակչության նկատմամբ	
		քաղաքային	գյուղական
1990	3 514.9	68.8	31.2
1993	3 463.7	68.1	31.9
1996	3 248.8	66.2	33.8
1999	3 232.1	65.3	34.7
2001*	3 213.0	64.3	35.7
2011*	3 018.9	63.3	36.7
2012	3 021.4	63.3	36.7
2013	3 026.9	63.3	36.7
2014	3 017.1	63.4	36.6
2015	3 010.6	63.5	36.5
2016	2 998.6	63.6	36.4
2017	2 986.1	63.7	36.3

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Նշում. *) ՀՀ մարդահամարներ:

Բնակչության բնական շարժը: 1990-ականներից Հայաստանում արձանագրված անկայուն տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավիճակն իր ազդեցությունն է թողել նաև բնակչության վերարտադրողական վարքագծի վրա: Այսպես, ծնելիության ընդհանուր գործակիցը 2016թ.-ին, 1000 բնակչի հաշվով, կազմել է 13.5 պրոմիլ, 2015թ. 13.9 պրոմիլի և 1996թ.-ի՝ 14.8 պրոմիլի համեմատ:

Պտղաբերության (ծնելիության գումարային) գործակիցը՝ ծնունակ տարիքի (15-49 տարեկան) մեկ կնոջ հաշվով 2016թ. կազմել է 1.647 միավոր, 2015թ.՝ 1.645 միավորի համեմատ, ինչը զգալիորեն ցածր է բնակչության պարզ վերարտադրության¹ համար անհրաժեշտ՝ 2.150 ցուցանիշից: Բնակչության վերարտադրության **Բրուտտո** գործակիցը (ծնունակ տարիքում միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի կինը, ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում) 2016թ. կազմել է 0.777, իսկ բնակչության վերարտադրության **Նետտո** գործակիցը (միջին հաշվով քանի աղջիկ երեխա կծնի մեկ կինն իր ողջ կյանքի ընթացքում, որոնք կհասնեն մոր տարիքին, իրենց ծնվելուց՝ յուրաքանչյուր տարիքում ծնելիության և մահացության տվյալ ժամանակաշրջանի մակարդակների պահպանման դեպքում) կազմել է՝ 0.747 միավոր:


¹ Պարզ վերարտադրության դեպքում ծնողներին փոխարինող երեխաների սերունդը և ծնողների սերունդը հավասար են իրենց բացարձակ թվաքանակներով:

Աղյուսակ 1.3: Հայաստան. Ծնելիության տարիքային գործակիցները 1996-2016թթ.

Տարիներ	Ծնվածների միջին թվաքանակը համապատասխան տարիքի 1000 կնոջ հաշվով							
	15-19	20-24	25-29	30-34	35-59	40-44	45-49	15-49
1996թ.- Ընդամենը	61.2	158.1	87.8	39.0	16.5	4.0	0.3	54.0
Քաղաքային	47.0	146.4	85.5	38.6	15.7	3.7	0.2	47.8
Գյուղական	91.1	181.2	91.9	39.6	18.2	4.8	0.4	67.8
2006թ.- Ընդամենը	24.3	111.8	79.2	34.1	11.8	2.0	0.1	41.3
Քաղաքային	18.0	91.4	76.9	38.3	13.9	2.4	0.1	39.4
Գյուղական	36.7	166.8	84.9	26.0	8.6	1.4	0.1	45.0
2015թ. - Ընդամենը	24.3	118.4	102.8	56.2	22.7	4.2	0.3	53.4
Քաղաքային	18.5	112.1	111.1	63.0	26.9	5.1	0.4	54.5
Գյուղական	32.6	127.9	88.5	42.6	14.2	2.4	0.2	51.5
2016թ. - Ընդամենը	24.1	114.7	101.5	58.9	24.6	5.1	0.4	52.7
Քաղաքային	18.2	108.8	110.8	66.3	28.1	6.2	0.6	54.0
Գյուղական	32.7	123.3	85.8	44.5	17.3	3.0	0.2	50.4

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

Գծապատկեր 1.1: Հայաստան. Ծնելիության տարիքային գործակիցների փոփոխությունը 1996-2016թթ., %



Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

2016թ. մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ կազմել է 26.8 տարի, առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 24.7 տարի, 2015թ. համապատասխանաբար՝ 26.4 և 24.4 տարվա համեմատ:

Ըստ ծննդի հաջորդականության՝ երրորդ և բարձր կարգի ծնունդները 2016թ. կազմել են հանրապետության կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակի 19.3 % և նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 0.3 %-ային կետով (աղյուսակ 1.4):

Աղյուսակ 1.4: Հայաստան. Ծնվածների բաշխումն ըստ ծննդի հաջորդականության

(մարդ)

Տարի	Ընդամենը ծնվածներ	այդ թվում՝ ըստ ծննդի կարգի				
		առաջին	երկրորդ	երրորդ	չորրորդ	հինգերորդ և բարձր
1996	48 134	19 495	16 909	8 337	2 436	957
2000	34 276	15 637	11 155	5 085	1 167	762
2006	37 639	19 601	13 271	3 758	705	304
2010	44 825	21 954	15 881	5 683	929	378
2011	43 340	21 344	15 377	5 369	899	351
2012	42 480	20 453	15 481	5 352	874	320
2013	41 790	19 466	15 651	5 477	852	344
2014	43 031	19 548	16 051	6 171	929	332
2015	41 763	17 971	15 850	6 498	1 059	385
2016	40 592	17 711	15 032	6 454	1 040	355

Աղբյուրը. ՀՀ ՄԿԾ

2016թ.-ին գրանցված կենդանի ծնվածների շուրջ 33.6%-ն արձանագրվել են չգրանցված ամուսնություններից (այդ թվում՝ արտասամուսնական), 2006թ.-ի՝ 35.9%-ի և 1996թ.-ի՝ 20.2% համեմատ:

2016թ.-ին՝ նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է մահվան դեպքերի աճ՝ 1.2%-ով, իսկ մահացության ընդհանուր գործակցն աճել է՝ 0.1 պրոմիլային կետով և կազմել 9.4 պրոմիլ: Ընդ որում, մահացության գործակիցը, համեմատաբար, ավելի բարձր է քաղաքային բնակչության շրջանում՝ 9.6, քան գյուղականում՝ 9.2 պրոմիլ:

Աղյուսակ 1.5: Հայաստան. Ծնելիության ու մահացության ցուցանիշները, 1990-2016թթ.-ին

	Ծնունդ						Մահ					
	Հազար մարդ			1000 բնակչի հաշվով			Հազար մարդ			1000 բնակչի հաշվով		
	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1990	79.9	50.2	29.7	22.5	20.5	27.0	22.0	14.7	7.3	6.2	6.0	6.7
1996	48.1	29.4	18.7	14.8	13.7	17.0	24.9	16.5	18.4	7.7	7.7	7.7
2000	34.3	21.4	12.9	10.6	10.3	11.4	24.0	15.7	8.3	7.5	7.5	7.3
2006	37.6	23.8	13.8	12.0	11.9	12.2	27.2	17.7	9.5	8.7	8.9	8.4
2007	40.1	25.5	14.6	12.9	12.9	13.0	26.8	17.2	9.6	8.6	8.7	8.6
2008	41.2	26.2	15.0	13.3	13.3	13.4	27.4	17.9	9.9	8.9	8.9	8.9
2009	44.4	28.3	16.1	14.5	14.5	14.5	27.6	17.5	10.1	9.0	8.9	9.1
2010	44.8	28.2	16.6	14.7	14.6	14.9	27.9	17.8	10.1	9.2	9.2	9.1
2011	43.3	27.6	15.7	14.3	14.4	14.2	28.0	17.8	10.2	9.2	9.3	9.1
2012	42.5	27.1	15.4	14.0	14.2	13.8	27.6	17.6	10.0	9.1	9.2	9.0
2013	41.8	26.8	15.0	13.8	14.0	13.6	27.2	17.4	9.8	9.0	9.1	8.9
2014	43.0	27.8	15.2	14.3	14.6	13.8	27.7	17.6	10.1	9.2	9.2	9.2
2015	41.7	27.1	14.6	13.9	14.2	13.4	27.9	17.7	10.1	9.3	9.3	9.3
2016	40.6	26.5	14.1	13.5	13.9	13.0	28.2	18.3	9.9	9.4	9.6	9.2

Աղբյուրը. ՀՀ ՄԿԾ

Նշում. 2006-2011թթ. գործակիցները վերագնահատվել են ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով վերահաշվարկված մշտական բնակչության թվաքանակների;

Բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ մարզերի ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A1.1-ում:

2016թ.-ին արձանագրված մահացության կառուցվածքում՝ 51.5%-ը կազմել են արական, իսկ 48.5%-ը՝ իգական մահվան դեպքերը, 2006թ.-ին արձանագրված, համապատասխանաբար՝ 51.9% և 48.1%-ի համեմատ: Արական և իգական սեռերի մահացության տարբեր մակարդակներով պայմանավորված, տարբերվում են նաև տղամարդկանց և կանանց կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշները: 2016թ.-ին կյանքի սպասվող միջին տևողությունը տղամարդկանց համար կազմել է 71.6 տարի, իսկ կանանց համար՝ 78.3 տարի: Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 71.7 կանանց համար՝ 78.4 տարի, իսկ գյուղական բնակչության համար, համապատասխանաբար՝ 71.3 և 78.1 տարի:

Մահացության հիմնական պատճառները: Մահացության կառուցվածքում գերակշռում են արյան շրջանառության համակարգի հիվանդություններից և չարորակ նորագոյացություններից արձանագրված դեպքերը, որոնք կազմում են մահացության ընդհանուր դեպքերի ավելի քան երկու երրորդը:

Աղյուսակ 1.6: Հայաստան. Մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների, 2016թ.

Մահացության պատճառները	Ընդամենը մահեր, մարդ		Ցուցանիշը, 100 000 բնակչի հաշվով	
	տղամարդ	կին	տղամարդ	կին
Մահացածներ	14 536	13 690	1020.9	872.8
դրանցից՝ ըստ պատճառների.				
Արյան շրջանառության համակարգի հիվանդություններից	6 522	7 049	458.0	449.4
Չարորակ նորագոյացություններից	3 197	2 465	224.5	157.2
Էնդոկրին համակարգի հիվանդություններից	460	748	32.3	47.7
Մահացություն արտաքին պատճառներից (դժբախտ պատահարներ, թունավորումներ, վնասվածքներ և այլն)	960	324	67.4	20.7
Շնչառական օրգանների հիվանդություններից	1 079	1 069	75.8	68.1
Մարտոդական օրգանների հիվանդություններից	987	855	69.3	54.5
Միզասեռական օրգանների հիվանդություններից	448	422	31.5	26.9
Վարակիչ և մակաբուծային հիվանդություններից	173	64	12.2	4.1
Այլ հիվանդություններից	710	694	49.9	44.2

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

Ծննդյան և մահվան ցուցանիշների տարբերությունն արտահայտում է բնակչության բնական հավելվածը, որը 2016թ. կազմել է 12.4 հազ.մարդ՝ 2015թ. 13.9 հազ. մարդու համեմատ (2006թ.՝ 10.4 հազ., 1996թ.-ի՝ 23.2 հազ.): 2016թ.-ին ՀՀ բնակչության բնական հավելվածի ընդհանուր գործակիցը կազմել է 4.1 պրոմիլ (1000 բնակչի հաշվով), նախորդ տարվա համեմատ արձանագրվել է նվազում 0.5 պրոմիլային կետով:

Միգրացիա: Ըստ 2016թ. ՏՏԿԱՀ արդյունքների, տնային տնտեսությունների 24.9 %-ը 2013-2016թթ. ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում, որոնցում ներառված են տ/տ 15 և բարձր տարիքի անդամների 10.8%-ը:

Աղյուսակ 1.7: Հայաստան. Ք.Երևանի/ՀՀ մարզերի տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների բաշխումն ըստ 2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավվածության (%)

	Ներգրավված են եղել միգրացիոն գործընթացներում			Ընդամենը
	մեկնել են և չեն վերադարձել	մեկնել են և վերադարձել	առաջին անգամ են ժամանել	
ք. Երևան	18.0	26.2	58.5	22.5
Արագածոտն	7.4	0.7	-	4.6
Արարատ	11.7	6.2	-	9.2
Արմավիր	6.5	1.7	-	4.4
Գեղարքունիք	7.3	15.0	-	10.0
Լոռի	10.2	15.0	11.4	12.1
Կոտայք	7.9	17.2	11.7	11.6
Շիրակ	19.5	9.3	-	14.9
Սյունիք	3.9	1.1	-	2.7
Վայոց ձոր	1.6	2.0	2.9	1.8
Տավուշ	6.0	5.6	15.5	6.2
ՀՀ -ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. *SSԿԱՀ 2016թ.*

Աղյուսակ 1.8: Հայաստան. 2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների բաշխումն ըստ սեռի և քաղաքային/գյուղական բնակչության (%)

	Տղամարդ	կին	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Վերադարձածներ	76.0	24.0	100	65.8	34.2
Չվերադարձածներ	88.1	11.9	100	49.7	50.3
Ընդամենը	83.3	16.7	100	53.8	46.2

Աղբյուրը. *SSԿԱՀ 2016թ.*

2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 55.9%-ը (շուրջ 155 հազ. մարդ) 2016թ. դրությամբ դեռևս բացակայել են և գտնվել են՝ ՀՀ այլ մարզում, ք.Երևանում, տվյալ մարզի այլ բնակավայրում կամ այլ երկրում, 37.0%-ը (շուրջ 102 հազ.մարդ) վերադարձել են իրենց մեկնումներից, իսկ 3.3%-ն առաջին անգամ են ժամանել տվյալ բնակավայր (շուրջ 9 հազ.մարդ):

Աղյուսակ 1.9: Հայաստան. 2013թ. հունվարի 1-ից բնակչության մեկ այլ մարզ կամ երկիր մեկնած/ժամանած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների բաշխումն ըստ միգրացիոն գործընթացներում 2016թ. դրությամբ ներգրավվածության

Ներգրավվածություն	Տոկոսով՝ ընդամենից
1. Այո, մեկնել է և չի վերադարձել	55.9
2. Այո, մեկնել է և վերադարձել է մինչև երեք ամիս բացակայությունից	7.4
3. Այո, մեկնել է և վերադարձել է 3-12 ամիս բացակայությունից	22.5
4. Այո, մեկնել է և վերադարձել է 12 ամիս և ավելի բացակայությունից	7.1
5. Առաջին անգամ է եկել տվյալ բնակավայր	3.3
6. Նշված չէ	3.8
Ընդամենը	100

Աղբյուրը. *SSԿԱՀ 2016թ.*

Նշված ժամանակահատվածում արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների՝ 12.0%-ի տեղաշարժերի բնույթը՝ 2016թ. դրությամբ եղել են ներհանրապետական, Երևան քաղաքի/ՀՀ մարզերի միջև, 11.6%-ը՝ ԼՂՀ-ի հետ, իսկ մնացած 76.4%-ը՝ միջպետական, որի գերակշիռ մեծամասնությունը՝ 89.8%-ը Ռուսաստանի Դաշնության հետ (Աղյուսակ 1.10):

Աղյուսակ 1.10: Հայաստան. 2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն ըստ մեկնելու/վերադառնալու պատճառների և գտնվելու/վերադառնալու վայրի, 2016թ. (%)

Գտնվելու /վերադառնալու հիմնական պատճառը	Գտնվելու/վերադառնալու վայրը						
	Ք. Երևան	ՀՀ մարզեր	ԼՂՀ	ՌԴ	ԱՊՀ այլ երկիր	Այլ	Ընդամենը
1. Աշխատելը/ Աշխատանք փնտրելը	2.3	1.3	1.0	92.7	1.3	1.4	100
2. Ընտանեկան	4.6	10.1	2.8	73.0	4.8	4.7	100
3. Բնակությունը	0.0	13.7	0.4	57.2	-	28.7	100
4. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին (այդ թվում՝ զբոսաշրջության, բուժման)	2.5	2.6	2.8	60.7	10.5	20.9	100
5. Ուսում / վերապատրաստում	54.7	8.0	1.2	15.1	1.2	19.8	100
6. Այլ	4.8	23.8	64.7	2.7	1.4	2.6	100
Ընդամենը	5.2	6.8	11.6	68.6	2.1	5.7	100

Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

Միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2016թ.-ի դրությամբ մեկնումներից **վերադարձած** տ/տ անդամներից՝ 80.7%-ի բացակայության տևողությունը կազմել է մինչև մեկ տարի (այդ թվում՝ 19.9%-ի բացակայությունը կազմել է երեք ամիս և պակաս), իսկ 19.3%-ինը՝ մեկ տարի և ավելի:


Աղյուսակ 1.11: Հայաստան. 2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2016թ. դրությամբ վերադարձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների բաշխումն՝ ըստ վերադառնալու պատճառի և բացակայության տևողության (%)

Վերադառնալու հիմնական պատճառը	Բացակայության տևողությունը			Ընդամենը
	≤3ամիս	4 -12ամիս	≥ 12	
1. Աշխատելը/ Աշխատանք փնտրելը	23.9	73.1	18.3	52.7
2. Ընտանեկան	27.0	9.4	16.5	14.3
3. Բնակությունը	0.8	0.6	1.8	0.9
4. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին (այդ թվում՝ զբոսաշրջության, բուժման)	40.5	6.6	13.7	14.7
5. Ուսում / վերապատրաստում	5.8	2.3	5.4	3.6
6. Այլ	2.0	8.0	44.3	13.8
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

Մեկնումներից վերադարձածների 7.4%-ն է եղել ներհանրապետական տեղաշարժերից, գերակշիռ մեծամասնության՝ 73.1%-ի վերադարձը եղել է Ռուսաստանի Դաշնությունից, 4.6 %-ինը՝ ԱՊՀ այլ երկրներից, 3.9%-ինը՝ Եվրոպական երկրներից:

Գծապատկեր 1.2: Հայաստան. 2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2016թ. դրությամբ վերադարձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն ըստ վերադառնալու վայրի (%)



Աղբյուրը. *SSԿԱՀ 2016թ.*


Աղյուսակ 1.12: Հայաստան.2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2016թ. դրությամբ դեռևս չվերադարձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն՝ ըստ բացակայության տևողության

<i>Մեկնելու հիմնական պատճառը</i>	Բացակայության տևողությունը			Ընդամենը
	≤3ամիս	4 -11ամիս	≥ 12	
1. Աշխատելը/ Աշխատանք փնտրելը	81.0	73.6	52.0	66.7
2. Ընտանեկան	0.6	1.7	4.9	2.7
3. Բնակությունը	-	0.8	12.9	5.2
4. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին (այդ թվում՝ զբոսաշրջության, բուժման)	0.5	3.6	0.6	1.9
5. Ուսում / վերապատրաստում	9.8	5.1	3.5	5.3
6. Այլ	8.1	15.2	26.1	18.2
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. *SSԿԱՀ 2016թ.*

2013-2016թթ.-ին իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ մեկնած և 2016թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած տ/տ 15 և բարձր տարիքի անդամների 17.0%-ի բացակայության տևողությունը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմել է՝ 3 ամիս և պակաս, 45.2%-ինը՝ 4-12 ամիս, իսկ 37.8%-ինը՝ մեկ տարի և ավելի:

Գծապատկեր 1.3: Հայաստան. 2013-2016թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2016 թ. դրությամբ դեռևս չվերադարձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն ըստ սեռի և գտնվելու վայրի



Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

2013-2016թթ. 3 ամիս և ավելի ժամկետով իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ մեկնած և 2016թ.-ի դրությամբ, դեռևս չվերադարձած տ/տ 15 և բարձր տարիքի անդամների 11.9 %-ը գտնվել են ՀՀ տարածքում՝ ք.Երևանում, ՀՀ մարզերում, 13.0%-ը՝ ԼՂՀ-ում, իսկ 75.1%-ի գտնվել են այլ երկրներում, այդ թվում՝ գերակշիռ մեծամասնությունը՝ Ռուսաստանի Դաշնությունում:

2013-2016թթ. 3 ամիսից ավելի տևողությամբ արտաքին միգրացիոն գործընթացներում (առանց ներհանրապետական տեղաշարժերի) ներգրավված և 2016թ. դրությամբ դեռևս արտերկրներից չվերադարձած տ/տ անդամների շուրջ 55%-ի ՀՀ-ից բացակայելու տևողությունը կազմել է 3-12 ամիս, իսկ 45 %-ինը՝ մեկ տարի և ավելի:

Ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության, ուսումնասիրվող ժամանակահատվածում (2013-2016թթ.) արտաքին միգրանտները կազմել են հաշվառման ժամանակ երկրից 3 ամիս և ավելի ժամկետով բացակայած տ/տ անդամների (չվերադարձածների) շուրջ 90%-ը (մոտ 95 000 հազ.մարդ), որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 3-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (որում չեն ներառվել՝ հանգստի, ընկերներին/բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, առողջական կամ կրոնական ուխտագնացության մեկնածները) կազմել են 54%, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայողները կազմել են 46%:

Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ 2013-2016թթ. միջակայքում 3 ամիս և ավելի տևողությամբ ՀՀ-ից մեկնած և 2016թ.-ի դրությամբ դեռևս **չվերադարձած 15 և բարձր տարիքի** տ/տ միգրանտ անդամների գնահատված միջին տարեկան թվաքանակը կազմել է շուրջ 24 000 հազ. մարդ: Բացի այդ, հետազոտության հարցումներով արձանագրվել

է նաև, որ հետազոտվող տարում հարցված տնային տնտեսություններում բացակայել են նաև (3 ամիս և ավելի տևողությամբ) շուրջ 3.6 հազ. 0-15 տարեկան տ/տ անդամներ:

Հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում տ/տ 15 և բարձր տարիքի միգրանտ անդամների ավելի քան 54%-ը գումար և/կամ ապրանք են ուղարկել իրենց ընտանիքներին և/կամ ընկեր/բարեկամներին:


1.2. Տարիքային կառուցվածքը և տնային տնտեսությունների կազմը

Ծնելիության մակարդակի նվազման և Հայաստանի համար բնորոշ, թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց շրջանում ծննդյան պահից կյանքի սպասվող միջին տևողության հարաբերականորեն բարձր ցուցանիշի համատեղ ներգործությամբ, ինչպես նաև տղամարդկանց էմիգրացիոն ակտիվության ընդգծված գերակշռման հանգամանքով պայմանավորված, 1996-ից 2016թթ. միջակայքում էական փոփոխության է ենթարկվել Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքը (զծապատկեր 1.2):

ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալներով մինչև 16 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 20.2 տոկոս, 2001թ. մարդահամարի՝ 26.3 տոկոսի համեմատ: Աշխատունակ տարիքի (16-62) բնակչության տեսակարար կշիռը կազմել է 2011թ.՝ 67.8%, 2001թ.-ի 62.1%-ի համեմատ, իսկ աշխատունակ տարիքից բարձր (63-ից բարձր) բնակչության տեսակարար կշիռը, համապատասխանաբար, 12.0%, 2001թ.-ի 11.6%-ի համեմատ:

ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող մշտական բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառմամբ 2017թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 65.7%-ը կազմել է աշխատունակ տարիքի բնակչությունը (16-62 տարեկան), 21.1%-ը՝ 0-15 տարեկան երեխաները, իսկ 13.2%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր (63 և բարձր տարիքի) բնակչությունը: Հանրապետության 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել 521 տարեց և անչափահաս (0-15 տարեկան) անձ, նախորդ տարվա 509 մարդու համեմատ:

Գծապատկեր 1.4: Հայաստան. Բնակչության հիմնական տարիքային կառուցվածքը 1996-2017թթ. (տարեսկզբի դրությամբ)¹



Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

¹ համադրելիության տեսանկյունից ցուցանիշները հաշվարկված են գործող կենսաթոշակային տարիքային խմբերով:

Ըստ 2016թ.-ի տ/տ հետազոտության արդյունքների՝ մշտական բնակչության հաշվարկով, տնային տնտեսության անդամների միջին թվաքանակը կազմել է 3.7 մարդ՝ 3.6 քաղաքային բնակավայրերում և 4.0 գյուղական բնակավայրերում, իսկ առկա բնակչության հաշվարկով՝ համապատասխանաբար, 3.5, 3.4 և 3.6 մարդ:

2016թ.-ին երեք և պակաս անդամ ունեցող տ/տ-ների տեսակարար կշիռը կազմել է 46.9%, 2012թ. 42.0% և 2006թ.-ի՝ 37.7%, համեմատ (աղյուսակ 1.11): Բազմանդամ (6 և ավելի անդամ ունեցող) տ/տ-ները գերակշռել են գյուղական բնակավայրերում՝ 22.5%, քաղաքայինի՝ 16.0%-ի համեմատ:

Մինչև չորս անդամից բաղկացած տնային տնտեսությունները գերակշռել են Հայաստանի քաղաքային բնակավայրերում, որոնց մասնաբաժինը քաղաքային տ/տ-ներում կազմել է՝ 70.2%, գյուղականի՝ 60.1 %-ի համեմատ:

Աղյուսակ 1.13: Հայաստան. Տնային տնտեսությունների բաշխումն ըստ դրանց կազմի (ըստ մշտական բնակչության) 2006 , 2010-2016թթ.-ին

Տնային տնտեսությունների կազմը	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ						
	2006թ.	2010թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Տնային տնտեսություններ կազմված՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
մեկ անդամից	11.1	10.0	10.9	12.5	12.9	14.1	13.8
2 անդամից	13.9	14.0	16.1	16.7	17.1	17.7	17.4
3 անդամից	12.7	14.2	15.0	15.2	14.1	15.2	15.7
4 անդամից	21.4	21.0	20.6	19.0	19.8	19.2	19.7
5 անդամից	19.0	18.0	16.5	16.1	15.7	15.4	15.2
6 և ավելի անդամներից	21.9	22.8	20.9	20.5	20.4	18.4	18.2

Աղբյուրը. 2006, 2012 - 2016թթ.-ի ՏՏԿԱՀ

2016թ.-ին մինչև 16 տարեկան երեխաներ չունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է 57.7%՝ 2006թ.-ի 50.3%-ի և 2010թ.՝ 53.4%-ի համեմատ: Նախորդ տարվա համեմատ, համապատասխանաբար՝ 0.3 և 0.9 տոկոսային կետով նվազել են 1 և 2 երեխա ունեցող տ/տ-ների մասնաբաժինները, իսկ 3 երեխա ունեցող տ/տ-ների մասնաբաժինն աճել է և կազմել է՝ 5.2%, նախորդ տարվա 4.4 տոկոսի համեմատ (աղյուսակ 1.12):

Աղյուսակ 1.14: Հայաստան. Մինչև 16 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունները, 2006, 2010 - 2016թթ.

(ըստ մշտական բնակչության)

Տնային տնտեսությունների կազմը	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ						
	2006թ.	2010թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Տնային տնտեսություններ ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ըստ երեխաների թվաքանակի.							
1 երեխա ունեցող	20.3	19.9	18.5	18.3	18.1	17.3	17.0
2 երեխա ունեցող	21.4	20.0	18.2	19.0	18.5	20.3	19.2
3 երեխա ունեցող	5.8	5.3	5.0	4.4	5.2	4.4	5.2
4 երեխա ունեցող	1.8	1.0	0.7	0.8	0.8	0.7	0.7
5 և ավելի երեխա ունեցող	04	0.4	0.4	0.3	0.2	0.2	0.2
երեխա չունեցող	50.3	53.4	57.2	57.2	57.2	57.1	57.7

Աղբյուրը. 2004, 2010 - 2016թթ.-ի ՏՏԿԱՀ.

Հանրապետությունում տնային տնտեսությունների գերակշիռ մասի գլխավորը հանդիսացել են տղամարդիկ՝ 65.7%, իսկ կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է՝ 34.3% (քաղաքային բնակավայրերում՝ 37.7%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 27.8%):

2016թ. կին գլխավոր ունեցող մեկ տնային տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկել մինչև 16 տարեկան 0.31 երեխա, իսկ տղամարդ գլխավոր ունեցող տնային տնտեսությանը՝ 0.48:

2016թ.-ին արձանագրվել է ամուսնության 16 294 դեպք, 2015թ.՝ 17 603, 2006թ.՝ 16 887 և 1996թ.՝ 14 234 դեպքերի համեմատ: 2016թ. ամուսնալուծության դեպքերը 0.6 տոկոսով նվազել են նախորդ տարվա համեմատ և կազմել է 3 648 դեպք, իսկ ամուսնալուծության ընդհանուր գործակիցը, ինչպես նախորդ տարի, կազմել է 1.2‰:

Գրանցված ամուսնության միջին տարիքը 2016թ.-ին տղամարդկանց համար կազմել է 30.8, իսկ կանանց համար՝ 27.2 տարեկանը¹, 2015թ.-ի՝ համապատասխանաբար՝ 30.7 և 27.1 տարեկանի համեմատ: Առաջին ամուսնության միջին տարիքը 2016թ.-ին տղամարդկանց համար կազմել է 29.6, իսկ կանանց համար՝ 26.4 տարեկանը, 2015թ.-ին՝ համապատասխանաբար՝ 29.4 և 26.2 տարեկանի համեմատ:

¹Հարկ է նշել, որ կանանց, ինչպես ամուսնության միջին տարիքը, այնպես էլ առաջին ամուսնության միջին տարիքն ավելի բարձր է, քան ծննդյան ժամանակ (26.4 տարի) և առաջին երեխայի ծննդյան ժամանակ (24.4 տարի) մոր միջին տարիքը: Երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալները հաշվարկված են գրանցված ամուսնությունների հիման վրա, իսկ սովորաբար ամուսնությունների գրանցումներն իրականացվում են որոշակի հետաձգումով՝ երեխայի ծննդից հետո, ինչպես նաև առկա են դեպքեր՝ երկրորդ և այլ ամուսնությունների, որոնց գրանցումը կատարվում է ավելի բարձր տարիքում:

Գլուխ 2. Հայաստանի տնտեսական զարգացումների ամփոփ նկարագիրը 2012-2016թթ.-ին

2.1. Մակրոտնտեսական միջավայրը

2008թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը հարվածեց Հայաստանի տնտեսությանը: Մինչ այդ ձևավորված կայուն տնտեսական միջավայրը, այդ թվում՝ պարտքի ցածր մակարդակը, աճող խնայողությունները և զգուշավոր ֆիսկալ դիրքը պահպանեցին տնտեսությունը գլոբալ տնտեսական ճգնաժամի սկզբնական ազդեցությունից, արտաքին պահանջարկի և կապիտալ հոսքերի ծավալների անկման ազդեցությունը սկսեց զգացվել 2008թ.-ի չորրորդ եռամսյակից, երբ արդեն իսկ գրանցվեց 5.9% տնտեսական անկում, իսկ տարեկան ՀՆԱ-ի աճը կազմեց 6.9%, 2007թ. 13.7% երկնիշ աճի դիմաց:

Ներդրումները նվազեցին մեծացող տեմպով, իսկ բնակելի շենքերի շինարարությունն առաջին հատվածն էր, որ ամենամեծ տուժողը հանդիսացավ տնտեսական միջավայրի կտրուկ փոփոխության արդյունքում: Տնտեսական ցուցանիշները հաստատեցին, որ 2009թ.-ի արդյունքներով խոր անկում արձանագրվեց: 2009թ.-ին գրանցվեց իրական ՀՆԱ-ի 14.1% անկում, որին սկսեց հաջորդել դանդաղ վերականգնում՝ սկսած 2010 թ.-ից (2010թ.-ին ՀՆԱ-ի հավելվածը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 2.2%, 2011թ.՝ 4.7%): Բավականին զգալի էր 2012թ. ՀՆԱ-ի աճը՝ 7.2%, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2008թ.-ի տնտեսական ակտիվության մակարդակին:

2013թ.¹ տնտեսության վերականգնման միտումները շարունակվում էին, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով՝ հիմնականում պայմանավորված շինարարության ոլորտի անկմամբ:

2014¹ թվականին, չնայած տարվա առաջին երեք եռամսյակներին տնտեսական աճը արագացման միտումներ էր դրսևորել, սակայն տարեվերջին տնտեսական աճի տեմպը դանդաղեց և տարեկան աճը կազմեց 3.6%: 2015-2016 թվականներին տնտեսական իրավիճակը մեծապես կրում էր արտաքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղման, փոխարժեքի արժեզրկման, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման արդյունքում տնօրինվող եկամտի աճի տեմպերի դանդաղման ազդեցությունը:

Գյուղատնտեսական մթերքի առաջարկի խթանման, արդյունաբերության ոլորտի կազմակերպություններում ներդրումների իրականացման, հարկային քաղաքականության արդիականացման, ավելացված արժեքի հարկի վճարման հետաձգման և աշխատավարձերի բարձրացման արդյունքում ՀՆԱ-ի կառուցվածքում տեղի ունեցան զգալի փոփոխություններ:

Ի հակադրություն 2008թ. շինարարության աճի բարձր տեմպի, որն ապահովել էր ՀՆԱ-ի աճի 39.1%-ը և ՀՆԱ-ի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը հասել էր մինչև

¹Սկսած 2015թ.-ից ՀՆԱ ցուցանիշը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է համաձայն Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008) միջազգային ստանդարտի ըստ որի վերանայվել են նաև 2012-2014թթ. ՀՆԱ ցուցանիշները: Սույն զեկույցում 2013-2016թթ. ՀՆԱ-ի և տնտեսական աճի վերաբերյալ տվյալները հաշվարկված են ըստ ԱՀՀ 2008-ի:

25.3%, 2009թ.-ին շինարարության ծավալների մեծ չափով անկումը (41.6%), որ կազմել էր ՀՆԱ-ի անկման 74.5%-ը, հանգեցրեց ՀՆԱ-ի կառուցվածքում վերջինիս տեսակարար կշիռի նվազման մինչև 18.6%: 2009թ. նկատմամբ 2010թ. շինարարության 3.3% աճին հաջորդեցին 2011թ.-ի 12.2%, 2013թ.-ի 7.4%, 2014թ.-ի 4.5%-ի, 2015թ.-ի 3.1% և 2016թ. 10.8% բարձր անկումները: Արդյունքում շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2015թ.-ին կրճատվեց մինչև 9.4%, իսկ 2016թ.-ին այն կազմեց 8.0% (Աղյուսակ 2.1):

Աղյուսակ 2.1. Հայաստան. ՀՆԱ-ի կառուցվածքն, իրական ծավալի ինդեքսներն ու ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափերն արտադրական եղանակով՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների խոշոր խմբավորումների (ՏԳՏՀԴ խմբ.2), 2013-2016թթ.¹

Ծածկագիրն ըստ ՏԳՏՀԴ խմբ.2		ՀՆԱ-ի կառուցվածքը, %				Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %			ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը, տոկոսային կետ		
		2013	2014	2015 ^o	2016 ²	2014	2015 ^o	2016 ²	2014	2015 ^o	2016 ²
	Ներքին արդյունք (համախառն շուկայական գներով)	100.0	100.0	100.0	100.0	103.6	103.2	100.2	3.6	3.2	0.2
	Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	11.1	11.3	10.6	10.0	101.8	94.9	95.7	0.2	-0.6	-0.5
	Ավելացված արժեք (համախառն հիմնական գներով)	88.9	88.7	89.4	90.0	103.9	104.3	100.7	3.4	3.8	0.7
	ՖՄԱԶԾ	-2.0	-2.1	-1.8	-1.8	106.0	87.5	100.7	-0.1	0.3	0.0
A	Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորս-	18.4	18.1	17.2	15.9	106.1	113.2	94.2	1.1	2.4	-1.0

¹Ըստ ԱՀՀ 2008

² Տվյալները նախնական են

Ծածկագիրն ըստ ՏԳՏՀԴ խմբ.2		ՀՆԱ-ի կառուցվածքը, %				Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %			ՀՆԱ-ի հավելածին նպաստման չափը, տոկոսային կետ		
		2013	2014	2015 ^օ	2016 ²	2014	2015 ^օ	2016 ²	2014	2015 ^օ	2016 ²
	սուբյուն, ձկնաբուծություն										
B+C+D+ E	Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան	16.2	16.0	16.3	16.7	99.1	106.2	104.8	-0.1	1.0	0.8
F	Շինարարություն	10.5	9.3	9.4	8.0	95.5	96.9	89.2	-0.5	-0.3	-1.0
G+H+I+J+K+L+M+N+O+P+Q+R+S+T	Առևտուր և ծառայություններ	45.7	47.4	48.3	51.2	106.7	101.0	104.0	3.0	0.4	1.9

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

2013թ.-ին արդյունաբերությունում գրանցված 6.3% տնտեսական աճին հաջորդեց 2014թ.-ի 0.9% տնտեսական անկումը, որը հիմնականում պայմանավորված էր էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում և հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության տեսակներում արձանագրված տնտեսական անկմամբ: 2015-2016թթ. այստեղ գրանցվեց զգալի տնտեսական աճ համապատասխանաբար 6.2% և 4.8%: 2016թ. արձանագրված 0.2% տնտեսական աճին նպաստել են արդյունաբերությունն ու ծառայությունները: Արդյունաբերության ոլորտում դրական աճին նպաստել են մշակող արդյունաբերությունը և հանքագործությունը, որոնք համապատասխանաբար աճել են 5%-ով և 11.6%-ով:

Գյուղատնտեսությունում՝ ներառյալ անտառային տնտեսությունը, ձկնորսությունը, ձկնաբուծությունը, 2010թ. պայմանավորված անբարենպաստ բնակլիմայական պայմաններով գրանցված տնտեսական անկումից (12%) հետո հաջորդող տարիներին շարունակաբար գրանցվում էր տնտեսական աճ: 2012թ.-ի համեմատ 2015թ. այն կազմել է 29.2%, իսկ տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2013թ. կազմել է 18.4%: 2016թ.-ին այդ ոլորտում պատկերը փոխվեց, դրսևորվեց աճի տեմպի բացասական միտում և գրանցվեց 5.8% տնտեսական անկում, իսկ մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազեց մինչև 15.9%-ի:

Եթե 2012-2013թթ. տնտեսական աճին զուգահեռ նկատվում էր ՀՆԱ-ի նկատմամբ տնտեսության վերջնական սպառման մակարդակի աճ, որը կազմել էր համապատասխանաբար 98.1% և 99.1%, ապա 2014թ.-ին այն նվազել է մինչև 97.6 %-ի, 2015թ.-ին՝ 91.2%, իսկ 2016թ.-ին 90.8%-ի:

2012-2014թթ.-ին ՀՀ ազգային դրամը արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և այլ արտարժույթների նկատմամբ՝ կապված մասնավոր դրամական փոխանցումների և օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազման հետ:

Աղյուսակ 2.2. Հայաստան. Մակրոտնտեսական ցուցանիշները, 2013-2016թթ.

	2013	2014	2015 [◊]	2016
Անվանական ՀՆԱ (մլրդ. դրամ) ¹	4 555.6	4 828.6	5 043.6	5 079.9
Անվանական ՀՆԱ (մլն. ԱՄՆ դոլար) ¹	11 121.3	11 609.5	10 553.3	10 572.3
Իրական ՀՆԱ-ի աճ (տարեկան տոկոսային աճ) ¹	3.3	3.6	3.2	0.2
Իրական ՀՆԱ-ի աճ 2012թ. նկատմամբ (տոկոսային աճ) ¹	3.3	7.0	10.4	10.7
ԱՄՆ դոլարի փոխարժեք (ժամանակաշրջանի միջին)	409.63	415.92	477.92	480.49
Գործազրկության մակարդակ, (տոկոսներով)	16.2	17.6	18.5	18.0
Միջին ամսական անվանական աշխատավարձ (դրամ)	146 524*	158 580	171 615	174 445
Գնաձ (միջին տարեկան)	5.8	3.0	3.7	-1.4
Համախմբված բյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	25.7	26.3	28.6	29.2
Համախմբված բյուջեի պակասուրդ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	-1.5	-1.9	-4.8	-5.5

¹Ըստ ԱՀՀ 2008

*Ցուցանիշը հաշվարկված է ըստ 01.01.2014թ.-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-246), որի համաձայն ՀՀ-ում աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներում 2014թ. հունվարի 1-ից ներառվել են նաև գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Նշված օրենսդրական փոփոխության արդյունքում, 2012-2013թթ. աշխատավարձի ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով, 2012թ. համապատասխան ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ գործող մեթոդաբանության՝ գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվարկային (պայմանականորեն) դրույքաչափերը կիրառելու մեթոդով:

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

Աղյուսակ 2.3. Հայաստան. Համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները, 2012-2016թթ.

(ՀՆԱ¹-ի նկատմամբ, տոկոս)

	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	22.9 [◊]	24.2 [◊]	24.4	23.8	23.7
որից՝ հարկեր և տուրքեր	21.1	22.4	22.5	21.6	21.7
Ընդամենը ծախսեր	24.3 [◊]	25.7 [◊]	26.3	28.6	29.2
Պակասուրդ	-1.4 [◊]	-1.5 [◊]	-1.9	-4.8	-5.5

Աղբյուրը. ՀՀ ՄՎԾ

2012 թվականին պետական բյուջետային ծախսերում սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը կազմում էր 45.6%, 2013-2016 թթ.-ին այս ցուցանիշը համապատասխանաբար կազմել է՝ 40.7%, 43.3%, 42.0% և 41.9%: Նշված ժամանակահատվածում սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերի տեսակարար կշիռը համախմբված բյուջեի ծախսերում չի գերազանցել 2012թ.-ի 50.3%-ի մակարդակը (Աղյուսակ 2.4): 2013թ.-ին այն նվազել է՝ կազմելով 44.9%, 2014թ. այն աճել է նախորդ տարվա նկատմամբ և կազմել 47.6%, իսկ 2015- 2016 թթ.-ին այն նվազել է և կազմել, համապատասխան՝ 46.7% և 46.3%:

¹ 2013-2016թթ.. ՀՆԱ՝ ըստ ԱՀՀ 2008

[◊] ճշգրտված է

Աղյուսակ 2.4. Հայաստան. Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը* 2012-2016թթ.

(տոկոսներով համախմբված բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ)

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016
Կրթության ոլորտ	12.9	11.5	11.9	11.2	11.0
Առողջապահության ոլորտ	6.2	5.5	6.1	6.0	6.0
Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ, կրոն	2.8	2.2	2.3	2.7	2.3
Կենսաթոշակներ**	19.8	17.6	19.4	20.0	20.0
Կենսաթոշակներ, ՀՆԱ-ի նկատմամբ, <i>(տոկոսներով)</i>	4.8	4.5	5.1	5.7	5.9
Այլ սոցիալական ծրագրեր	8.6	8.1	7.9	6.8	7.0
Ընդամենը համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսեր	50.3	44.9	47.6	46.7	46.3

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Նշում. * Ներառում է ՀՀ պետական և համայնքների բյուջեներից սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերը:

** Ներառում է վատառողջության, անաշխատունակության, ծերության և հարազատին կորցրած անձանց տրամադրվող կենսաթոշակները:

2.2. Տնտեսական աճը և աղքատությունը

Վերջին տարիների տնտեսական աճը (2012-2016թթ.) որոշ դրական ազդեցություն է ունեցել երկրի աղքատության մակարդակի վրա:

Էլաստիկության գործակիցը կիրառվել է՝ ցույց տալու համար մակրո/միկրո կապը մակրոտնտեսական փոփոխությունների և աղքատության մակարդակի միտումների միջև:

Սկսած 2015թ.-ից ՀՆԱ ցուցանիշը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է համաձայն «Ազգային հաշիվների համակարգ 2008» (ԱՀՀ 2008) միջազգային ստանդարտի՝ ըստ որի վերանայվել են նաև 2012-2014թթ. ՀՆԱ ցուցանիշները: Սույն զեկույցում 2013-2016թթ. ՀՆԱ-ի և տնտեսական աճի վերաբերյալ տվյալները հաշվարկված են ըստ ԱՀՀ 2008-ի:

2013-2016թթ.-ին արձանագրված տնտեսական աճը նախադրյալներ է ստեղծել կենսապայմանների բարելավման և աղքատության մակարդակի կրճատման համար: 2012թ.-ի համեմատ ՀՆԱ ցուցանիշը աճել է 10.66%-ով, իսկ աղքատության մակարդակը նվազել է 9.26%-ով, ինչի արդյունքում 2013-2016թթ.-ին գրանցվել է ՀՆԱ-ի նկատմամբ աղքատության էլաստիկության բացասական գնահատական:

2016թ.-ին 2012թ-ի նկատմամբ տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսային կետ աղքատության ընդհանուր մակարդակն իջեցրել է 0.87%-ային կետով (Աղյուսակ 2.5): 2013-2016թթ.-ին էլաստիկության գործակիցը ավելի բարձր է եղել այլ քաղաքներում:

**Աղյուսակ 2.5. Հայաստան. ՀՆԱ-ի* նկատմամբ աղքատության էլաստիկության
գնահատականները 2013-2016թթ. (2012=100)**

(տոկոսային կետ)

	2013-2016թթ.
Ընդհանուր աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-0.87
ա) քաղաքային աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-1.07
1) Երևան քաղաքի աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-0.26
2) այլ քաղաքներում աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-1.66
բ) գյուղական աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-0.87
գ) գյուղական աղքատության նվազեցում /գյուղատնտեսության ավելացված արժեքի էլաստիկություն	-0.18

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ

*Համաձայն Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008) միջազգային ստանդարտի:

Գլուխ 3. Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2016թթ.-ին

3.1. Ներածություն

2016թ.-ին Հայաստանի տնտեսության աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է միայն 0.2 տոկոսային կետով: Այդպիսի համեստ աճը բավարար չէ երկրում աղքատության մակարդակի նվազման համար: Այնուամենայնիվ, առաջին անգամ՝ 1996թ.-ին աղքատության մակարդակի պաշտոնական գնահատման հրապարակումից հետո, 2016թ.-ին սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ ցուցաբերեց գնանկում, ինչը նպաստեց աղքատության գծերի նվազմանը: 2015թ.-ի համեմատ աղքատության մակարդակը նվազել է 0.4 տոկոսային կետով և **կազմել 29.4%**, արդյունքում, աղքատության մակարդակը վիճակագրորեն չի փոփոխվել: 2016թ.-ին, ինչպես և նախորդ յոթ տարիների ընթացքում, Հայաստանում աղքատության մակարդակը դեռ գերազանցել է 2008թ.-ի աղքատության մակարդակը 1.8 տոկոսային կետով (27.6%):

Սույն զեկույցում ներկայացվում է 2016թ.-ի Հայաստանի աղքատության պատկերը 2008թ.-ի նախաֆինանսական ճգնաժամի տվյալների հետ համեմատելով: Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ՝ 2008-2016թթ.-ի համար օգտագործվել է սպառման ագրեգատի և աղքատության գծերի հաշվարկման վերանայված (ըստ ավելի մանրամասնեցված տարրերի և աղքատության եռաստիճան մակարդակների գնահատման) մեթոդաբանությունը:

3.1.1. Հիմնական հասկացություններ

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը:

Ինչպես նախորդ զեկույցներում, այս անգամ ևս բնակչության կենսամակարդակի փոփոխության դինամիկան նկարագրվում է նյութական և ոչ նյութական աղքատության տեսանկյունից:

Ոչ նյութական աղքատության բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է, այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը:

Սույն գլխի ներքո աղքատությունը գնահատվում է նյութական (դրամային) ցուցանիշների միջոցով: Աղքատության չափման հիմնական մոտեցումը Հայաստանում համարվում է նյութական աղքատությունը: Նշված համատեքստում, համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, աղքատությունը որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի սպասելի անկարողությունն է: Այս գլխում առաջին անգամ ներկայացվում են սոցիալական բացառումների ազգային բազմաչափ աղքատության համաթվի արդյունքները, որոնք հիմնված են ոչ նյութական աղքատության վրա (տե՛ս 3.10 բաժին):

Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ազդեցական ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով, ընդունված է, որ սպառումը եկամտի համեմատ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում բարեկեցության մակարդակի վերաբերյալ, քանզի տնային տնտեսության սպառման ազդեցատր սովորաբար ավելի ճշգրիտ տեղեկատվություն է պարունակում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում: Եկամուտների մասին տեղեկատվությունը պակաս վստահելի է, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից, ինչպես նաև, եկամուտների որոշ տեսակների բնորոշ է սեզոնայնության նշանակալիությունը:

Սպառման ազդեցական ցուցանիշը ներառում է հետևյալ բաղկացուցիչները. (ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը և (բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:


Հայաստանում նյութական աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է բացարձակ աղքատության հայեցակարգը: Հայաստանի բնակչությունն, ըստ աղքատության կարգավիճակի, բաժանվում է աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների: Աղքատներն իրենց հերթին ներառում են՝ շատ աղքատներ և նրանց թվում՝ ծայրահեղ աղքատներ:

Աղքատությունը Հայաստանում գնահատվում է 1996թ.-ից սկսած: 2009թ.-ից Հայաստանում օգտագործվում է Համաշխարհային բանկի վերանայված՝ թվով երրորդ մեթոդաբանությունը (երեք մեթոդաբանությամբ հաշվարկված աղքատության ցուցանիշները համեմատելի չեն և բերված են Հավելված 2 Աղյուսակ A3.6-ում):

Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից, շատ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից: 2016թ.-ին աղքատության մակարդակը կազմել է 29.4%՝ 2015թ.-ի համեմատ արձանագրելով աղքատության մակարդակի նվազում միայն 0.4 տոկոսային կետով: Սա նշանակում է, որ երկրի տաս բնակչից մոտ երեքն ամսական 40 867 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր են գտնվել:

Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս 2009թ.-ի մեթոդաբանությունից բխող երեք աղբատության գծերը՝ 2016 թվականի գներով:

Գծապատկեր 3.1. Հայաստան. Աղբատության մակարդակը և աղբատության գծերը 2016թ.-ին



Զնայած, որ աղբատությունը գնահատելու համար ավելի հաճախ օգտագործվող ցուցանիշներից հանդիսանում է աղբատության մակարդակը, այդուհանդերձ այն հաշվի չի առնում աղբատության ինտենսիվությունը, ինչը նշանակում է, թե որքանով են աղբատ տնային տնտեսությունները ցածր աղբատության գծից, ինչը հաճախ անվանում են աղբատության ճեղքվածք:

Աղբատության խորությունը հաշվարկվում է աղբատ բնակչության հաշվով և ցույց է տալիս **աղբատության պակասորդը**, այսինքն՝ թե որքանով է աղբատների միջին եկամուտը¹ (կամ սպառումը) ցածր աղբատության գծից: Աղբատության խորության (2016թ.-ի համար 4.3%) գնահատականը նաև ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և աղբատ, և ոչ աղբատ) մոբիլիզացնելու աղբատության գծի 4.3%-ին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին միայն աղբատ տնային տնտեսություններին, ապա աղբատությունը տեսականորեն կվերանար, ենթադրելով, որ աղբատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղբատներին:

Աղբատության սրությունը արտացոլում է աղբատների միջև եղած սպառման անհավասարությունը: Այն արտացոլում է այն փաստը, որ որոշ աղբատների սպառումը շատ է

¹ Հայաստանի դեպքում՝ սպառումը

հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ: 2016թ.-ին աղքատության սրությունը եղել է 1.1%:

Աղքատության խորությունը 2016թ.-ի համար գնահատվել է 4.3%, իսկ աղքատության սրությունը՝ 1.1%:

2016թ.-ին աղքատության խորությունն ու սրությունը զիջել են 2008թ.-ի ցուցանիշներին (համապատասխանաբար 4.3%՝ 2016թ.-ին 2008թ.-ի՝ 5.1%-ի դիմաց և 1.1%՝ 1.4%-ի դիմաց):

3.2. Աղքատության ցուցանիշներն ու միտումները

Աղքատության միտումները: 2016թ.-ին Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 29.4%՝ 2008թ.-ին արձանագրված 27.6%-ի դիմաց: Շատ աղքատների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ կազմել է 9.8%՝ 2008թ.-ին արձանագրված 12.6%-ի դիմաց: Ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.8%՝ 2008թ.-ին արձանագրված 1.6%-ի դիմաց (Աղյուսակ 3.1):

2016 թ.-ին ընդհանուր աղքատության մակարդակը դեռևս ավելի բարձր էր 2008 թվականի մակարդակից 1.8 տոկոսային կետով (կամ 6.5% -ով), մինչդեռ ծայրահեղ աղքատության մակարդակը բարձրացել էր ընդամենը 0.2 տոկոսային կետով: Մինևույն ժամանակ, ճգնաժամից հետո աղքատների թիվը նվազել է 2.9 տոկոսային կետով՝ 2008 թ.-ի համեմատ:

Ինչպես երևում է Գծապատկեր 3.1-ից 29.4% աղքատների ընդհանուր թվաքանակի մեջ 1.8 %-ը ծայրահեղ աղքատ է, 8.0%-ը՝ շատ աղքատ (առանց ծայրահեղ աղքատների), իսկ մնացած 19.6%-ը՝ ուղղակի աղքատ է: 2016թ.-ին աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է մոտ 880 հազար մարդ (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով¹), նրանցից շատ աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ մոտ 295 հազար, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ մոտ 54 հազար մարդ:

2016թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունը ըստ քաղաքային (28.8%) և գյուղական բնակավայրերի (30.4%) փոքր է: Սակայն, աղքատության մակարդակի տարբերությունը Երևանում (24.9%) և երկրի այլ քաղաքներում (33.2%) մեծ է:

2016թ.-ին աղքատության մակարդակը դեռ գերազանցում է 2008թ.-ի մակարդակին 1.8 տոկոսային կետով (կամ 6.5 %-ով), իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ միայն 0.2 տոկոսային կետով: Մինևույն ժամանակ, ճգնաժամից հետո, շատ աղքատների մակարդակը 2008թ.-ի համեմատ նվազել է 2.9 տոկոսային կետով:

2016թ.-ին աղքատության խորությունը գնահատվել է 4.3%՝ 2008թ.-ի 5.1%-ի համեմատ (նվազումը՝ 0.8 տոկոսային կետ), իսկ աղքատության սրությունը գնահատվել է 1.1 %՝ 2008թ.-ի 1.4 %-ի համեմատ (նվազումը՝ 0.3 տոկոսային կետ):

¹ Ըստ 2016թ. մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի

Աղքատության գծի նկատմամբ աղքատների համար *անհրաժեշտ լրացուցիչ սպասման միջին պակասությունը*, արտահայտված տոկոսներով, կազմել է 14.6 % (Աղյուսակ 3.7):


Աղյուսակ 3.1. Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշները 2008, 2015 և 2016թթ.-ին
(տոկոսներով)

	2008թ.			2015թ.			2016թ.					
	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	%-ը աղքատ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	1.9	13.0	27.6	2.2	10.4	29.4	2.0	9.6	28.8	62.4	4.3	1.1
<i>Ք. Երևան</i>	1.1	8.1	20.1	2.0	8.3	25.0	1.9	7.8	24.9	28.2	3.9	1.1
<i>Այլ քաղաքներ</i>	2.8	18.2	35.8	2.4	12.8	34.4	2.1	11.6	33.2	34.2	4.6	1.2
Գյուղական բնակավայրեր	1.2	11.9	27.5	1.7	10.3	30.4	1.4	10.1	30.4	37.6	4.3	1.1
Ընդամենը	1.6	12.6	27.6	2.0	10.4	29.8	1.8	9.8	29.4	100	4.3	1.1

Աղբյուրը: ՏՏԿԱՀ 2008, 2015 և 2016թթ.

Գծապատկեր 3.2. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տարածաշրջանների 2008 և 2016թթ.

(տոկոսներով)



Աղբյուրը: ՏՏԿԱՀ 2008 և 2016թթ.

**Աղյուսակ 3.2. Հայաստան. Աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան
2004-2016թթ.-ին (ըստ 2009թ.-ի մեթոդաբանության)**

(տոկոսներով)

Տարիներ	Ոչ աղքատ բնակչության մակարդակը	Աղքատ	բնակչության մակարդակը		
			նրանցից շատ աղքատ բնակչության մակարդակը		այդ թվում՝ ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը
2004թ.	46.5	53.5	32.6	4.4	
2005թ.	59.9	40.1	19.6	3.3	
2006թ.	69.8	30.2	14.2	2.3	
2007թ.	73.6	26.4	14.5	2.0	
2008թ.	72.4	27.6	12.6	1.6	
2009թ.	65.9	34.1	20.1	3.6	
2010թ.	64.2	35.8	21.3	3.0	
2011թ.	65.0	35.0	19.9	3.7	
2012թ.	67.6	32.4	13.5	2.8	
2013թ.	68.0	32.0	13.3	2.7	
2014թ.	70.0	30.0	10.9	2.3	
2015թ.	70.2	29.8	10.4	2.0	
2016թ.	70.6	29.4	9.8	1.8	

Աղբյուրը. *SSYULZ 2004 -2016թթ.*

2004-2016թթ.-ի ընթացքում աղքատության մակարդակը նվազել է 45%-ով (կամ 1.8 անգամ). 53.5%-ից՝ 29.4%-ի: Ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 59%-ով (կամ 2.4 անգամ)՝ 2004թ.-ի 4.4%-ի համեմատ և 2016թ.-ին կազմել է 1.8 %:

Աղքատության ցուցանիշները հաշվարկելու համար օգտագործվող աղքատության գծերը բերված են Աղյուսակ 3.3-ում: 2016թ.-ին աղքատության գիծը հաշվարկվել է՝ օգտագործելով 2009թ.-ին փաստագրված (եմպիրիկ եղանակով ստացված) նվազագույն պարենային զամբյուղը և գնահատված ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը (տես՝ Մեթոդաբանական պարզաբանումները):

Հաշվի առնելով 2016թ.-ի գնանկումը նախորդ տարվա համեմատ՝ ճշգրտվել են 2016թ.-ի աղքատության գծերը՝ ընթացիկ գներով հաշվարկված սպառման ագրեգատի հետ համեմատություն անցկացնելու նպատակով¹:

Մույն զեկույցում, աղքատության մակարդակը կներկայացվի որպես աղքատության վերին մակարդակի ցուցանիշ, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը կսահմանվի որպես աղքատության պարենային գծից ցածր սպառում ունեցող բնակչության մասնաբաժին:

¹ Առավել մանրամասն տես՝ «Մեթոդաբանական պարզաբանումներ» մասը

Աղյուսակ 3.3. Հայաստան. Անվանական աղքատության գծերը և դրանց փոփոխությունը, 2008-2016թթ.-ին մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար (ըստ 2009թ.-ի մեթոդաբանության) (դրամ)

Աղքատության գծերը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	17 644	17 483	19 126	21 306	21 732	22 993	23 384	24 109	23313
Աղքատության ստորին գիծ	24 388	25 217	27 410	29 856	30 547	32 318	33 101	34 234	33418
Աղքատության վերին գիծ	29 903	30 920	33 517	36 158	37 044	39 193	40 264	41 698	40867

Աղբյուրը. 2008-2016 թթ. ՏՏԿԱՀ

2016թ.-ին աղքատության՝ վերին և ստորին, ինչպես նաև ծայրահեղ աղքատության գծերը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար գնահատվել են՝ համապատասխանաբար, 40 867 դրամ (կամ 85.1 ԱՄՆ դոլար), 33 418 դրամ (կամ 69.5 ԱՄՆ դոլար) և 23 313 դրամ (կամ 48.5 ԱՄՆ դոլար):

ՏՏԿԱՀ-ով փաստագրված (եմպիրիկ եղանակով ստացված) աղքատության գիծը, որը ստացվել է ՏՏԿԱՀ-ի տվյալների հիման վրա, չպետք է շփոթել աղքատության նորմատիվային գծի հետ, որը մշակվում է ոչ թե վիճակագրական, այլ վարչարարական նպատակներով՝ ըստ առողջապահական և սոցիալական նվազագույն նորմատիվային պահանջների:

Պետք է նշել, որ Աղյուսակ 3.3-ում բերված աղքատության գծերի արժեքները հաշվարկված են ՏՏԿԱՀ 2016թ.-ի տվյալներից ստացված միջին տարեկան հանրապետական գներով, որոնք ներառում են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի գները: Մինևույն ժամանակ Ներդիր 3.1-ում բերված նույն նվազագույն սպառողական զամբյուղը հաշվարկված է ՀՀ ԱՎԾ-ի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից տրամադրված գներով, որոնք ներկայացնում են 2016թ.-ի միայն քաղաքային բնակավայրերում արձանագրված ընթացիկ գները: Հիմնականում այս հանգամանքով է բացատրվում աղքատության գծի երկու տարբեր դրամական արժեքների առկայությունը:

Ներդիր 3.1.					
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2016թ.-ին, միջին ընթացիկ քաղաքային գներով, մեկ շնչի հաշվով, ամսական կտրվածքով					
<i>(հաշվարկված Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ 2009թ.-ի ՀՀ ԱՎԾ կողմից, 7 872 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, փաստացի սպառման հիման վրա)</i>					
	Պարենամթերքի անվանումը	Օրական փաստացի սպառումը 1 շնչի հաշվով, գրամ	Օրական էներգետիկական 1 շնչի հաշվով, կկալ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
1.	Հացամթերք	461.1	1 355.0	7 705.7	8 581.0
2.	Մսամթերք	48.3	87.6	2 738.2	3 049.2
3.	Զկնամթերք	2.5	2.4	139.5	155.4
4.	Կաթնամթերք		144.3	3 160.0	3 518.9

5.	Ձու	18.6	27.2	707.0	787.3
6.	Յուղ և ճարպ	30.5	229.9	1 658.7	1 847.1
7.	Միրգ	113.9	47.7	1 289.2	1 435.6
8.	Բանջարեղեն	203.7	76.0	4 409.1	4 909.9
9.	Կարտոֆիլ	145.6	109.2	800.7	891.7
10.	Շաքար	24.4	94.4	278.3	309.9
11.	Ոչ այկոհոլային խմիչքներ	4.2	1.1	43.4	48.3
12.	Այլ սննդամթերք	35.6	57.2	1 920.3	2 138.5
	Ընդամենը		2 232.0		
Պարենային զանրյուղի ամսական արժեք				24 850.1	27 672.8
Նվազագույն սպառողական զանրյուղի ամսական արժեք				43 984.7	48 980.9 (1.77 գործակից)

Աղքատության աճը պայմանավորող գործոնները: 2008-2016թթ.-ին Հայաստանում աղքատության մակարդակի աճը պայմանավորող առավել կարևոր գործոնը 2009թ.-ի տնտեսության խոր անկումն էր:

Համաձայն «Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008)» միջազգային ստանդարտի Հայաստանի տնտեսությունը 2013թ.-ին աճեց նախորդ տարվա նկատմամբ 3.3%-ով, 2014թ.-ին 2013թ.-ի նկատմամբ՝ 3.6%-ով, 2015թ.-ին 2014թ.-ի նկատմամբ՝ 3.2 %-ով, իսկ 2016թ.-ին՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 0.2 %-ով:

2016թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները ցույց են տալիս, որ ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2008թ.-ի համեմատ աճել է 16.1%-ով և աճը նկատվել է սպառման բոլոր քվինտիլներում:

Աղքատությունն ըստ բնակավայրերի. 2008-2016թթ.-ին աղքատության մակարդակի աճը քաղաքային և գյուղական բնակավայրերում կազմել է համապատասխանաբար 1.3 և 2.9 տոկոսային կետ (Աղյուսակ 3.1): Մայրաքաղաք Երևանում ըստ տարածաշրջանների աղքատության մակարդակն ամենացածրն է (24.9%) և այն 1.3 անգամ ցածր է, քան Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում: 2008թ.-ի համեմատ 2016թ.-ին աղքատության աճը Երևանում կազմել է 4.8 տոկոսային կետ, իսկ Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում՝ աղքատության մակարդակը մնալով ամենաբարձրը, այնուամենայնիվ, 2.4 տոկոսային կետով զիջել է 2008թ.-ի մակարդակը: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը (62.4%) քաղաքաբնակներ են:

2008-2016թթ.-ին ծայրահեղ աղքատության մակարդակի աճը քաղաքային և գյուղական բնակավայրերում կազմում է համապատասխանաբար 0.1 և 0.2 տոկոսային կետ (Աղյուսակ 3.1): Գյուղական բնակավայրերում ըստ տարածաշրջանների ծայրահեղ աղքատության մակարդակն ամենացածրն է (1.4%), իսկ Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում այն ամենաբարձրն է (2.1%): 2008թ.-ի համեմատ 2016թ.-ին ծայրահեղ աղքատության աճը Երևանում կազմել է 0.8 տոկոսային կետ, իսկ Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում՝ ծայրահեղ աղքատության մակարդակը մնալով ամենաբարձրը, այնուամենայնիվ 0.7 տոկոսային կետով զիջել է 2008թ.-ի մակարդակը: Ծայրահեղ աղքատ բնակչության մեծամասնությունը (70.6%)՝ քաղաքաբնակներ են:

Աղքատությունը ՀՀ մարզերում և ք. Երևանում: Հայաստանը, ըստ վարչական բաժանման, ներառում է 10 մարզ և քաղաք Երևանը: Աղյուսակ 3.4-ում ներկայացված են աղքատության հիմնական ցուցանիշները 2016թ.-ին և աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2016թթ.-ին՝ ըստ մարզերի և ք.Երևանի: 2008-2016թթ.-ին ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություններն ապահովում են մարզերի և քաղաք Երևանի կտրվածքով վիճակագրական ներկայացուցչականություն: Այդուհանդերձ, աղքատության մակարդակի ցուցանիշները պետք է դիտարկվեն՝ հաշվի առնելով ստանդարտ սխալները և վստահության միջակայքը:

2016թ.-ին աղքատության մակարդակները տարբերվում են ըստ մարզերի և ք.Երևանի: Միջին հանրապետականից բարձր են ՀՀ Շիրակի, Լոռու, Կոտայքի, Տավուշի և Արմավիրի մարզերի **ցուցանիշները**: ՀՀ Շիրակի մարզում գրանցվել է հանրապետության կտրվածքով ՀՀ ամենաբարձր աղքատության մակարդակը, որտեղ աղքատության զծից ցածր է բնակչության մոտ 46%-ը:

2016թ.-ին աղքատության մակարդակի ցուցանիշները գերազանցել են 2008թ.-ի ցուցանիշներին, ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ որոշ մարզերում և քաղաք Երևանում, բացի Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերից: Այդուհանդերձ, ավելի արագ տեմպերով այդ ցուցանիշի աճ գրանցվել է Տավուշում՝ 1.5 անգամ, քաղաք Երևանում, Արմավիրում և Սյունիքում՝ 1.2 անգամ:

Նույն ժամանակահատվածում աճել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը, ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ քաղաք Երևանում և որոշ մարզերում՝ բացի Արարատի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերից: Այդուհանդերձ, ծայրահեղ աղքատության մակարդակն առավել բարձր է Շիրակի (3.7%), Լոռու (2.7%), ինչպես նաև Տավուշի մարզում և քաղաք Երևանում (1.9%):

Աղյուսակ 3.4. Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2008 և 2016թթ. {95% վստահության միջակայք ձևավոր փակագծերով}

(տոկոսներով)

	2008		2016			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
ք.Երևան	1.1 {0.3;1.9}	20.1 {17.3;22.9}	1.9 {1.0 ; 2.9}	24.9 {21.2 ; 28.5}	28.2	33.3
Արագածոտն	0.5 {-0.3;1.3}	20.3 {13.9;26.7}	0.6 {-0.2 ; 1.4}	15.7 {10.3 ; 21.2}	2	3.7
Արարատ	1.6 {0.2;3.0}	31.3 {25.5;37.1}	1.0 {-0.2 ; 2.3}	26.9 {18.9 ; 35.0}	7.8	8.6
Արմավիր	0.7 {0.1;1.3}	24.5 {19.7;29.3}	1.5 {0.0 ; 3.1}	30.0 {19.9 ; 40.0}	9.8	9.6
Գեղարքունիք	0.4 {0.2;0.6}	32 {25.8;38.2}	1.0 {-0.6 ; 2.5}	28.8 {19.0 ; 38.5}	5.3	5.5
Լոռի	2.8 {1.2;4.4}	34.2 {29.2;39.2}	2.7 {1.0 ; 4.5}	35.8 {28.8 ; 42.9}	11.5	9.5

	2008		2016			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Կոտայք	2.1	39.5	1.3	35.4	12.6	10.5
	{0.7;3.5}	{34.7;44.3}	{0.3 ; 2.2}	{27.6 ; 43.2}		
Շիրակ	4.6	42.4	3.7	45.5	12.1	7.8
	{2.0;7.2}	{37.2;47.6}	{1.1 ; 6.2}	{35.5 ; 55.4}		
Սյունիք	1.3	20.3	1.1	24.2	4.0	4.7
	{0.5;2.1}	{14.3;26.3}	{-0.4 ; 2.5}	{18.0 ; 30.5}		
Վայոց Ձոր	1.9	21.1	1.2	18.8	1.3	2.1
	{0.1;3.7}	{14.9;27.3}	{-0,2 ; 2.7}	{11.4 ; 26.5}		
Տավուշ	1.7	23.2	1.9	33.8	5.4	4.7
	{0.3;3.1}	{18.0;28.4}	{-0.0 ; 3.8}	{26.4 ; 41.2}		
Ընդամենը	1.6	27.6	1.8	29.4	100	100
	{1.2;2.0}	{26.0;29.2}	{1.3 ; 2.3}	{27.1 ; 31.7}		

Աղբյուրը. 2008 և 2016թթ. ՏՏԿԱՀ

Աղքատության մակարդակի զգայունությունն աղքատության գծի փոփոխության նկատմամբ. Ծայրահեղ աղքատության մակարդակի փոփոխությունն առավել զգայուն է աղքատության գծի փոփոխության նկատմամբ, քան ընդհանուր աղքատության մակարդակը, ինչը վկայում է այն մասին, որ բնակչության կենտրոնացումն աղքատության ծայրահեղ գծի շուրջ ավելին է, քան աղքատության գծի շուրջ: Աղյուսակ 3.5-ում ներկայացված է աղքատության մակարդակն ըստ աղքատության գծի փոփոխության: Եթե ծայրահեղ աղքատության գիծն ավելանա 5%-ով, ապա ծայրահեղ աղքատությունը կաճի 11.1%-ով, իսկ ընդհանուր աղքատությունը՝ միայն 1%-ով: Աղքատության մակարդակի փոփոխությունները վիճակագրորեն նշանակալի են (1% նշանակալիության մակարդակի դեպքում), երբ աղքատության գիծը նվազեցվում կամ բարձրացվում է 5, 10 և 20 %-ով:

Աղյուսակ 3.5. Հայաստան. Աղքատության մակարդակի փոփոխություններն ըստ աղքատության գծի փոփոխության, 2016թ.

(տոկոսներով)

Աղքատության գծի փոփոխություններ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
Անփոփոխ, 0%	1.8	29.4
+5%	2.0	29.7
-5%	1.2	20.7
+10%	2.2	30.2
-10%	0.6	14.2
+20%	3.4	33.4
-20%	0.1	8.7

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2016թ.

Աղքատությունն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների. Աղյուսակ 3.6-ում ներկայացված է Հայաստանում 2008-2016թթ.-ի աղքատության համեմատությունը՝ ըստ սպառման և եկամտի ցուցանիշների: Եկամտի ցուցանիշի հիման վրա գնահատված

աղքատության մակարդակի գնահատականները զիջում են սպառմանը՝ որպես բարեկեցության աստիճանի գնահատման հիման վրա ստացված արդյունքներ: Միևնույն ժամանակ ծայրահեղ աղքատության մակարդակն ըստ եկամտի ցուցանիշի 3.6 անգամ գերազանցում է սպառման ցուցանիշով ծայրահեղ աղքատության մակարդակին: Այդ տարբերությունը հիմնականում բացատրվում է սպառման բաշխման համեմատ եկամուտների բաշխման առավել բարձր անհավասարությամբ (տե՛ս Աղյուսակ 3.17): 2016թ.-ին մեկ չափահասին համարժեք միջին ամսական եկամուտը, 2008թ.-ի գներով, գերազանցել է սպառումը 23.6%-ով, այն դեպքում, երբ 2008թ.-ին միջին ամսական եկամուտը զիջել է սպառմանը 0.9%-ով:

Աղյուսակ 3.6. Հայաստան: Աղքատությունն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների, 2008-2016թթ.-ին

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Սպառումը մեկ չափահասին համարժեք (ամսական), դրամ, 2008թ.-ի միջին հանրապետական գներով	42 870.2	40 250.2	39 459.3	40 296.9	45 583.0	44 751.4	47 622.0	47 620.0	49 754.4
Եկամուտը, մեկ չափահասին համարժեք, (ամսական), դրամ, 2008թ.-ի միջին հանրապետական գներով	42 484.4	43 824.7	44 887.4	45 326.1	49 285.9	48 418.2	54 476.9	56 692.5	61 484.0
Եկամուտ/սպառում հարաբերությունը	0.99	1.09	1.14	1.12	1.08	1.08	1.15	1.19	1.24
Սպառման ցուցանիշով աղքատներ (տոկոսներով)									
Ծայրահեղ աղքատներ	1.6	3.6	3.0	3.7	2.8	2.7	2.3	2.0	1.8
Աղքատներ	27.6	34.1	35.8	35.0	32.4	32.0	30.0	29.8	29.4
Եկամտի ցուցանիշով աղքատներ, (տոկոսներով)									
Ծայրահեղ աղքատներ	12.1	12.2	12.1	13.2	11.5	11.5	8.8	6.5	6.4
Աղքատներ	38.1	38.2	38.4	37.1	32.8	32.7	26.9	24.4	24.2

Աղբյուրը. *SSYUZ 2008- 2016թթ.*


Նշում. Եկամուտը հաշվարկվել է որպես ընդամենը տնօրինվող եկամուտ և ներառում է դրամական եկամուտները, բնամթերային տեսքով սպառման դրամական արժեքը և խնայողություններից օգտագործված միջոցները:

Դիտարկելով աղքատության սպառման և եկամտի ցուցանիշների համընկնումը (խաչաձևումը) 2016թ.-ին, ակնհայտ է դառնում, որ անհատների մոտովորապես կեսը, որոնք եկամտի ցուցանիշով գտնվում են աղքատության գծից ցածր, սպառման ցուցանիշով բարձր են աղքատության գծից (49.6%):

Եկամտի ցուցանիշով ծայրահեղ աղքատների միայն 8.0%-ը և աղքատների 50.4%-ն է սպառման ցուցանիշով գնահատվել նույնպես ծայրահեղ աղքատ և աղքատ:

Սպառման ցուցանիշով աղքատներին դիտարկելիս, նրանց 43.3%-ն աղքատ է գնահատվել նաև եկամտի ցուցանիշով: Սպառման ցուցանիշով ծայրահեղ աղքատների 29.6%-ը եկամտի ցուցանիշով նույնպես ծայրահեղ աղքատ է:

Գծապատկեր 3.3. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների, 2008 և 2016թթ.



Աղբյուրը. *SSYUZ 2008 և 2016թթ.*

Որքան կարժենա աղքատության հաղթահարումը 2016թ.-ին. Աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 63.2 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1.2 % կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին (Աղյուսակ 3.7):

Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 1.4 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 0.03 %-ը՝ ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն:

Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականությունն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են:

Աղյուսակ 3.7. Հայաստան. Աղքատության հաղթահարման դրամական արժեքը, 2016թ.

	2016թ.	
	ծայրահեղ աղքատ	աղքատ
Աղքատների միջին սպառումը <i>(դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)</i>	21 072	34 881
Աղքատության գիծ <i>(դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)</i>	23 313	40 867
Աղքատներին պահանջվող լրացուցիչ սպառում <i>(դրամ, ամսական)</i>	2 241	5 986
Պակասորդը՝ աղքատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառում աղքատության գծի նկատմամբ, <i>(տոկոսներով)</i>	9.6	14.6
ՀՆԱ <i>(մլրդ. դրամ)</i>	5079.9	
Անհրաժեշտ բյուջե <i>(մլրդ. դրամ)</i>	1.4*	63.2*
Անհրաժեշտ բյուջեն որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ	0.03	1.2

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ և ՏՏԿԱՀ 2016թ.

Նշում. Հաշվարկվում է բազմապատկելով մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակն աղքատության մակարդակով և աղքատներին պահանջվող լրացուցիչ տարեկան (աղյուսակ 3.7-ում բերված է ամսական պահանջվող լրացուցիչ սպառումը) սպառման մեծությամբ:

3.3. Աղքատության և տնտեսության աճի/անկման փոխկապակցվածությունը

Աղքատության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է ողջ բնակչության միջին սպառման փոփոխությամբ և վերջինիս բաշխվածության անհավասարության աստիճանով, երբ որոշ տնային տնտեսություններ ավելի մեծ սպառման աճ են ունենում, քան մյուսները (տե՛ս Դատտի և Ռավալիոնի, 1992թ., կողմից մշակված մեթոդաբանությունը): Առաջին բաղադրիչը՝ սպառումը, ցույց է տալիս, թե ինչպիսին կլինեք սպառման փոփոխության ազդեցությունն աղքատության մակարդակի վրա, եթե բաշխվածության անհավասարությունը մնար անփոփոխ, իսկ երկրորդ բաղադրիչը՝ սպառման վերաբաշխումը, ցույց է տալիս, թե ինչպիսին կլինեք վերաբաշխման ազդեցությունն աղքատության վրա, եթե սպառումը մնար անփոփոխ: Ինչպես վկայում են վերլուծության արդյունքները, 2008-2016թթ.-ի ընթացքում Հայաստանում աղքատության ընդհանուր մակարդակի 1.85 տոկոսային կետով աճը պայմանավորված է ն՛ սպառման, ն՛ վերաբաշխման բաղադրիչների ազդեցությամբ: Այսպես՝ այն դեպքում, երբ առաջին բաղադրիչի՝ սպառման միջին մակարդակի աճը հանգեցրել է աղքատության մակարդակի 26.76 տոկոսային կետով անկմանը, ապա երկրորդ բաղադրիչի՝ վերաբաշխման հիմքում ընկած անհավասարության ցուցանիշի աճը հանգեցրել է աղքատության մակարդակի 28.61 տոկոսային կետով աճի: Այլ կերպ ասած, եթե Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների սպառման մակարդակն աճեր միևնույն արագությամբ, ապա 2008թ. համեմատ աղքատությունը 2016թ. կնվազեր 26.76 տոկոսային կետով: Փոխարենը, աղքատ տնային տնտեսությունների սպառման ավելի դանդաղ աճի՝ ժամանակի ընթացքում աճի տեմպերի անհավասարության հետևանքով, աղքատության մակարդակը նվազեց ընդամենը 1.85 տոկոսային կետով: Այսպիսով, երկու բաղադրիչները համատեղ առաջացրել են աղքատության մակարդակի բարձրացում (Աղյուսակ A.3.7):

**Աղյուսակ 3.8. Հայաստան. Սպառման աճի տարեկան տեմպերն ըստ բնակավայրերի,
2008 -2016թթ.**

(տոկոսներով)

Տարեկան աճի-տեմպերը	Ընդամենը	Ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական բնակավայրեր
Աճի միջին տեմպերը (սովորական աճի տեմպը)	2.4	3.1	1.9	1.9
Միջին տոկոսային աճի տեմպը	1.7	1.8	1.9	1.6
Ամենացածր քվինտիլի աճի միջին տեմպը	0.5	-0.4	1.5	0.3
Աճի միջին տեմպերը P(0) համար, ծայրահեղ աղքատության գիծ	-0.4	-1.3	0.0	-0.7
Աճի միջին տեմպերը P(0) համար, աղքատության գիծ	0.5	-0.4	1.3	0.2

Աղբյուրը. *SSYUZ 2008- 2016թթ.*

Նշում. Աճի տեմպերը վերաբերում են սպառման աճին: P(0)-ն նշանակում է աղքատության մակարդակ (Ֆոստեր, Գրիին և Տորբեկե, 1984թ.):

Տնտեսական աճը Հայաստանում կարելի է գնահատել ըստ միջին սպառման աճի բաշխվածության տարբեր բաղադրիչների (Ռավալիոն և Չեն 2002թ.): Տնտեսական աճը Հայաստանում 2016թ.-ին, ինչպես և նախորդ տարում, չի եղել աղքատամետ: Աղյուսակ 3.8-ը ցույց է տալիս, որ ողջ բնակչության սպառման տարեկան աճը գերազանցում է աղքատ բնակչության սպառման աճը (2.4% և 0.5%, համապատասխանաբար):


Եթե աղքատ բնակչության սպառման աճը եղել է դրական, ապա ծայրահեղ աղքատների սպառումը նվազել է (համապատասխանաբար՝ տարեկան 0.5% և -0.4%): Արդյունքում, 2016թ.-ին 2008թ.-ի նկատմամբ աղքատության մակարդակն աճել է 6.5%-ով, այն դեպքում, երբ միայն ծայրահեղ աղքատության մակարդակն աճել է 12.5 %-ով:

Տարածաշրջանային կտրվածքով դիտարկելիս (Աղյուսակ 3.8), երևում է, որ այն դեպքում, երբ աղքատ բնակչության տարեկան սպառումը 2008-2016թթ. աճել է 0.5%-ով, ք. Երևանում աղքատների սպառումը աճել է 0.4%-ով, իսկ Երևանից դուրս՝ այլ քաղաքներում այն աճել է ավելի բարձր տեմպերով, քան ընդհանուր աղքատների սպառումը (համապատասխանաբար՝ 1.3 %՝ տարեկան 0.5%-ի դիմաց): Գյուղական բնակավայրերում աղքատների սպառումը 2008-2016թթ.-ին աճել է ամենից դանդաղ՝ 0.2%-ով:

Ինչպես ներկայացված է ստորև, բերված աճի կորերի միջոցով՝ ազգային մակարդակով, 2008-2016թթ.-ին սպառման աճ նկատվել է բոլոր դեցիլներում, սակայն ամենաաղքատ առաջինից երրորդ դեցիլների բնակչության մոտ աճն աննշան էր (0.6- 6.3%՝ ութ տարվա ընթացքում): Նշված ժամանակահատվածում երկնիշ աճ է նկատվել մնացած բոլոր դեցիլային խմբերում, իսկ ամենաբարձր տեմպը գրանցվել է տասներորդ դեցիլի բնակչության մոտ (32.5%):


Ճգնաժամից ամենից շատ տուժել է բնակչության ամենաաղքատ առաջին դեցիլային խումբը ք.Երևանում (1.1% անկում), իսկ գյուղական բնակավայրերում նկատվել է աննշան աճ (0.3%): Միաժամանակ, ամենահարուստ 10-րդ դեցիլային խումբը ճգնաժամից ամենաշատն է շահել ք. Երևանում (42% աճ): Ինչպես Երևանից դուրս՝ այլ քաղաքներում, այնպես էլ գյուղերում, ամենահարուստ 10-րդ դեցիլային խմբի աճը կազմել է 21%, այսինքն կրկնակի ցածր ք. Երևանից (Գծապատկերներ 3.4-3.7):

Գծապատկեր 3.4. Հայաստան. Սպառման աճի կորը, 2008-2016թթ.




Աղբյուրը. *SSYUL* 2008- 2016թթ.

Գծապատկեր 3.5. Հայաստան. Սպառման աճի կորը ք. Երևանում, 2008-2016թթ.




Աղբյուրը. *SSYUL* 2008- 2016թթ.

Գծապատկեր 3.6. Հայաստան. Սպառման աճի կորն այլ քաղաքային բնակավայրերում, 2008-2016թթ.



Աղբյուրը. SSԿԱՀ 2008- 2016թթ.

Գծապատկեր 3.7. Հայաստան. Սպառման աճի կորը գյուղական բնակավայրերում, 2008-2016թթ.



Աղբյուրը. SSԿԱՀ 2008- 2016թթ.

3.4. Աղքատության կառուցվածքային պատկերը և դրա փոփոխությունը 2008-2016թթ.-ին

2008-2016թթ.-ին աղքատության կառուցվածքային պատկերը հետևյալն է.

(ա) 2016թ.-ին աղքատության մակարդակն ըստ սեռի տարբերվում է, սակայն 2008թ.-ին այն նշանակալի չէ (աղքատության մակարդակի տարբերությունը նկատվել է ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, տե՛ս Աղյուսակ 3.13):

(բ) 15-17 տարեկան երեխաների շրջանում, աղքատության մակարդակն ավելի բարձր է այլ տարիքային խմբերի համեմատ: 55-59 տարիքային խմբում 2016թ.-ին աղքատության մակարդակն ամենացածրն է (Աղյուսակ 3.9):

Աղյուսակ 3.9. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2008 և 2016թթ.-ին

(տոկոսներով)

Սեռը և տարիքային խմբերը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Սեռը						
Կանայք	1.7	27.3	2.0	30.2	56.6	55.1
Տղամարդիկ	1.6	27.8	1.6	28.5	43.4	44.9
Տարիքային խմբեր						
Երեխաներ 0-5	1.9	32.0	1.7	33.7	9.3	8.1
6-9 տարեկան	1.8	30.3	1.5	34.6	6.4	5.4
10-14	1.5	29.7	2.2	32.8	7.4	6.6
15-17	2.3	32.4	3.1	37.2	4.4	3.5
18-19	0.7	26.1	2.4	36.6	2.2	1.8
20-24	1.3	26.0	1.6	29.9	6.6	6.5
25-29	2.1	27.0	1.2	27.3	7.3	7.9
30-34	1.1	25.7	1.4	28.1	7.0	7.4
35-39	1.9	27.6	1.6	30.0	6.8	6.6
40-44	1.9	29.3	2.2	30.2	5.7	5.5
45-49	1.9	25.7	1.9	26.0	4.9	5.5
50-54	1.2	22.2	1.9	26.1	6.2	7.0
55-59	0.7	21.7	1.8	24.7	6.6	7.9
60-64	1.3	24.8	1.7	25.0	5.4	6.3
65+	2.0	29.5	1.9	29.2	13.8	14.0
Ընդամենը	1.6	27.6	1.8	29.4	100.0	100.0

Աղբյուրը. SSYULZ 2008 և 2016թթ.

(գ) Բազմանդամ և երեխաներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է: Աղքատության հարաբերական ռիսկն աճում է տնային տնտեսության չափին զուգահեռ (Աղյուսակ 3.10): Բազմանդամ ընտանիքներում կախվածության գործակիցը հանդիսանում է աղքատությունը բացատրող կարևորագույն գործոն: Բազմանդամ

տնային տնտեսություններն ունեն ավելի շատ երեխաներ, ուստի և փոքր տնային տնտեսությունների համեմատ՝ եկամուտ ստացողների ավելի ցածր մասնաբաժին, որն էլ հանգեցնում է նրանց սպառման ցածր մակարդակի:

Աղյուսակ 3.10. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսության չափի, 2008 և 2016թթ.-ին

(տոկոսներով)

Տնային տնտեսության չափը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Տնային տնտեսության անդամների թվաքանակը						
1	0.9	17.2	1.1	13.3	2.1	4.6
2	0.8	19.0	1.0	17.3	7.0	11.9
3	1.0	18.8	1.2	21.6	10.9	14.8
4	0.9	23.6	1.7	25.7	19.1	21.9
5	1.9	30.3	1.9	34.0	21.2	18.3
6	2.8	34.7	1.7	39.5	21.6	16.2
7 և ավելի	2.4	38.2	3.8	43.3	18.1	12.3
Ընդամենը	1.6	27.6	1.8	29.4	100	100

Աղբյուրը. *SSY ԱՀ 2008 և 2016թթ.*

(դ) Հայաստանում մինչև 6 տարեկան երեք և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսություններն (ըստ բնակչության) ունեն աղքատության 1.7 անգամ ավելի բարձր ռիսկ (50.1%)՝ հանրապետական միջին մակարդակի համեմատ (29.4%), ինչպես նաև ավելի բարձր ռիսկ այն տնային տնտեսությունների համեմատ, որտեղ առկա են թվով ավելի քիչ երեխաներ, օրինակ՝ 1 երեխա կամ երկու երեխա ունեցող տնային տնտեսությունների համեմատ՝ ավելի քան 1.5 անգամ (Աղյուսակ 3.11): Այնուամենայնիվ, այդ արդյունքները պետք է դիտարկվեն որոշակի զգուշությամբ, քանզի դրանք հիմնականում բխում են համարժեքության սանդղակի և մասշտաբի տնտեսման ենթադրություններից (Լանժոու և Ռավալիոն, 1995թ.):

Աղյուսակ 3.11. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ առկա երեխաների (մինչև 6 տարեկան) և տարեցների (60-ից բարձր տարիք) թվաքանակի, 2008 և 2016թթ.-ին

(տոկոսներով)

Առկա երեխաների և տարեցների թվաքանակը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
Երեխաների թվաքանակը						
0 երեխա	1.5	25.4	1.7	26.7	61.0	67.2
1 երեխա	1.9	31.3	2.2	33.9	25.9	22.4

Առկա երեխաների և տարեցների թվաքանակը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
2 երեխա	1.6	34.4	1.2	34.7	10.3	8.8
3 երեխա և ավելի	5.3	34.8	3	50.1	2.8	1.6
Տարեցների թվաքանակը						
0 տարեց	1.3	24.7	1.1	26.3	45.8	51.3
1 տարեց	1.6	30.0	2.7	31.8	34.3	31.7
2 տարեց և ավելի	3.0	33.9	2.2	34.5	19.9	17.0
Ընդամենը	1.6	27.6	1.8	29.4	100	100

Աղբյուրը. *SSYUՀ 2008 և 2016թթ.*

(ե) Ինչպես է փոփոխվում աղքատության մակարդակը տնային տնտեսության կազմում չափահասների՝ (18 և բարձր տարիքի), երեխաների՝ (մինչև 6 տարեկան), տարեցների՝ (60 տարեկանից բարձր) առկայության դեպքում:

Հանրապետության տնային տնտեսությունների անդամների կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում 1,2, 3 կամ 4 չափահասից բաղկացած տնային տնտեսությունները (54.5%) և նրանց աղքատության ռիսկը ցածր է հանրապետական միջին մակարդակից:

Միայն տարեցներից բաղկացած տնային տնտեսության աղքատության մակարդակը 28%-ով ցածր է միջին հանրապետական մակարդակից:

Այն տնային տնտեսությունը, որը բաղկացած է երկու չափահաս անդամից և երկու մինչև 6 տարեկան երեխայից, աղքատության ռիսկը բարձր է, քան հանրապետական միջին ռիսկն է (31.5% և 29.4%, համապատասխանաբար) (Աղյուսակ 3.12):

Աղյուսակ 3.12. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության կազմի, 2008 և 2016թթ.-ին

(տոկոսներով)

Տնային տնտեսության կազմը*	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչու թյան մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
1 չափահաս՝ առանց երեխա	1.5	18.7	1.9	19.4	2.2	3.3
2 չափահաս, առանց երեխա	0.9	20.5	0.7	18.5	8.1	12.9
2 չափահաս, 2 երեխա	-	25.4	2.7	31.5	1.6	1.5
Տարեցներ առանց երեխա, առանց չափահասի	1.1	23.4	0.9	21.3	5.3	7.3
3 չափահաս	1.6	25.9	1.9	30.3	22.0	21.4
4 չափահաս	1.0	28.3	1.7	36.3	20.8	16.9
Այլ	2.4	31.9	2.3	31.5	40.0	36.7
Ընդամենը	1.6	27.6	1.8	29.4	100.0	100.0

* չափահաս՝ 18 և բարձր տարիքի, երեխա՝ մինչև 6 տարեկան, տարեց՝ 60 տարեկանից բարձր:

Աղբյուրը: *SSYUՀ 2008 և 2016թթ.*

(զ) Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակը 2016թ.-ին ավելի բարձր է տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակից (33.4%՝ 28.0%-ի դիմաց): 2016թ.-ին կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունները կազմել են աղքատների և ամբողջ բնակչության համապատասխանաբար՝ 30% և 27%-ը: Միջին հանրապետական մակարդակի համեմատ՝ մինչև 6 տարեկան երեխա ունեցող կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններն աղքատ լինելու ավելի մեծ (1.4 անգամ) ռիսկ ունեն (Աղյուսակ 3.13): Քաղաքային բնակավայրերում նշված տնային տնտեսությունների աղքատ լինելու հավանականությունն ավելի ցածր է, քան գյուղական բնակավայրերում (39.8%՝ 48.4%-ի դիմաց):

Աղյուսակ 3.13. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, 2008 և 2016 թթ.-ին


(տոկոսներով)

Գլխավորի սեռը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Տղամարդ՝ գլխավոր	1.5	26.6	1.2	28.0	70.0	73.5
Կին՝ գլխավոր, այդ թվում՝	2.0	30.4	3.4	33.4	30.0	26.5
Կին գլխավոր՝ առանց մինչև 6 տարեկան երեխայի	1.6	28.5	3.1	29.5	18.7	18.7
Կին գլխավոր՝ մինչև 6 տարեկան երեխաներով	3.0	35.5	4.1	42.6	11.3	7.8
Ընդամենը	1.6	27.6	1.8	29.4	100	100

Աղբյուրը: *SSYUՀ 2008 և 2016թթ.*

Գծապատկեր 3.8. Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, ըստ առկա բնակչության, 2008 և 2016թթ.-ին

(տոկոսներով)



Աղբյուրը: *SSYUZ 2008 և 2016թթ.*

(ե) Բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար աղքատ լինելու հավանականությունն ավելի փոքր է (Աղյուսակ 3.14): Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության մակարդակն ամենացածրն է՝ այն մոտ 1.7 անգամ ցածր է 16-ից բարձր տարիքի բնակչության միջին հանրապետական աղքատության մակարդակից, և համապատասխան 2.4 և 2.2 անգամ ցածր, քան տարրական և ցածր, ինչպես նաև թերի միջնակարգ կրթություն ունեցողների աղքատության մակարդակը: Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում այլ կրթության մակարդակ ունեցողների համեմատ ծայրահեղ աղքատության մակարդակն ամենացածրն է ինչպես 2016թ.-ին, այնպես էլ 2008թ.-ին: Սակայն 2016թ.-ին աղքատության մակարդակը բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում ավելի բարձր է, քան 2008թ.-ին: Միջնակարգ ընդհանուր կրթությամբ անձինք աղքատ բնակչության շրջանում կազմում են ամենամեծ խումբը (51%): 16-ից բարձր տարիքի բնակչության կազմում, այս խումբը դժվարությունների է հանդիպում աշխատանք փնտրելիս:

Աղյուսակ 3.14. Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2008 և 2016թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն)


(տոկոսներով)

Կրթության մակարդակը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ (համեմատվող բնակչություն)	%-ը համեմատվող բնակչության մեջ
Տարրական և ցածր	4.2	36.1	6.3	41.0	2.1	1.4
Թերի միջնակարգ	3.2	40.1	3.1	37.6	10.9	8.1
Միջնակարգ ընդհանուր	1.7	30.2	2.0	32.6	50.8	44.0
Միջնակարգ մասնագիտական	1.0	21.9	1.5	27.1	22.6	23.6
Բարձրագույն	0.4	14.7	0.9	16.8	13.6	22.9
Ընդամենը	1.6	26.6	1.8	28.2	100	100

Աղբյուրը՝ *SSYUZ 2008 և 2016թթ*

Գծապատկեր 3.9. Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2008 և 2016թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն)

(տոկոսներով)



Աղբյուրը: *SSYUZ 2008 և 2016թթ*

(ը) Աղքատության վրա ազդող կարևորագույն գործոններից է մասնակցությունն աշխատանքի շուկայում: Հատկապես աշխատանքի բացակայության պարագայում մեծանում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը: Դրա վկայությունն է այն, որ աշխատող անդամներ չունեցող տնային տնտեսություններում աղքատության մակարդակը 2016թ.-ին կազմել է 35.8%, որը 7.8%-ային կետով բարձր է միջին հանրապետական մակարդակից 15 -75 տարիքի բնակչության համար (Աղյուսակ 3.15): Նույն ժամանակահատվածում աշխատող անդամներ չունեցող տնային տնտեսություններում

ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 3.7%՝ միջին հանրապետական մակարդակին գերազանցելով 2.2 անգամ:

Աղյուսակ 3.15. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի, 2008 և 2016թթ. (15 -75 տարիքի բնակչություն)

(տոկոսներով)

Տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակչության մեջ
Ոչ ոք զբաղված չէ	5.7	46.6	3.7	35.8	11.7	15.0
Զբաղված է մեկ անդամ	2.8	32.5	2.2	29.8	27.6	29.4
Զբաղված են 2 անդամներ	0.7	26.0	1.4	24.7	34.1	30.2
Զբաղված են 3 և ավելի անդամներ	1.1	24.9	0.7	26.7	26.6	25.4
Ընդամենը	1.9	29.5	1.7	28.0	100	100

Աղբյուրը: *SSYUZ 2008 և 2016թթ.*

(թ) 2008-2016թթ.-ին աղքատության մակարդակը բարձրացել է ինչպես աշխատաշուկայում տնտեսապես ակտիվ բնակչության՝ զբաղվածների և գործազուրկների, այնպես էլ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության (նրանք, ովքեր չունեն աշխատանք և չեն փնտրում) շրջանում, բացի կենսաթոշակառուներից (Աղյուսակ 3.16):

Աշխատանքն ապահովում է եկամուտ, հետևաբար և աղքատության ավելի ցածր մակարդակ: Այդ են վկայում հետազոտության արդյունքները, համաձայն որի, աղքատների մեծ մասը չի ունեցել աշխատանք, մինչդեռ ոչ աղքատների զգալի մասը զբաղված է եղել որևէ տեսակի տնտեսական գործունեությամբ: Այդուհանդերձ, 2008-2016թթ.-ին աղքատության մակարդակն ավելացել է աշխատանքի շուկայի տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում ավելի արագ տեմպերով, քան տնտեսապես ոչ ակտիվ բնակչության շրջանում (10.9 %՝ 0.6%-ի համեմատ):

2008-2016թթ.-ին աշխատանքի շուկայում ակտիվ բնակչության շրջանում աղքատության մակարդակն ավելացել է վարձու աշխատողների խմբում՝ 8.7%-ով, իսկ տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունից՝ ուսանողների շրջանում՝ 1.5 անգամ: Որպես դրական միտում է 2008-2016թթ.-ին աղքատության մակարդակի նվազելը կենսաթոշակառուների շրջանում 11%-ով:

Տնտեսապես ակտիվ բնակչության (աշխատաշուկայի մասնակիցների) կազմում աղքատության ռիսկն առավել բարձր է գործազուրկների շրջանում (41.1%) (Աղյուսակ 3.16): Աղքատության մակարդակը կենսաթոշակառուների շրջանում 2008-2016թթ.-ին նվազել է 11%-ով, սակայն երևանաբնակ կենսաթոշակառուներն ունեն աղքատության ավելի ցածր ռիսկ, քան գյուղաբնակ (1.4 անգամ) և այլ քաղաքներում բնակվող կենսաթոշակառուները (1.2 անգամ): Ծայրահեղ աղքատության առավել բարձր մակարդակ գրանցվել է Երևանում և գյուղերում բնակվող կենսաթոշակառուների շրջանում (3.8% և 1.6%, համապատասխանաբար):

Աղյուսակ 3.16. Հայաստան. Աշխատուժի մասնակցությունն ու աղքատությունը, 2008 և 2016թթ
(15 -75 տարեկան բնակչություն)

(տոկոսներով)

Աշխատուժի մասնակցությունը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատ- ների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակ- չության մեջ
Ընդամենը բնակչություն						
<i>Տնտեսապես ակտիվ</i>	1.0	23.9	1.7	26.5	64.6	68.2
Զբաղվածներ	0.8	22.2	1.0	23.9	49.1	57.5
Վարձու աշխատողներ	1.0	20.7	1.0	22.5	26.5	33.0
Ինքնազբաղվածներ	0.6	23.3	1.0	25.0	15.4	17.2
Այլ զբաղվածներ	0.4	27.2	1.4	27.5	7.2	7.3
Գործազուրկներ	2.1	32.6	5.0	41.1	15.5	10.7
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	2.4	30.8	1.9	31.0	35.4	31.8
Կենսաթոշակառուներ	2.8	34.5	2.6	30.7	8.9	8.1
Ուսանողներ	1.5	22.4	2.0	32.7	7.3	6.3
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	2.7	33.1	1.5	30.6	19.2	17.4
ք. Երևան						
<i>Տնտեսապես ակտիվ</i>	0.6	17.6	1.7	22.7	59.0	63.5
Զբաղվածներ	0.5	15	1.0	18.5	36.5	48.2
Վարձու աշխատողներ	0.6	16	1.0	17.9	30.9	42.1
Ինքնազբաղվածներ	-	7.1	1.2	22.9	5.6	5.9
Այլ զբաղվածներ	-	5.4	0.0	0.0	0.0	0.2
Գործազուրկներ	1.1	25.7	3.9	35.9	22.5	15.5
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	1.7	22.3	2.4	27.6	41.0	36.3
Կենսաթոշակառուներ	2.8	27.4	3.8	27.4	12.2	10.8
Ուսանողներ	0.7	14.6	2.7	32.7	9.4	7.0
<i>Այլ տնտեսապես ոչ ակտիվ</i>	1.6	23.2	1.5	25.8	19.4	18.5
Այլ քաղաքներ						
<i>Տնտեսապես ակտիվ</i>	1.8	31.2	2.1	29.6	56.6	60.4
Զբաղվածներ	1.3	28.1	1.3	26.3	40.3	48.4
Վարձու աշխատողներ	1.3	27.1	1.3	26.8	30.4	35.8
Ինքնազբաղվածներ	1.5	30.5	1.4	24.6	8.7	11.1
Այլ զբաղվածներ	-	38.8	1.7	26.5	1.2	1.5
Գործազուրկներ	3.6	41.5	5.4	43.1	16.3	12.0
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	3.6	38.6	1.9	34.5	43.4	39.6
Կենսաթոշակառուներ	3.3	40.7	1.5	32.1	11.0	10.8
Ուսանողներ	2.7	30.3	2.0	37.0	7.7	6.6
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	4.0	40.6	2.0	35.0	24.7	22.2
Գյուղական բնակավայրեր						
<i>Տնտեսապես ակտիվ</i>	0.8	24.3	1.3	27.5	76.8	78.8
Զբաղվածներ	0.8	23.7	0.9	25.9	67.5	73.8
Վարձու աշխատողներ	1.5	20.8	0.6	24.9	19.2	21.8
Ինքնազբաղվածներ	0.5	23.6	0.9	25.5	29.7	33.0
Այլ զբաղվածներ	0.5	27.3	1.4	27.7	18.6	19.0
Գործազուրկներ	*	*	*	*	*	*

Աշխատուժի մասնակցությունը	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակչության մեջ
<i>Տնտեսապես ոչ ակտիվ</i>	1.7	32.4	1.1	31.3	23.2	21.2
Կենսաթոշակառուներ	1.8	39.0	1.6	37.1	4.3	3.3
Ուսանողներ	1.3	24.2	1.0	28.5	5.3	5.3
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	1.9	35.3	.9	30.7	13.6	12.6
Ընդամենը	1.9	29.5	1.7	28.0	100	100

Աղբյուրը. *SSYUՀ 2008 և 2016թթ.*

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից պակաս չկշռված դեպքերի վրա:

3.5. Սպառման դետերմինանտները

Այս մասում դիտարկվում են այն գործոնները, որոնք սերտորեն կապված են աղքատության և կենսամակարդակի հետ (պայմանական փոխհարաբերություններ): Այդ գործոնների բացահայտումը կարևոր քայլ է տնտեսական և սոցիալական քաղաքականության մշակման գործում՝ ուղղված տնային տնտեսությունների աղքատության հաղթահարմանն ու կանխարգելմանը: Ուսումնասիրված գործոններն են. (1) տնային տնտեսության բնութագրիչները, ներառյալ տարիքային կազմը, չափը, միգրացիայում գտնվող անդամների առկայությունը, տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը և տնային տնտեսության բնակության վայրը, ինչպես նաև (2) տնային տնտեսության գլխավորի բնութագրիչները, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, կրթությունը, զբաղվածությունը և հաշմանդամությունը: Այս գործոններն օգտագործվել են որպես բացատրող (անկախ) փոփոխականներ պարզ ռեգրեսիոն մոդելում, որտեղ մեկ չափահաս անձին համարժեք բնական լոգարիթմական սպառումը դիտարկվել է որպես կախյալ փոփոխական:

Մեկ չափահաս անձի հաշվով սպառումը զգալիորեն կախված է հետևյալ գործոններից.

Տնային տնտեսության ժողովրդագրական նկարագիրը.

- Տնային տնտեսության չափը բացասական ազդեցություն ունի տնային տնտեսության սպառման վրա, այսպիսով, և՛ 2008թ.-ին, և՛ 2016թ.-ին բազմանդամ տնային տնտեսություններն ունեն ավելի ցածր սպառում՝ ունենալով այլ հավասար բնութագրիչներ (21.3% և 24.0%, համապատասխանաբար):
- Տնային տնտեսության գլխավորի սեռը. դիտարկվող տարիներին կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների կենսամակարդակն այլ հավասար բնութագրիչներ ունենալու պայմաններում ավելի ցածր է, քան տղամարդու կողմից գլխավորվող տնային տնտեսություններում (6.0% և 3.7%, համապատասխանաբար):
- Տարիքային կազմը. 0-5 և 15-18 տարեկան երեխաների տեսակարար կշիռը բացասական ներգործություն ունի սպառման ցուցանիշի վրա և՛ 2008թ.-ին, և՛ 2016թ.-ին: Որքան բարձր է այդ տարիքի երեխաների մասնաբաժինը տնային տնտեսությունում, այնքան ցածր է տնային տնտեսության սպառումը բազային կատեգորիայի համեմատ (46-ից 60

տարեկանների մասնաբաժնի համեմատ)՝ պահպանելով տնային տնտեսության չափն անփոփոխ: Իսկ տարեցների (61 և բարձր տարեկանների) տեսակարար կշիռն ունի դրական ազդեցություն սպառման ցուցանիշի վրա:

Կրթություն.

- Սպառման ցուցանիշը բարձր է այն տնային տնտեսություններում, որոնց գլխավորն ունի բարձրագույն կրթություն: Բարձրագույն կրթությամբ գլխավոր ունեցող տնային տնտեսությունների սպառման մակարդակը 2016թ.-ին 17%-ով ավելի է այն տնային տնտեսությունների սպառման մակարդակից, որոնց գլխավորում են տարրական կամ թերի միջնակարգ կրթություն ունեցողները (համեմատվող կատեգորիա):

Միգրացիա.

- 2016թ.-ին՝ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, երկրից դուրս՝ միգրացիայում գտնվող անդամներ ունեցող տնային տնտեսությունները գրանցել են ավելի բարձր (19.6%-ով) սպառման ցուցանիշ, քան այն տնային տնտեսությունները, որոնցում միգրանտներ չեն եղել:

Մասնակցությունը աշխատանքի շուկայում.

- 2016թ.-ին տնային տնտեսության անդամների կարգավիճակն աշխատանքի շուկայում կարևոր ազդեցություն ունի տնային տնտեսության սպառման վրա: Տնային տնտեսություններում որքան բարձր է գործազուրկների համամասնությունը, այնքան ցածր է (28.6%-ով) սպառման ցուցանիշը՝ վարձու աշխատողների համամասնության համեմատ:

Տնային տնտեսության բնակության վայրը.

- Բնակության վայրը կարևոր դեր ունի Հայաստանում տնային տնտեսության կենսամակարդակը բացատրելիս: Սպառման ցուցանիշի վրա բնակության վայրի ազդեցությունը գնահատվում է միայն այն ժամանակ, երբ մոդելում ընդգրկված տնային տնտեսության բոլոր այլ բնութագրիչներն արդեն անցել են ծրագրային հսկողություն: 2016թ.-ին բոլոր այլ գործոնների հավասար պայմաններում, եթե տնային տնտեսությունը բնակվում էր ՀՀ որևէ մարզում, (բացի երկու մարզերից, այն էլ ցածր նշանակությամբ), ապա այդ գործոնը նվազեցնում էր տնային տնտեսության սպառումը ք.Երևանում բնակվող տնային տնտեսության սպառման համեմատ:

3.6. Սպառումը, եկամուտը և դրանց բաշխվածության անհավասարությունը

Դիտարկվող ժամանակահատվածում (2008-2016թթ.), ըստ սպառման ազդեցատի և ամբողջական եկամուտների ցուցանիշների, ողջ բնակչության համար անհավասարությունն աճել է: Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելի խորն է սպառման ազդեցատի ցուցանիշի համեմատ:

2016թ.-ին սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, ավելացել է՝ կազմելով 0.286՝ 2008թ.-ի 0.242-ի համեմատ: Ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունն ավելացել է՝ կազմելով 2016թ.-ին 0.375՝ 2008թ.-ի 0.339-ի համեմատ:

Աղյուսակ 3.17. Հայաստան. Սպառման ագրեգատի և եկամուտների անհավասարությունը, 2008, 2015- 2016 թթ.-ին

	Սպառում			Եկամուտ		
	2008	2015	2016	2008	2015	2016
Վարիացիայի գործակից	0.592	0.728	0.940	0.847	0.874	0.771
Ջինիի գործակից	0.242	0.279	0.286	0.339	0.374	0.375
Թեյլի միջին լոգարիթմական շեղում E(0)	0.096	0.133	0.140	0.201	0.239	0.241
Թեյլի էնտրոպիա E(1)	0.110	0.163	0.182	0.215	0.262	0.238

Աղբյուրը. *SSYUZ 2008, 2015- 2016թթ.*

Անհավասարության գնահատման այլ եղանակները՝ Թեյլի էնտրոպիայի համաթիվը և Թեյլի միջին լոգարիթմական շեղումը, արձանագրել են, որ Հայաստանում 2008-2016թթ.-ին բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի և ըստ սպառման ցուցանիշի, ավելացել է:

3.7. Հարաբերական աղքատությունը

Ինչպես ներկայացված է բաժին 3.1-ում, Հայաստանում աղքատությունը գնահատելու համար սպառման ագրեգատը համեմատվում է աղքատության բացարձակ գծի հետ: Այս մեթոդաբանությամբ աղքատության գիծը հաշվարկվում է հիմնական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ սպառման արժեքի հիման վրա, ընդ որում աղքատ են համարվում սահմանված բացարձակ շեմից ցածր գտնվող տնային տնտեսությունները:


Ի հակադրություն այս մոտեցման, հարաբերական աղքատության հաշվարկն առնչվում է սոցիալական բացառման հասկացության հետ, համաձայն որի՝ աղքատ են համարվում եկամտի մեղիանի 60 %-ից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները: Եվրոպական Միության երկրներում լայնորեն կիրառվող այս մեթոդաբանության հիմքում ընկած է այն գաղափարը, որ աղքատությունն ավելի շուտ բնութագրվում է ոչ թե հիմնական կարիքները բավարարելու հնարավորությամբ, այլ որոշ խմբերի՝ բնակչության ընդհանուր կենսամակարդակին զիջելու հավանականությամբ: Աղքատության հարաբերական գիծը հաշվարկվում է տնային տնտեսությունների տարեկան մեղիանի եկամտի որոշակի տոկոսային մասի տեսքով: Եվրոպական Միության երկրները հարաբերական աղքատության գիծը հաշվարկելիս սովորաբար կիրառում են եկամտի մեղիանի 60% շեմը՝ այն անվանելով «աղքատության մեջ հայտնվելու ռիսկի շեմ»: 2016 թվականին Հայաստանում հարաբերական աղքատության գիծը կազմել է 39 641 դրամ կամ բացարձակ աղքատության վերին գծի 97%-ը:

Հարաբերական աղքատությունը և բացարձակ աղքատությունը տարբեր հասկացություններ են: Հարաբերական աղքատության մակարդակն արտացոլում է բնակչության մեջ առկա անհավասարությունը՝ շեշտը դնելով աղքատ և սոցիալապես խոցելի բնակչության վրա: Ընդհանուր առմամբ, հարաբերական աղքատության աճը սովորաբար բնութագրական է այնպիսի իրավիճակի համար, երբ բնակչության աղքատ խմբերի եկամուտների աճի տեմպը զիջում է միջին խմբերի եկամուտների աճի տեմպին: Հարաբերական աղքատություն հասկացությունը հաճախ սուր քննադատության է ենթարկվում, քանի որ հարաբերական աղքատության ցուցանիշը նվազում է նաև այն դեպքերում, երբ տեղի է ունենում ամբողջ բնակչության բացարձակ կենսամակարդակի անկում, և միջին խավերի եկամուտները նվազում են ավելի արագ տեմպով, քան աղքատների եկամուտները (ինչը Եվրոպական Միության շատ երկրներում տեղի ունեցավ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով):

Գծապատկեր 3.10-ում ներկայացված են Հայաստանում հարաբերական աղքատության մակարդակի միտումները (երկնագույն սյունյակներ) և աղքատության մակարդակի հաշվարկի համար կիրառվող տնային տնտեսությունների համահավասարեցված մեդիան եկամտի ցուցանիշը (կարմիր գիծ): 2010-2011թթ. ժամանակահատվածում արձանագրված՝ հարաբերական աղքատության 19.2%-ից 21.2% աճը ցույց է տալիս, որ 2011 թվականին տնային տնտեսությունների եկամուտները նախորդ տարվա համեմատ ավելի անհավասար էին բաշխված, այսինքն՝ ավելի մեծ թվով մարդիկ ապրում էին համահավասարեցված մեդիան եկամտի 60%-ից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններում: 2011-2016թթ. ժամանակահատվածում համահավասարեցված մեդիան եկամուտը 44 606 ՀՀ դրամից աճել է մինչև 66 068 ՀՀ դրամ, իսկ հարաբերականորեն աղքատ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը 21.2 տոկոսից աճել է մինչև 21.8%:

2015-2016թթ.-ին արձանագրված հարաբերական աղքատության աճը (18.0%-ից 21.8%) ցույց է տալիս, որ 2016 թվականին տնային տնտեսությունների եկամուտները նախորդ տարվա համեմատ ավելի անհավասար էին բաշխված, այսինքն՝ ավելի մեծ թվով մարդիկ ապրում էին մեդիան եկամտի 60%-ից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններում:

Գծապատկեր 3.10. Մեդիան եկամտի 60 տոկոսով հաշվարկված հարաբերական աղքատությունը և համահավասարեցված մեդիան եկամուտը (ՀՀ դրամ, անվանական)



Աղբյուրը. *SSYULZ 2008- 2016թթ.*

3.8 Աղքատության մակարդակը տարածաշրջանի երկրներում

Միջազգային աղքատության գծի գլոբալ թարմացում

Աղքատության և համընդհանուր բարգավաճման հիմնական ցուցանիշները հաշվարկելու մանդատի համաձայն, Համաշխարհային բանկը կատարում է աղքատության մակարդակի միջազգայնորեն (ըստ երկրների և տարիների) համադրելի ցուցանիշների հաշվարկներ:

Աղքատության մակարդակի գնահատման միջազգային հաշվարկների հիմքում դրված սկզբունքն է հաշվել աշխարհում բնակվող աղքատ մարդկանց թվաքանակը որոշ բացարձակ ստանդարտների սահմաններում՝ Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի և զարգացման այլ գործընկերների կողմից առաջադրված գլոբալ նպատակների իրականացման ուղղությամբ առաջընթացը չափելու նպատակով: Թեև ազգային մակարդակում աղքատության մակարդակի գնահատումները, որոնք հաշվի են առնում սպառման տեղական մոդելները, ավելի շատ են համապատասխան կոնկրետ երկրին առնչվող վերլուծության և առավել աղքատ խավին ուղղված քաղաքական երկխոսության կամ նպատակային ծրագրերի մշակման համար,

աղքատության միջազգային գնահատումներն իրենց հերթին թույլ են տալիս համեմատություններ անցկացնել աղքատության չափման տարբեր ազգային մեթոդներ կիրառող երկրների միջև:

Աղքատության մակարդակների միջազգային հաշվարկները հիմնված են աղքատության միջազգային գծի վրա և օգտակար են միջազգային համեմատությունների և երկրների խաչաձև գնահատման նպատակների համար: Տարբեր երկրների գնողունակության համարժեքության ցուցանիշների, ինչպես նաև աղքատության ազգային գծերի և բարեկեցության ազդեցատի հաշվարկների համար կիրառվող մեթոդաբանական մոտեցումների տարբերությունները դժվարացնում են աղքատության ազգային մակարդակների կիրառումը միջազգային համադրությունների համար, ինչն էլ հիմնավորում է աղքատության միջազգային գծի անհրաժեշտությունը: Այս գիծը լրացնում է ազգային աղքատության գծերը և կարող է օգնել համեմատել որոշակի երկրում տիրող իրավիճակը կամ վերջինիս հարաբերական ցուցանիշները, երբ խոսքը վերաբերվում է աղքատության կրճատմանն ուղղված ջանքերին: Այնուամենայնիվ, ազգային աղքատության գծերը պետք է լինեն գերադասելի գործիք՝ երկրում երկխոսություն վարելու նպատակների համար, քանի որ դրանք լավագույնս հաշվի են առնում տվյալ երկրի համատեքստը:

Վերջերս Համաշխարհային բանկը թարմացրել է 2005 թ-ի միջազգային աղքատության գծի հաշվարկման մեթոդաբանությունը՝ փոխարինելով 2005թ.-ի գնողունակության համարժեքության ցուցանիշները 2011թ.-ի գնողունակության համարժեքության ցուցանիշներով (ԳՀՑ): Աղքատության միջազգային մակարդակների հաշվարկը նախատեսում է հետևյալ երկու քայլերը՝ թարմացնել աղքատության միջազգային գիծը և կառուցել միջազգային համադրելի բարեկեցության ազդեցատները: Այդ նպատակով թարմացման համար կիրառվում են միջազգային համադրումների ծրագրի (ՄՀԾ) ամենավերջին արդյունքները, ինչը հեշտացնում է 2011թ.-ի գնողունակության համարժեքության ցուցանիշների հաշվարկը: 2005 թվականին միջազգային աղքատության գիծ է սահմանվել օրական մեկ շնչի հաշվով 1.25 ԱՄՆ դոլարի գնողունակությանը համարժեք աղքատության գիծը՝ օգտագործելով 2005թ.-ին աշխարհի 15 առավել աղքատ երկրների աղքատության ազգային գծերի միջին ցուցանիշը: 2011թ.-ի գներով, այդ գիծը կազմում է օրական 1.90 ԱՄՆ դոլար: Միջազգայնորեն համադրելի բարեկեցության ազդեցատներ կառուցելու համար Համաշխարհային բանկը ներդաշնակեցնում է տեղական տնային տնտեսությունների հետազոտությունների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, առավելագույնի հասցնելով երկրների համադրելիությունը ընդհանուր բարեկեցության ազդեցատը կառուցելու համար: Բարեկեցության ազդեցատները նույնպես ճշգրտվում են, կիրառելով յուրաքանչյուր երկրի համար ստացած գնողունակության նոր գործակիցը, որպեսզի դրանք արտահայտվեն նույն գնողունակության համարժեքության ցուցանիշով:

Եկամտի դասով պայմանավորված աղքատության գծեր

Միջազգային աղքատության գծից բացի, Համաշխարհային բանկը օգտագործում է եկամտի դասով պայմանավորված աղքատության գծեր, որոնք հեշտացնում են զարգացման նմանատիպ փուլերում գտնվող երկրների համեմատությունը¹ Եկամտի դասից կախված աղքատության գծերը սահմանվում են ցածր միջին եկամտով և բարձր միջին եկամտով երկրների համար և հիմնված են յուրաքանչյուր խմբի երկրների աղքատության ազգային գծերի վրա:


Որպես այդպիսին, դրանք ապահովում են աղքատության մակարդակի գնահատման առավել նպատակահարմար շեմ եկամտի դասով դասակարգված երկրների համար: Գծերը սահմանվում են 2011թ.-ի գներով օրական 3.2 ԱՄՆ դոլարի գնողունակությանը համարժեք (ցածր միջին եկամտով երկրներում) և 5.5 ԱՄՆ դոլարի գնողունակությանը համարժեք (բարձր միջին եկամտով երկրներում)² գծերով, իսկ օգտագործվող բարեկեցության ազդեցատը այն նույն ներդաշնակեցված ազդեցատն է, որն օգտագործվում է միջազգային աղքատության գծի հաշվարկման համար: Համաշխարհային բանկը աղքատության հաշվարկները կներկայացնի ըստ եկամտի դասի սահմանված գծերի և կդադարեցնի ներկայացնել աղքատության մակարդակները տարածաշրջանային աղքատության գծերի հիման վրա, որոնք օգտագործվում էին անցյալում տարածաշրջանի երկրներում աղքատության մակարդակներն ու միտումները գնահատելու համար: Եկամտի վրա հիմնված աղքատության նոր գծերը և նախկինում օգտագործվող տարածաշրջանային աղքատության գծերը սահմանվում են տարբեր հսկիչ խմբերի օգտագործմամբ և, հետևաբար, չեն տրամադրում աղքատության համադրելի գնահատականներ:

Համաշխարհային բանկը կատարում է միջազգայնորեն համադրելի երկրների աղքատության մակարդակի հաշվարկներ, օգտագործելով միջազգային և եկամտի դասով պայմանավորված աղքատության գծեր: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների համար Համաշխարհային բանկն օգտագործում է միջազգային աղքատության գիծը և 2011թ.-ի գներով օրական 3.2 ԱՄՆ դոլարի և 5.5 ԱՄՆ դոլարի գնողունակությանը համարժեք աղքատության գծերը: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 3.11:

¹ 2005թ.-ի ԳՀՑ-ից 2011թ.-ի ԳՀՑ-ին անցնելու հետ միասին Համաշխարհային բանկի վերանայել է նաև տարածաշրջանի աղքատության գծերը: *Sh u Jolliffe, D. & Prydz, E.B. J Econ Inequal (2016) 14: 185. doi:10.1007/s10888-016-9327-5.*

² *Աղքատության երկու փոխլրացնող գծերը ներկայացված են «Աթկինսոնի զեկուլցի» առաջարկությունների հիման վրա:*

Գծապատկեր 3.11. Միջազգայնորեն համադրելի աղքատության մակարդակներն ըստ ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության ցուցանիշի, 2002 – 2015թթ.



Նշում. Օրական մեկ շնչի հաշվով 1.90, 3.20 կամ 5.50 ԱՄՆ դոլարի գնողունակությանը համարժեք աղքատության գծից ներքև բնակչությունը դա այն բնակչության տոկոսն է, որն ապրում է 2011 թվականի միջազգային գներով 1.90, 3.20 կամ 5.50 ԱՄՆ դոլարից պակաս գումարով:

Աղբյուրը. Համաշխարհային բանկի հաշվարկները՝ հիմնված Եվրոպայի և Գենտրոնական Ասիայի աղքատության մոնիթորինգի տվյալների շտեմարանի վրա:


Աղքատության գնահատումը Հայաստանում

Աղքատության գնահատման անցումը ԳՀՑ 2005-ից ԳՀՑ 2011-ի պահպանում է վերջին տարիներին Հայաստանում նկատվող միտումները (Գծապատկեր 3.12): Միջազգային համադրումների ծրագրի նոր ճշգրտումները կիրառելու և աղքատությունը միջազգային աղքատության գծի հիման վրա գնահատելու արդյունքում (1.90 ԱՄՆ դոլար/օրական, 2011թ.-ի ԱՀՑ գներով) Հայաստանի դեպքում ստացվում են աղքատության նույն հաշվարկները, ինչպես և 2005թ.-ի ԳՀՑ-ի գնահատման ժամանակ: 2015թ.-ին աղքատության մակարդակը գնահատվել է 1.9 տոկոս: Ավելին, 2001 թվականից ի վեր դիտարկված միտումը համահունչ է 2005թ.-ի ԳՀՑ-ի և 2011թ.-ի ԳՀՑ-ի շարքերին:

Գծապատկեր 3.13-ը ցույց է տալիս Հայաստանի աղքատության մակարդակները, որոնք չափվել են ցածր միջին եկամտի և բարձր միջին եկամտի աղքատության գծերի նկատմամբ և 2011թ.-ի գներով համարժեք են օրական 3.2 ԱՄՆ դոլարի և 5.5 ԱՄՆ դոլարի գնողունակությանը: 2015 թ.-ին բնակչության 13.5 տոկոսն ապրում էր ցածր միջին եկամտի (օրական 3.2 ԱՄՆ դոլար) աղքատության գծից պակաս գումարով, որը համարժեք էր ամսական 20 618 դրամին (մեկ շնչի

հաշվով): Վան դեն Բումը և ուրիշները (2015)¹ նշում են, որ ըստ մեկ շնչի (պարենային) աղքատության գծերը միջինում կազմում են այդ գծի չափահասին համարժեք տարբերակի արժեքի յոթ տասներորդ մասը: Օգտագործելով փոխարկման այս գործակիցը և մեկ չափահասին համարժեք սանդղակը, այս արժեքը կկազմի ամսական մոտ 29 454 դրամ, ինչը շատ ավելի ցածր է, քան 2015թ.-ի 41 698 դրամ կազմող ազգային աղքատության գիծը:


Գծապատկեր 3.12. Աղքատության միտումները Հայաստանում՝ միջազգային աղքատության գծի և նախորդ՝ 2005 թ-ի գներով 1.25 ԱՄՆ դոլարի գնողունակությանը համարժեք աղքատության գծի նկատմամբ



Աղբյուրը. Համաշխարհային բանկի *PovCalNet* ցանցը: Նշում՝ Պիտակները վերաբերում են միջազգային աղքատության գծին (ԳՀՑ 2011)

¹ Վան դեն Բում, Բ. Հալսեմա, Ա. Մոլինի, Վ.: Գուցե՞ մենք շփոթում ենք աղքատությունը նախասիրությունների հետ: Քաղաքական հետազոտությունների աշխատանքային թերթերի շարք, No. 7247, Վաշինգտոն Դի.Սի. Համաշխարհային բանկ (2015) և Ջեյմս, Վ.Պ.Թ., Սքոֆիլդ, Ե.Ս. Մարդու ենթագետիկ պահանջները: Ձեռնարկ պլանավորողների և դիետոլոգների համար: Օքսֆորդի բժշկական հրատարակումներ, Օքսֆորդ (1990)

Գծապատկեր 3.13. Աղքատության միտումները Հայաստանում, միջին եկամտի աղքատության գների և նախորդ 2005թ.-ի ԳՀՑ-ով աղքատության գծերի նկատմամբ.



Աղբյուրը. Համաշխարհային բանկի PovCalNet ցանցը: Նշում՝ Պիտակները վերաբերում են միջազգային աղքատության գծին (ԳՀՑ 2011)

3.9. Բազմաչափ աղքատությունը Հայաստանում

Աղքատությունը ներկայացվում է բարեկեցության զրկվածության, առանցքային կարողությունների բացակայության և հիմնական կարիքների բավարարման համար անհրաժեշտ «տնտեսական միջոցների սակավության» տեսանկյունից: Բազմաչափ աղքատության ցուցանիշը գնահատում է աղքատության բազմակողմությունը, խորությունն ու տևականությունը և տալիս դրամային (ըստ սպառման ցուցանիշի) աղքատության վերլուծությունը լրացնող կարևոր տեղեկություններ:

Հայաստանի բազմաչափ աղքատության ազգային չափումը սկսվել է 2016 թ. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից և 2017 թվականին ուղեկցվում է աշխատանքային փաստաթղթով և առցանց ինտերակտիվ վահանակով (Մարտիրոսովա և ուրիշներ. 2017)¹

Դրամային աղքատությունն ինքնին բազմաչափ է, սակայն բարեկեցության բոլոր տեսանկյունները չի նկարագրում: Ըստ սահմանման, շինարարությունը, պատշաճ առողջապահությունը և համարժեք կրթությունը աղքատության չափումներ են, որոնք դրամային աղքատության ցուցանանիշով լիարժեքորեն չեն գնահատվում: Տնային տնտեսության ծախսերը կարող են այս երկու չափումների մասին մասնակի պատկերացում տալ, սակայն հանրային

¹ Առցանց վահանակի կարճ URL՝ <https://goo.gl/fyhKfJ>

ծառայությունների արժեքի գնահատումը դժվար խնդիր է: Բացի այդ, առողջապահությունը և կրթությունը հավելյալ նշանակություն ունեն և կարող են չարտացոլվել սպառված ապրանքների արժեքում: Նույն կերպ, աշխատանքով ապահովված լինելը յուրահատուկ նշանակություն ունի, որն ավելին է, քան աշխատավարձի տեսքով վաստակած գումարը. այն որոշակի արդյունքների հասած լինելու, հանրությանը և հասարակությանը պատկանելու զգացում է տալիս: Պատշաճ և մատչելի բնակարան ունենալը, այն ջեռուցմամբ ապահովելը կարևոր է ոչ միայն կենսամակարդակի, այլև մարդու ինքնագնահատականի տեսանկյունից: Քաղաքականության առումով, զրկանքները՝ որպես կարողությունների բացեր, ժամանակի ընթացքում հաճախ տևական բնույթ են կրում, ուստի կարող են բացասաբար անդրադառնալ տնային տնտեսության՝ ապագայում աղքատությունից և խոցելիությունից խուսափելու հնարավորության վրա: Ըստ այդմ, բազմաչափ աղքատությունը բնութագրող զրկանքների ուսումնասիրությունը դրամային աղքատության վերլուծությունը լրացնում է ոչ դրամային արժեք կրող տեղեկատվությամբ:

Ցանկացած երկրում բազմաչափ աղքատությունը գնահատելու համար հաշվի է առնվում տվյալ երկրի համատեքստը՝ աղքատության առանձին բնութագրերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ մի շարք քննարկումների արդյունքում: Թեև այս մոտեցումը սահմանափակում է աղքատության գնահատականի միջազգային համադրելիությունը, դրա ավելացված արժեքը հենց իրենց՝ Հայաստանի բնակիչների կողմից ներկայացված զրկանքների վերաբերյալ: Օրինակ, Հայաստանում գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման արդյունքում շատ տնային տնտեսություններ ստիպված էին ավելի մեծ գումարներ հատկացնել ջեռուցման համար: Միևնույն ժամանակ, էապես աճել է այն տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնք այժմ տունը ջեռուցելու համար փայտ կամ ածուխ են օգտագործում: Աղքատության մակարդակը նշված հանգամանքներով ձևավորվելու պարագայում «առողջ ջեռուցման» հնարավորությունից զրկված լինելը բազմաչափ աղքատության չափումներից մեկն է: Այս զրկանքը ոչ միայն ի ցույց է դնում պատշաճ բնակարանային պայմանների կարևորությունը, այլև ընդգծում է առողջապահության և շրջակա միջավայրի հետ կապված բացասական ազդեցությունների մեղմացման ռազմավարությունների կարևորությունը:

Բազմաչափ աղքատությունը Հայաստանում ուսումնասիրելու համար ընտրվել են աղքատությունը բնութագրող զրկանքներ, որոնց քննարկումը կարող է նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունների մշակմանը:

Բազմաչափ աղքատության գնահատման համար դիտարկվել են հետևյալ հինգ չափումները՝ հիմնական կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանք և առողջապահություն: Գնահատումը հիմնվում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքում հավաքագրված տվյալների վրա, ինչի շնորհիվ վերլուծաբանը հնարավորություն է ստանում իրականացնել համապետական մակարդակով ներկայացուցչական ժամանակային վերլուծություն, որը կարող է փոխկապակցվել երկրում դրամային աղքատության հետ:

Աղյուսակ 3.18. Բազմաչափ աղքատության գնահատման համար ընտրված չափումները և ցուցանիշները

Չափում՝ հիմնական կարիքներ	<i>Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե...</i>
<i>Ծայրահեղ աղքատություն</i>	Անկարող է բավարարել սննդամթերքի նվազագույն պահանջները (ըստ աղքատության չափման ազգային մեթոդաբանության և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության չափանիշների)
<i>Արժանապատիվ կյանք</i>	Չունի ֆինանսական միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում սնունդ և/կամ հագուստ գնելու համար
<i>Մարդասիրական օգնություն</i>	Հիմնական կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է մարդասիրական օգնությունից
<i>Դրամական փոխանցումներից կախվածություն</i>	Հիմնական կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է դրամական փոխանցումներից կամ գտնվում է ծայրահեղ (պարենային) աղքատության մեջ
<i>Չափում՝ բնակարանային պայմաններ</i>	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե.
<i>Բնակարանային պայմաններից բավարարվածություն</i>	Չունի պատշաճ բնակարան, մասնավորապես՝ բնակարանային պայմանները գնահատվել են որպես վատ կամ շատ վատ
<i>Պատշաճ բնակարան</i>	Չունի պատշաճ բնակարան, մասնավորապես՝ բնակարանը կապիտալ վերանորոգման կարիք ունի, խոնավ է, գտնվում է հետնախորշերում կամ հին է, հատակածածկը և պատերը բարվոք վիճակում չեն
<i>Գերբնակեցվածություն</i>	Հասանելի բնակմակերերը չի գերազանցում մեկ չափահաս անձի հաշվով 20 քառակուսի մետրը
<i>Առողջ ջեռուցում</i>	Որպես ջեռուցման առաջնային աղբյուր օգտագործում է փայտ, ածուխ կամ այլ միջոցներ
<i>Կենտրոնացված ջրամատակարարում</i>	Չունի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի (դրանից օգտվելու) հնարավորություն
<i>Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն</i>	Չունի կենտրոնացված ջրահեռացման կամ աղբահանության համակարգի (դրանից օգտվելու) հնարավորություն
<i>Հոսող տաք ջուր</i>	Չունի հոսող տաք ջրի համակարգի (դրանից օգտվելու) հնարավորություն
<i>Վճարովի հանրային ծառայությունների որակ</i>	Բավարարված չէ վճարովի ծառայությունների մեկ երրորդ կամ ավելի մասից (բոլոր պատասխանների համեմատ)՝ ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանության, հեռախոս, էլեկտրամատակարարում, փոստ, բանկային ծառայություններ, ոռոգում, հասարակական տրանսպորտ
<i>Տրանսպորտի հասանելիություն</i>	Չունի տրանսպորտից օգտվելու հնարավորություն՝ տրանսպորտային համակարգը և (շուրջամյա) ճանապարհային ցանցը բացակայում են կամ վատ վիճակում են
<i>Չափում՝ կրթություն</i>	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե.
<i>Միջնակարգ կրթության բացակայություն</i>	Ներկայի հետ կապված՝ 15-ից մինչև 75 տարեկան բոլոր անդամներն ունեն միջնակարգ (արհեստագործական կամ մասնագիտական) կրթամակարդակից ցածր կրթություն
<i>Դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածություն</i>	Ապագայի հետ կապված՝ պարտադիր ուսման 6-ից մինչև 17 տարեկան տարիքի առնվազն մեկ երեխա դպրոց չի հաճախում

<i>Կրթական ծառայությունների հասանելիություն</i>	Չունի հարևանությամբ գործող մանկապարտեզից, լրիվ միջնակարգ կրթության դպրոցից, առաջնային (ընդհանուր) կրթության դպրոցից օգտվելու հնարավորություն
<i>Կրթության ծառայությունների որակ</i>	Գոհ չէ կրթական ծառայություններից
<i>Չափում՝ աշխատանք</i>	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե.
<i>Աշխատանքի շուկային մասնակցություն</i>	Աշխատունակ տարիքի անդամների կեսից ավելին աշխատանքի շուկային չի մասնակցում
<i>Երկարաժամկետ գործազրկություն</i>	Առնվազն մեկ անդամը երկարաժամկետ (կառուցվածքային) գործազրկության պատճառով չի աշխատում
<i>Արժանավայել աշխատանք</i>	Չունի արժանավայել աշխատանքի հնարավորություն՝ ինքնուրույն զբաղվածի կարգավիճակով
<i>Թերզբաղվածություն</i>	Չունի աշխատանքի շուկային լիարժեք մասնակցության հնարավորություն (բոլոր անդամները թերզբաղված են, զբաղվում են սեզոնային/ պատահական աշխատանքով)
<i>Չափում՝ առողջապահություն</i>	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե.
<i>Բնականոն գործունեության դադարեցում</i>	Առնվազն մեկ անդամ հիվանդության, վնասվածքի կամ վատ առողջության պատճառով դադարեցրել է բնականոն գործունեությունը
<i>Առողջապահական ծառայությունների մատչելիություն</i>	Չունի ֆինանսական միջոցներ բուժհաստատությունների կողմից մատուցվող առողջապահական (բացառությամբ ատամնաբուժական) ծառայությունների, բժշկի կողմից նշանակված ստուգումների, ուսումնասիրությունների և պրոցեդուրաների դիմաց վճարելու համար (անվճար ծառայությունների անհասանելիության կամ դժվար հասանելիության դեպքում)
<i>Առողջապահական ծառայությունների հասանելիություն</i>	Չունի հարևանությամբ գործող բուժհաստատությունից, շտապօգնության ծառայություններից, դեղատնից օգտվելու հնարավորություն
<i>Առողջապահական ծառայությունների որակ</i>	Գոհ չէ առողջապահական ծառայություններից

Բազմաչափ աղքատության ցուցանիշն ամփոփում է մի շարք զրկանքների մասով առկա տեղեկատվությունը և նկարագրում աղքատության բազմակողմությունը, խորությունն ու տևականությունը: Այն ոչ միայն բացահայտում է որոշակի զրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը, այլև հաշվի է առնում նույն անհատին միաժամանակ բաժին ընկած զրկանքների քանակն ու փոխհամընկնումը: Ըստ սահմանման, տնային տնտեսության բոլոր անդամները որևէ չափման (լինեն դրանք հիմնական կարիքները, բնակարանային պայմանները, կրթությունը, աշխատանքը, թե առողջապահությունը) մասով համարվում են զրկված, եթե նշում են տվյալ չափման կշռված ցուցանիշների ավելի քան մեկ քառորդ մասից զրկվածության մասին: Օրինակ, տնային տնտեսության բոլոր անդամները հիմնական կարիքների մասով համարվում են զրկված, եթե տնային տնտեսությունը «չունի ֆինանսական միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում սնունդ և/կամ հագուստ գնելու համար» և միաժամանակ «հիմնական կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է մարդասիրական օգնությունից» (տե՛ս Աղյուսակ 3.18-ը): Ընդհանուր առմամբ, տնային

տնտեսության բոլոր անդամները բազմաչափ աղքատ են, եթե բոլոր կշռված ցուցանիշների ավելի քան մեկ քառորդ մասով զրկված են համարվում:

Աղյուսակ 3.19. Հայաստան. Բազմաչափ աղքատ համարվող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը, ըստ բնակավայրի

(բնակչության տոկոս)

	Ազգային մակարդակում	Գյուղական բնակավայրեր	Այլ քաղաքներ	Երևան
2010	41.2	52.8	37.2	32.6
2011	33.9	43.3	30.4	27.3
2012	31.3	38.3	30.1	25.1
2013	30.5	37.2	27.6	25.8
2014	31.9	35.2	31.6	28.5
2015	29.1	32.7	25.9	28.0
2016	27.8	30.3	24.7	28.0


Աղբյուր. SSԿԱՀ 2010-2016 թթ-ի հիման վրա հեղինակի հաշվարկները

Աղյուսակ 3.19-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ճգնաժամային 2010 թվականից հետո բազմաչափ աղքատության մակարդակը նվազել է: Ամբողջ երկրի մասշտաբով, բազմաչափ աղքատ բնակչության տեսակարար կշիռը 2010 թվականի 41.2 %-ից նվազելով 2016 թվականին կազմել է 27.8%: Բազմաչափ աղքատության մակարդակն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի դիտարկելը օգտակար տեղեկատվություն է տալիս և ներկայացնում դրամային աղքատության մակարդակից տարբերվող պատկեր: 2010 թվականին գյուղական բնակչության 52.8%-ը և Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերի բնակչության 37.2%-ը բազմաչափ աղքատ են եղել, մինչդեռ Երևանում բազմաչափ աղքատության մակարդակը կազմել է 32.6%: 2011-2016թթ. ժամանակահատվածում բազմաչափ աղքատության մակարդակը նվազել է: 2016 թվականին այն կազմել է 30.3%՝ գյուղական բնակավայրերում, 24.7%՝ այլ քաղաքային բնակավայրերում և 28.0%՝ ք. Երևանում: Համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2010-ից մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածում գյուղական բնակավայրերը զգալիորեն ավելի մեծ առաջընթաց են արձանագրել ենթակառուցվածքների (օրինակ՝ կենտրոնացված ջրամատակարարման և աղբահանության համակարգերի) հասանելիության բարելավման ուղղությամբ, քան Երևանը և այլ քաղաքային բնակավայրերը, որտեղ զգալի է եղել ճգնաժամային շրջանում աշխատանքի շուկայի բացասական զարգացումների ազդեցությունը:

Չնայած 2010-2016թթ. ժամանակահատվածում արձանագրված դրական զարգացումներին (ըստ սպառման աղքատությունը նվազել է ավելի քան 6.0 տոկոսային կետով), տնային տնտեսությունների մեծամասնությունը դեռևս զրկանքներ է կրում մեկ կամ ավելի չափումների մասով: Գծապատկեր 3.14-ում Հայաստանի ամբողջ բնակչությունը բաժանվել է տոկոսային խմբերի՝ ըստ տնային տնտեսությունների, որոնք որևէ զրկանք չեն կրում (գրո զրկանք են կրում) կամ կրում են զրկանքներ 1, 2, 3, 4 կամ բոլոր 5 չափումների մասով: Այս վիճակագրությունը կենտրոնանում է աղքատության ինտենսիվության կամ խորության վրա: 2010-2016թթ. ժամանակահատվածում անհատների տեսակարար կշիռը, ովքեր ապրել են բոլոր հինգ

չափումների մասով, որն է գրկանքներ չկրող տնային տնտեսություններում, 20.0 տոկոսից ավելով կազմել է 27.7%: Միաժամանակ, երկու կամ ավելի չափումների մասով գրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը 43.3 %-ից նվազել է մինչև 29.1%: Այնուամենայնիվ, ըստ բնակավայրերի տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016 թվականին այլ քաղաքային բնակավայրերի և Երևանի բնակիչների շուրջ 26%-ը նշել է երկու կամ ավելի չափումների մասով գրկանքներ կրելու մասին, ինչն էապես ցածր է գյուղական բնակավայրերի համապատասխան ցուցանիշից (շուրջ 37%): Գյուղաբնակների կամ քաղաքաբնակների՝ այս կամ այն չափման մասով գրկվածության հետագա վերլուծությունը կարող է քաղաքականություն մշակողներին օգնել Հայաստանի բոլոր բնակավայրերում զարգացման բացերը կրճատելու առաջնահերթությունները սահմանելու հարցում:

Գծապատկեր 3.14. Հայաստան. Զրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը (բնակչության տոկոս)




Աղբյուր. *SSYԱՀ 2010-2016 թթ-ի հիման վրա հեղինակի հաշվարկները*

Գծապատկեր 3.15-ը ցույց է տալիս, որ բազմաչափ աղքատությունը համակարգային առումով տարբերվում է մայրաքաղաք Երևանում, այլ քաղաքային բնակավայրերում և գյուղական բնակավայրերում: 2016 թվականին ըստ բնակավայրերի տարբերություններն առավելապես զգալի են եղել բնակարանային պայմանների չափման մասով, սակայն վերջին շրջանում ֆիզիկական ակտիվներում ներդրումները նպաստել են քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև տարբերությունների կրճատմանը: Շատ երկրներում քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև հանրային ենթակառուցվածքների ու բնակարանային պայմանների առումով մեծ տարբերություններ կան, որոնք պայմանավորված են բնակլիմայական և աշխարհագրական գործոններով: Այս տարբերությունները կապված են նաև գյուղական շրջաններում (և անգամ մայրաքաղաքից դուրս) հանրային ապրանքների ու ծառայությունների մատուցման բարձր ինքնարժեքով և հաճախ հիմնավորվում են ծախսաարդյունավետության վերլուծությամբ: Այդուհանդերձ, դրանց բացակայությունը կամ սահմանափակ հասանելիությունը (անմատչելի լինելու հետ համատեղ) մեծապես ազդում են երկրում


աղքատության մակարդակի վրա և ցույց են տալիս, թե ինչպես է բազմաչափ աղքատության ուսումնասիրությունը լրացնում դրամային աղքատության վերլուծությանը:

Գծապատկեր 3.15. Բազմաչափ աղքատության հինգ չափումներից յուրաքանչյուրի մասով զրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը ըստ բնակավայրի (բնակչության տոկոս)



Աղբյուր. SSԿԱՀ 2010-2016 թթ-ի հիման վրա հեղինակի հաշվարկները

Գծապատկեր 3.16. Բազմաչափ աղքատության հինգ չափումներից յուրաքանչյուրի մասով զրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը, ըստ աղքատության մակարդակի (2016թ.) (բնակչության տոկոս)




Աղբյուրը՝ SSԿԱՀ 2016թ-ի վրա հիմնված հեղինակի հաշվարկները

Կրթության և աշխատանքի չափումների մասով առկա են համակարգային տարբերություններ քաղաքային և գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների միջև: Չնայած 2010-2016թթ. ժամանակահատվածում կրթության չափման մասով զրկանքներ կրող բնակչության տեսակարար կշռի նվազմանը, գյուղական բնակավայրերում շարունակում է խնդրահարույց մնալ պատշաճ բնակարանային պայմանների հարցը: Բացի այդ, աշխատանքի չափման մասով զրկվածության ցուցանիշներն ու դրանց միտումներն ըստ բնակավայրերի զգալիորեն տարբերվում են: Այս չափումը բնութագրող բոլոր ցուցանիշների (տե՛ս Աղյուսակ 3.18-ը) ավելի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղական բնակավայրերի համեմատ մայրաքաղաք Երևանում և այլ քաղաքային բնակավայրերում առկա է աշխատուժի մասնակցության ցածր և կառուցվածքային գործազրկության բարձր մակարդակ: Այդուհանդերձ, աշխատանքի չափման մյուս երկու ցուցանիշները, մասնավորապես՝ զբաղվածության կարգավիճակը բնութագրող «արժանավայել աշխատանքը» և «թերզբաղվածությունը» վկայում են այն մասին, որ գյուղական շրջանների բնակիչներն իրենց զբաղվածության որակն ավելի ցածր են համարում, քան քաղաքային շրջանների բնակիչները, ինչն արտացոլում է մեծ թվով անհատների՝ գյուղատնտեսության ոլորտում որպես ինքնուրույն զբաղված և ընտանիքի օժանդակող անդամ աշխատելու հանգամանքը:

Ընդհանուր առմամբ, բազմաչափ աղքատության ուսումնասիրությունը լրացնում է դրամային աղքատության վերաբերյալ վերլուծությունը, ինչպես նաև վկայում է այս երկու տարբեր հասկացությունների միջև հստակ արտահայտված կապերի մասին: Գծապատկեր 3.16-ը ցույց է տալիս, որ բոլոր չափումների մասով հիմնական կարիքների, բնակարանային պայմանների, կրթության, աշխատանքի կամ առողջապահության ցուցանիշներով զրկանքներ կրող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը դրամային աղքատների շրջանում ավելի մեծ է, քան ոչ աղքատների շրջանում: Այդուհանդերձ, ուսումնասիրության արդյունքները նաև ցույց են տալիս, որ դրամային ոչ աղքատ (երկրի մակարդակով աղքատության գծից վեր գտնվող) տնային տնտեսությունների շրջանում մեծ է այն ընտանիքների քանակը, որոնք նշում են հինգ չափումներից որևէ մեկի մասով զրկանքների մասին: Այս ցուցանիշները վկայում են, որ բնակչության մի մեծ մաս շարունակում է աղքատության տեսանկյունից խոցելի մնալ, քանի որ մարդկանց անբավարար հնարավորությունները սահմանափակում են նրանց գործունեությունը և կարողությունները:

Գծապատկեր 3.17. Աշխատանքի, կրթության և առողջության չափումների գծով զրկանքների համընկնումը (2016)



Աղբյուր. *SS4ԱՀ 2016 թ-ի հիման վրա հեղինակի հաշվարկները*

Աղքատության հարատև լինելը և վերջինիս բարդությունը հաճախ բացատրվում են մի քանի չափումների գծով զրկանքների առկայությամբ: Աշխատանքի, կրթության և առողջապահության հետ կապված զարգացման բացերի համընկնումը ցույց է տալիս, թե ինչպես են տնային տնտեսությունները, որոնք կրթության սահմանափակ հնարավորություն ունեն, տուժում նաև աշխատաաշուկայում ցածր մասնակցությունից և գործազրկությունից: Ավելին, աշխատանքային շուկաներում ընդգրկված լինելու խնդիրները հաճախ համընկնում են առողջական խնդիրների հետ: Գծապատկեր 4-ը ցույց է տալիս 2016 թ-ին զրկանքների համընկնումը երեք հարթություններում: Ընդհանուր առմամբ, բնակչության 54.4 տոկոսը զրկված են եղել այդ չափումներից առնվազն մեկի գծով: Բնակչության մեծամասնությունը՝ 32.4 տոկոսը, զրկված են եղել միայն աշխատանքի չափման մասով, մինչդեռ 9.5 տոկոսը՝ թե՛ աշխատանքի, թե՛ առողջապահության մասով: Բնակչության 0.1 տոկոսը միայն միաժամանակ զրկված է եղել աշխատանքի, առողջապահության և կրթության չափումների մասով, ինչը հիմնականում պայմանավորված է կրթական չափման մեջ զրկանքի ընդհանուր ցածր մակարդակով:

Այս փաստաթուղթը ամփոփում է «Հայաստանում բազմաչափ աղքատության չափումը» ծրագրի հիմնական արդյունքները: Ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և Համաշխարհային բանկի՝ Աղքատության և հավասարության Գլոբալ պրակտիկայի թիմի սերտ համագործակցությամբ: Թիմի կազմը՝ Դիանա Մարտիրոսովա (ՀՀ ԱՎԾ), Օսման Քասն Ինան, Մորից Մեյեր և Ալան Ֆուչս (Համաշխարհային Բանկ): Այս փաստաթղթի հեղինակն է Մորից Մեյերը (mmeyer3@worldbank.org).

3.10. Սոցիալական բացառումները Հայաստանում

Նյութական բացառումները ԵՄ-ի մոտեցումներով այն ցուցանիշն է, որն արտահայտում է մարդկանց մեծամասնության կողմից որոշ ցանկալի կամ նույնիսկ անհրաժեշտ ապրանքների ձեռք բերման անկարողությունը՝ համապատասխան ընդունելի կյանք վարելու համար: Ցուցանիշը տարբերում է այն մարդկանց, ովքեր չեն կարող որոշակի ապրանքներ կամ ծառայություններ իրենց թույլ տալ, և նրանց, ովքեր չունեն այդ ապրանքը կամ ծառայությունը՝ այլ պատճառներով, օրինակ՝ նրանք չեն ցանկանում կամ կարիք չունեն:

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակներում Սոցիալական բացառումների վիճակագրության մշակման նպատակով 2016 թ.-ին ՏՏԿԱՀ-ի ընտրանքի մեջ ընդգրկված բոլոր տնային տնտեսությունները պատասխանել են Սոցիալական բացառումներ մոդուլային հարցաթերթի հարցերին:

Ընդհանուր առմամբ, սոցիալական բացառումների ուսումնասիրությունը լրացնում է և դրամային և բազմաչափ աղքատության վերաբերյալ վերլուծությունը, ինչպես նաև վկայում է այս երեք տարբեր հասկացությունների միջև հստակ արտահայտված կապերի մասին:

2016 թ.-ին անցկացված ՏՏԿԱՀ-ին կից մոդուլային հարցաթերթի միջոցով ստացված արդյունքները ցույց են տալիս նյութական զրկվածության աստիճանը Հայաստանում: Ներկայում Եվրամիության նյութական զրկվածության ցուցանիշները վերանայման գործընթացում են: Թեև նյութական զրկվածության նոր ցուցանիշների համար տարրերի խումբը հայտնի է և հավաքագրվում է, սակայն Եվրոստատը դեռևս վերջնական որոշում չի կայացրել նյութական զրկվածության Եվրոստատի նոր ցուցանիշի շեմերի վերաբերյալ: Անկախ այդ հանգամանքից, համադրելիությունը պահպանելու նպատակով ՀՀ ԱՎԾ-ն առաջիկա տարիներին կարողականացնի իր մոտեցումները՝ համաձայն Եվրոստատի մեթոդաբանության:

Ստորև աղյուսակում բերված է զրկվածության տարածվածությունը՝ ըստ 9 ցուցանիշների.

Աղյուսակ 3.20. Հայաստան. Սոցիալական բացառումների ինը հիմնական ցուցանիշները, 2016թ.

Ցուցանիշներ	%-ով
<i>Չի կարող իրեն թույլ տալ</i>	
Մեկ շաբաթյա ամենամյա արձակուրդ տնից հեռու՝ այդ թվում նաև մնալով երկրորդ կացարանում կամ ընկերների/բարեկամների մոտ (տնային տնտեսություննամբողջությամբ)	89
Կատարել անսպասելի ծախս 45.000 դրամի չափով և վճարել սեփական ռեսուրսներով (առանց պարտք վերցնելու կամ ֆինանսական օգնություն խնդրելու)	70
Օրը մեջ մտով, հավով, ձկնով (կամ համարժեք բուսական/անասնական) կերակուր ուտել	67
Ունենալ ավտոմեքենա	54
Տանը բավարար ջերմություն ապահովել	42
Վճարել վարձակալության կամ հիմնական կացարանի հիփոթեքի համար	35
Ունենալ բջջային կամ ստացիոնար հեռախոս	3
Ունենալ լվացքի մեքենա	2
Ունենալ հեռուստացույց	0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2016թ.

Ջրկվածության տարածվածության ցուցանիշը (9 տարրից կազմված) հաշվարկվում է հետևյալ կերպ՝ նյութական գրկվածության շեմը դա 9-ը տարրից 3-ի առկայությունն է, իսկ սուր նյութական գրկվածության շեմը՝ 9-ից առնվազն 4-ի առկայությունն է:

Ստորև աղյուսակը ցույց է տալիս նյութական գրկվածության աստիճանը համաձայն տարբեր շեմերի: Եվրոստատի երեք տարրերից բաղկացած նյութական գրկվածության շեմը ցույց է տալիս, որ հայաստանցիների 75 տոկոսը, համաձայն Եվրոստատի սահմանման, նյութապես գրկված են: Հաշվի առնելով առնվազն չորս գրկանքներից բաղկացած շեմը, նյութական ծայրահեղ գրկվածության աստիճանը կազմել է 56.2%:

Հայաստանի բնակչության նյութական ծայրահեղ գրկվածությունը բավականին բարձր է:


Աղյուսակ 3.21. Հայաստան. Սոցիալական բացառումներ.Տնային տնտեսությունների անդամների բաշխումն ըստ գրկանքների թվի, 2016թ.

Չափումներ	Բնակչություն, %-ով
Կրում է մեկ կամ ավելի գրկանք	95
Կրում է երկու կամ ավելի գրկանք	87
Կրում է երեք կամ ավելի գրկանք <i>Եվրոստատի նյութական գրկվածության շեմը</i>	75
Կրում է չորս կամ ավելի գրկանք <i>Եվրոստատի նյութական ծայրահեղ գրկվածության շեմը</i>	56
Կրում է հինգ կամ ավելի գրկանք	34
Կրում է վեց կամ ավելի գրկանք	13
Կրում է յոթ կամ ավելի գրկանք	2
Կրում է ութ կամ ավելի գրկանք	0
Կրում է ինը գրկանքներ	0

Աղբյուրը. *SSYU2 2016թ.*

Այսպիսով, ՀՀ ԱՎԾ-ն հաշվարկել է նյութական գրկվածության աստիճանը տարբեր շեմերով, որոնց շնորհիվ իրականացվում են նյութական ծայրահեղ գրկվածության ցուցանիշների միջազգային համեմատություններ:

Գծապատկեր 3.18. Նյութական ծայրահեղ զրկվածության ցուցանիշների միջազգային համեմատություններ



Զրկվածության ցուցանիշների նոր տարբերակը:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ԵՄ-ի կողմից վերանայված զրկվածության ցուցանիշները, որոնք կհավաքագրվեն 2019թ. -ից սկսած:

Աղյուսակ 3.22. Հայաստան. Սոցիալական բացառումների նոր 13 հիմնական ցուցանիշները, 2016թ.

Ցուցանիշներ	Բնակչության %-ը, որը զրկված է, ըստ ցուցանիշի
<u>Չի կարող իրեն թույլ տալ</u>	
առնվազն մեկ շաբաթ տևողությամբ արձակուրդը անց կացնել տնից հեռու (տնային տնտեսությունը ամբողջությամբ)	89
փոխարինել մաշված կահույքը՝ ներառյալ կահույքի առանձին առարկաները	81
կատարել անսպասելի ծախս 45.000 դրամի չափով և վճարել սեփական ռեսուրսներով (առանց պարտք վերցնելու կամ ֆինանսական օգնություն խնդրելու)	70
տնից դուրս կանոնավոր կերպով (տարեկան մի քանի անգամ) մասնակցել վճարովի ժամանցային այնպիսի միջոցառումների, ինչպիսիք են սպորտը, կինոն, համերգը և այլն	68
օրը մեջ մտով, հավով, ձկով (կամ համարժեք բուսակերային) կերակուր ուտել	67
ավտոմեքենա ունենալ	54
ծախսել իր վրա շաբաթական փոքր գումար (առանց ստիպված լինելու խորհրդակցել որևէ մեկի հետ)	50
մասնակցել ընկերների/ընտանիքի, բարեկամների հետ ճաշկերույթի/ խնջույքի ամիսը առնվազն մեկ անգամ	49

Տանը բավարար ջերմություն ապահովել	42
Ժամանակին վճարել վարձակալության կամ հիմնական կացարանի հիփոթեքի համար	35
փոխարինել մաշված հագուստը (ներառյալ հնաոճ հագուստը) նոր, նախկինում չօգտագործված հագուստով	34
Ունենալ բջջային կամ ստացիոնար հեռախոս	3
Ինտերնետային կապ ունենալ	12

Աղբյուրը. SS4U2 2016թ.

Ստորև բերված աղյուսակի տվյալները ցույց են տալիս բնակչության զրկվածության աստիճանն ըստ նշված ցուցանիշների քանակի:


Աղյուսակ 3.23. Հայաստան. Բնակչության տեսակարար կշիռը, որը զրկված է ըստ առնվազն նշված քանակի ցուցանիշների, 2016թ.

	%-ով բնակչության մեջ
Զրկված է ըստ 1 կամ ավելի ցուցանիշի	97
Զրկված է ըստ 2 կամ ավելի ցուցանիշի	93
Զրկված է ըստ 3 կամ ավելի ցուցանիշի	88
Զրկված է ըստ 4 կամ ավելի ցուցանիշի	83
Զրկված է ըստ 5 կամ ավելի ցուցանիշի	75
Զրկված է ըստ 6 կամ ավելի ցուցանիշի	67
Զրկված է ըստ 7 կամ ավելի ցուցանիշի	56
Զրկված է ըստ 8 կամ ավելի ցուցանիշի	43
Զրկված է ըստ 9 կամ ավելի ցուցանիշի	31
Զրկված է ըստ 10 կամ ավելի ցուցանիշի	20
Զրկված է ըստ 11 կամ ավելի ցուցանիշի	11
Զրկված է ըստ 12 կամ ավելի ցուցանիշի	4
Զրկված է ըստ 13 ցուցանիշի	1

Աղբյուրը. SS4U2 2016թ.

Սպասվում է, որ վերանայված Եվրոստատի կողմից տրված զրկվածների շեմը կնեռարի 5, 6 կամ 7 և ավելի ցուցանիշներ ընտրված 13 ցուցանիշների կազմից:

Քարտեզ 1. Հայաստան. Ըստ սպառման ագրեգատի աղքատության մակարդակը մարզերով և ք. Երևանով, 2016թ.



Աղբյուրը. *SSՀԱՀ 2016թ.*

Գլուխ 4. Աղքատությունը գյուղական վայրերում

2016թ.-ին գյուղական բնակչության աղքատության մակարդակը բարձր է միջին հանրապետականից (30.4%, 29.4%-ի դիմաց) (Գլուխ 3, Աղյուսակ 3.1, Աղյուսակ 4.1): Դիտարկվող ժամանակաշրջանում գյուղական բնակչությունը ներքին ռեսուրսների հաշվին ավելի հաջող է հաղթահարել իր պարենային խնդիրները, քան քաղաքային բնակչությունը:

2016թ.-ին գյուղաբնակ տնային տնտեսությունների 87.5%-ը զբաղվել է բուսաբուծությամբ, իսկ 58.1%-ը՝ անասնապահությամբ: 2016թ.-ին գյուղաբնակ տնային տնտեսությունների 57.2%-ը զբաղվել է միաժամանակ թե՛ բուսաբուծությամբ, թե՛ անասնապահությամբ:

4.1. Աղքատության մակարդակի միտումները գյուղական վայրերում

2016թ.-ին գյուղաբնակների աղքատությունը դեռևս գերազանցել է 2008թ.-ի մակարդակը՝ 2.9, իսկ քաղաքաբնակներինը՝ 1.2%-ային կետով: 2016թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունը քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև փոքր է՝ գյուղական բնակավայրերում՝ 30.4% և քաղաքային բնակավայրերում՝ 28.8% (Աղյուսակ 4.1, Գծապատկեր 4.1):

Աղյուսակ 4.1. Հայաստան. Գյուղական և քաղաքային բնակչության աղքատության մակարդակի միտումները, 2008 և 2016թթ.

(տոկոսներով)


Բնակավայրեր	2008թ.		2016թ.		2016թ./ 2008թ. փոփոխությունը %-ային կետով	
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
Գյուղական բնակավայրեր	1.2	27.5	1.4	30.4	0.2	2.9
Քաղաքային բնակավայրեր	1.9	27.6	2.0	28.8	0.1	1.2
ԸՆդամենը	1.6	27.6	1.8	29.4	0.2	1.8

Աղբյուրը. SSԿԱՀ 2008 և 2016թթ.

2016թ.-ին ծայրահեղ աղքատ է գյուղական բնակչության 1.4%-ը, ի տարբերություն քաղաքային բնակչության 2.0% ծայրահեղ աղքատության մակարդակի: 2016թ.-ին 2008թ.-ի համեմատ գյուղական բնակչության ծայրահեղ աղքատության մակարդակը գերազանցում է 0.2%-ային կետով, իսկ քաղաքային բնակչության մոտ՝ 0.1%-ային կետով:

Գծապատկեր 4.1. Հայաստան. Գյուղական և քաղաքային բնակչության աղքատության մակարդակը, 2008 և 2016թթ.-ին

(տոկոսներով)



Աղբյուրը. *SS4ULՀ 2008 և 2016թթ.*

4.2. Գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամուտներն ու սպառումը (սպառման ագրեգատը) 2008-2016թթ.-ին

2008-2016թթ.-ի ընթացքում գյուղական բնակավայրերում բնակչության միջին ամբողջական եկամուտները համադրելի գներով աճել են 1.5 անգամ (Աղյուսակ 4.2):

Աճը հիմնականում պայմանավորված էր Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացված մասնավոր տրանսֆերտների աճով:

Միջին հաշվով, 2016թ.-ին գյուղատնտեսական գործունեությունը (գյուղմթերքի, կենդանու վաճառք և սեփական տնտեսությունից սննդամթերքի սպառում) ապահովել է գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամտի (մեկ շնչի հաշվով) միայն 26.4%-ը՝ 2008թ.-ին արձանագրված 38.8%-ի, 2009թ.-ի՝ 35.6%-ի, 2010թ.-ի՝ 29.4%-ի, 2011թ.-ի՝ 32.4%-ի, 2012 թ.-ի՝ 30.8%-ի, 2013 թ.-ի՝ 30.9%-ի, 2014 թ.-ի՝ 28.5%-ի և 2015 թ.-ի՝ 25.6%-ի համեմատ (Գլուխ 6, Աղյուսակ 6.2): Մինևույն ժամանակ, աճել է վարձու աշխատանքից ստացված եկամտի տեսակարար կշիռը՝ 2008թ.-ի 29.6%-ից կազմելով 2016թ.-ին՝ 36.2%: Ինքնազբաղվածությունից ստացված եկամտի տեսակարար կշիռը շեշտակի աճել է (4.1%-ից մինչև 7.2%):

Պետական տրանսֆերտների՝ կենսաթոշակների ու սոցիալական աջակցության մասնաբաժինն ամբողջական եկամուտների կազմում նվազել է՝ 2016թ.-ին՝ կազմելով 16.7%՝ 2008թ.-ի 17.3%-ի դիմաց: Գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամուտների կազմում ավելացել է Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացված տրանսֆերտների, որպես եկամտի աղբյուրի, կարևորությունը՝ 2008թ.-ի 6.6%-ի դիմաց՝ 2016թ.-ին կազմելով 8.1%: 0.5%-ային կետով նվազել է Հայաստանում ապրող բարեկամներից ստացված տրանսֆերտների տեսակարար կշիռը (0.7%՝ 2008թ. և 0.2%՝ 2016թ.) (Գլուխ 6, Աղյուսակ 6.2):

Աղյուսակ 4.2-ը ներկայացնում է գյուղական բնակչության ամսական եկամուտների և սպառման ցուցանիշների փոփոխությունները 2008-2016թթ.-ին՝ հաշվարկված մեկ չափահասին համարժեք սպառման քվինտիլային բաշխման ցուցանիշի կիրառմամբ: Ընդհանուր առմամբ, գյուղական բնակչության սպառման միջին մակարդակը 2008թ.-ի համեմատ 2016թ.-ին աճել է 14.2%-ով, այն դեպքում, երբ եկամտի միջին մակարդակն աճել է 1.5 անգամ: Իրական եկամուտն ավելացել է սպառման երրորդ, չորրորդ և հինգերորդ քվինտիլներում: Հինգերորդ քվինտիլում այն ավելացել է 2.3 անգամ:

Բնակչության ամենաաղքատ՝ առաջին քվինտիլային խմբի եկամուտը նվազել է (34.0%-ով), իսկ երկրորդ քվինտիլային խմբի մոտ նվազել է 3%-ով: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ իրական սպառումն ավելացել է սպառման բոլոր քվինտիլներում, ընդ որում առաջին քվինտիլում միայն 2.2%-ով:

Աղյուսակ 4.2. Հայաստան. Գյուղական բնակչության ամբողջական եկամուտներն ու սպառման ազդեցատը 2008 և 2016թթ.-ին ըստ քվինտիլային խմբերի*, մեկ չափահասին համարժեք, ամսական, 2008թ. միջին տարեկան գներով

(դրամով)

	Քվինտիլներ*					Միջինը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
Սպառումը մեկ չափահաս անձին համարժեք						
2008թ.	23 335	30 780	38 164	46 672	69 418	41 691
2016թ.	23 838	32 393	44 264	54 528	83 068	47 611
Ամբողջական եկամուտը մեկ չափահաս անձին համարժեք						
2008թ.	30 663	36 036	41 639	45 090	60 239	42 745
2016թ.	20 224	35 137	49 486	69 851	135 836	62 127
2008 և 2016թթ. տարբերությունը (տոկոսներով)						
Սպառում	2.2	5.2	16.0	16.8	19.7	14.2
Եկամուտ	-34.0	-2.5	18.8	54.9	125.5	45.3


Աղբյուր. *SSYULZ 2008 և 2016թթ.*

* սպառման ազդեցատի քվինտիլային խմբերի բաշխումը կատարվել է գյուղաբնակների ներքո:

Բոլոր քվինտիլներում գյուղական բնակչության եկամուտների գրանցված փոփոխությունների արդյունքում 2008-2016թթ.-ին գյուղական բնակչության միջին եկամուտներն աճել են 1.5 անգամ, իսկ գյուղական բնակչության իրական սպառման աճը բոլոր քվինտիլներում բերել է միջին սպառման 14.2% աճին:

Գծապատկեր 4.2. Հայաստան. Գյուղական բնակչության ամբողջական եկամուտների ու սպառման ագրեգատի տարբերությունը ըստ քվինտիլային խմբերի 2008 և 2016թթ.

(տոկոսներով)



Աղբյուրը. SSԿԱՀ 2008 և 2016թթ.

4.3. Ո՞վքեր էին աղքատ գյուղական վայրերում 2016թ.-ին

Ներկայացված տվյալների համաձայն, Հայաստանում ինչպես ֆիզիկական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, այնպես էլ ֆինանսների սահմանափակ հնարավորությունները (ճանապարհներ, ոռոգման համակարգ, գյուղմթերքի մշակման, մթերման, պահպանման հնարավորություններ, ֆինանսավորման հնարավորություններ և այլն), հանդիսանում է գյուղական վայրերի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններից մեկը: Հետևաբար, աղքատության մակարդակը բարձր է այն տնային տնտեսություններում, որոնք հողագուրկ են կամ ունեն շատ փոքր հողակտոր, հողի ոռոգման սահմանափակ հնարավորություն, չունեն կամ ունեն շատ քիչ գյուղտեխնիկա կամ արտադրական հնարավորություններ, ունեն սահմանափակ ֆինանսական աղբյուրներ:

Աշխարհագրական դիրքը. Ինչպես և նախորդ տարիներին, գյուղական բնակչությունն ավելի աղքատ է այն մարզերում, որտեղ գյուղատնտեսության համար պայմաններն առավել անբարենպաստ են: 2016թ.-ին աղքատության մակարդակն ավելի բարձր է ծովի մակարդակից 1300-1700 մ բարձրության վրա գտնվող բնակավայրերում (Աղյուսակ 4.3):

Աղյուսակ 4.3. Հայաստան. Գյուղական բնակչության աղքատության մակարդակն ըստ բնակավայրի աշխարհագրական դիրքի, 2008 և 2016թթ.

(տոկոսներով)

	Ընդամենը		այդ թվում՝ ծովի մակերևույթից բարձր					
			Մինչև 1300 մ		1300-1700 մ		1700 մ և բարձր	
	2008	2016	2008	2016	2008	2016	2008	2016
Ոչ աղքատ	72.5	69.6	77.5	72.7	71.8	64.1	67.3	68.7
Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	26.3	29.0	21.9	26.2	26.4	33.4	31.2	30.3
Ծայրահեղ աղքատ	1.2	1.4	0.6	1.1	1.8	2.5	1.5	1.0

Աղբյուրը. SSԿԱՀ 2008 և 2016թթ.

Հողի առկայությունը. Հողի սեփականությունը մեծ դեր է խաղում գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակի կրճատման գործում: Այն տնային տնտեսությունները, որոնք ապրում են գյուղական բնակավայրերում և չունեն հողակտոր, կազմում են 5.6%: 2016թ.-ին աղքատության ռիսկը ամենաբարձրն է այն տնային տնտեսություններում, որոնց հողակտորի չափը կազմել է մինչև 0.2 հա և 0.2-0.5 հա: Աղքատության ամենացածր մակարդակը գրանցվել է այն տնային տնտեսություններում, որոնց հողակտորի չափը 0.5-1 հա է (Աղյուսակ 4.4):

Աղյուսակ 4.4. Հայաստան. Տնային տնտեսությունների աղքատության մակարդակը գյուղական վայրերում ըստ հողակտորի առկայության և չափերի, 2008 և 2016թթ

(տոկոսներով)

Հողակտորի չափը (հեկտար)	2008թ.		2016թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	Ծայրահեղ աղքատ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	%-ն աղքատների մեջ	%-ը գյուղաբնակ տնային տնտեսությունների մեջ
0 հա	0.5	21.4	2.0	26.1	5.5	5.6
Մինչև 0.2 հա	1.1	24.3	2.1	28.7	31.2	28.9
0.2 – 0.5 հա	0.9	20.9	0.9	28.8	12.2	11.2
0.5 – 1 հա	1.7	20.5	1.0	19.7	14.0	18.8
Ավելի քան 1 հա	0.5	28.2	0.6	27.7	37.1	35.5
Գյուղական վայրեր, ընդամենը ըստ տնային տնտեսությունների	1.4	24.4	1.2	26.5	100	100

Աղբյուրը. SS4ULZ 2008 և 2016 թթ.

2016թ.-ին գյուղաբնակ տնային տնտեսությունների շրջանում հողակտորի առկայությունն ու օգտագործումն ունի հետևյալ պատկերը՝ տնային տնտեսությունների 87.5%-ը ունեցած հողն օգտագործում է լրիվ կամ մասամբ, իսկ 6.9%-ը ունեցած հողը չի օգտագործում, մնացած 5.6% տնային տնտեսությունները հող չունեն:

Հողի որակը. Տնային տնտեսությունների հետազոտությամբ բավարար տեղեկատվություն չի ստացվում հողի որակի մասին, ուստի, որպես հողի որակի ցուցանիշ, դիտարկվում է հողը ջրելու հնարավորությունը, քանի որ այն ազդում է ստացվող բերքի ու բերքատվության մակարդակի վրա: Ըստ հետազոտության տվյալների՝ հող մշակող տնային տնտեսությունների 56.7%-ի մշակվող հողը ռոտզվել է: Միևնույն ժամանակ, ինչպես երևում է Աղյուսակ 4.5-ից, ռոտզված հողատարածքների մասնաբաժինը կազմել է մշակվող հողատարածքների ընդամենը 30.4%:

Աղյուսակ 4.5. Հայաստան. Տնային տնտեսությունների կողմից մշակվող հողատարածքների բաշխումն ըստ ոռոգման եղանակի, 2016թ.

(տոկոսներով)

Մշակվող հողատարածքների տեսակարար կշիռը, որոնք ունեն	Ընդամենը մշակվող հողատարածքներ	այդ թվում՝	
		տնամերձ	ոչ տնամերձ
Ոռոգման ջուր (ջրատար/ջրանցք)	30.4	55.9	26.4
Խմելու ջուր կամ խորքային հոր	2.4	16.7	0.1
Միայն բնական աղբյուրներ (գետեր և այլն)	0.8	5.1	0.2
Միաժամանակ ոռոգում և խմելու ջուր կամ խորքային հոր	-	-	-
Միաժամանակ ոռոգում և բնական աղբյուրներ (գետեր, առվակներ, լճեր)	-	-	-
Ջրման աղբյուրների այլ գույքորդություններ	-	-	-
Հավաքած անձրևաջուր, ձնհալից ջուր	1.0	1.0	0.9
Միայն անձրևաջուր	65.4	21.3	72.4
Ընդամենը հողատարածք	100	100	100

Աղբյուրը. *SSԿԱՀ 2016թ.*

Գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից մշակելի հողատարածքների ոռոգվող մասնաբաժինը ներկայացվում է ստորև: Այսպես, հողատարածքների միայն 57.5%-ը ոռոգվել է 75-100%-ով, իսկ հողատարածքների մոտ մեկ երրորդը՝ 30.2%-ը, ոռոգվել է մինչև 25%:

Աղյուսակ 4.6. Հայաստան. Հող մշակող բնակչության ոռոգվող հողատարածքների բաշխումն ըստ ոռոգված տարածքների մասնաբաժնի և տնային տնտեսությունների աղքատության մակարդակի, 2016թ.


(տոկոսներով)

Ոռոգվող հողատարածքների մասնաբաժինը	Ոչ աղքատ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	Ծայրահեղ աղքատ	Ընդամենը
Մինչև 25%	30.2	30.6	20.7	30.2
25-50%	5.8	9.3	16.9	6.6
50-75%	6.0	4.3	-	5.7
75%-100%	58.0	55.8	62.4	57.5
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. *SSԿԱՀ 2016թ.*

Գծապատկեր 4.3. Հայաստան. Հող մշակող բնակչության ոռոգվող հողատարածքների բաշխումն ըստ ոռոգված տարածքների մասնաբաժնի և տնային տնտեսությունների աղքատության մակարդակի, 2016թ.-ին

(տոկոսներով)



Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

Արարատյան դաշտավայրի (ՀՀ Արարատի և Արմավիրի մարզեր) բերրի հողերի առավել մեծ համամասնությունը ոռոգվել է՝ 75%-ից 100%-ը, իսկ հողերի նշված չափով ոռոգվածները ամենափոքր համամասնությունը գրանցվել է ՀՀ Սյունիքի, Տավուշի, Շիրակի և Լոռու մարզերում (Աղյուսակ 4.7):

Աղյուսակ 4.7. Հայաստան. Հող մշակող բնակչության ոռոգվող հողատարածքների բաշխումն ըստ ոռոգված տարածքների մասնաբաժնի և մարզերի, 2016թ.-ին

(տոկոսներով)

	Միջին 25%	25-50%	50-75%	75%-100%	Ընդամենը
Արագածոտն	18.1	7.8	6.0	68.1	100
Արարատ	9.6	1.6	4.8	84.0	100
Արմավիր	0.6	1.9	5.7	91.8	100
Գեղարքունիք	62.5	6.2	1.4	29.9	100
Լոռի	64.7	14.7	3.0	17.6	100
Կոտայք	46.3	13.0	9.2	31.5	100
Շիրակ	55.7	15.4	12.4	16.5	100
Սյունիք	83.3	11.1	-	5.6	100
Վայոց Ձոր	13.3	9.1	6.3	71.3	100
Տավուշ	73.3	8.9	6.7	11.1	100
Ընդամենը	30.2	6.6	5.7	57.5	100

Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

Ըստ 2016թ.-ի հետազոտության տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսություններից նրանք, ովքեր օգտագործվող հողատարածքը ոռոգել են ամբողջությամբ կամ մասամբ (այլ ձևերի հետ միաժամանակ)՝ 84.1%-ը ջրօգտագործողների ընկերության անդամ են: Չանդամագրված տնային տնտեսությունների 82.0%-ը պատասխանել է, որ իրենց գյուղում նման ընկերություն չկա, իսկ 18.0%-ը չի ցանկացել անդամակցել ջրօգտագործողների ընկերությանը:

Ըստ հետազոտության տվյալների, տնային տնտեսությունների 75.5%-ը ստացել է ոռոգման ջուր՝ բավարար քանակությամբ և ժամանակին, 15.5%-ը՝ բավարար քանակությամբ, բայց ոչ ժամանակին, 2.9%-ը՝ ժամանակին, բայց ոչ բավարար

քանակությամբ, իսկ տնային տնտեսությունների 6.1%-ը ստացել է ռոռզման ջուր՝ ոչ բավարար քանակությամբ, և ոչ էլ ժամանակին:

Ռոռզման ջրի մատակարարման ընդհատումների պատճառներից որպես ամենակարևորներ նշվել են՝ ջրատարների տեխնիկական անբավարար վիճակը (33.2%), տեղական ցանցի խնդիրները (21.5%), վճարումներ չկատարելը (4.3%), պոմպերի հետ կապված վթարները (18.5%) և այլն:

Օգտագործած ռոռզման ջրի դիմաց վճարել է լրիվ կամ մասամբ տնային տնտեսությունների 92.0%-ը, իսկ տնային տնտեսությունների 8.0%-ը չի վճարել, որից՝ գումար չունենալու պատճառով՝ 44.6%-ը, ռոռզման ջրի անհրաժեշտ քանակություն չստանալու պատճառով՝ 11.1%-ը, ռոռզման ջրի ոչ ժամանակին մատակարարելու պատճառով՝ 2.0%-ը:

Հետազոտության ընթացքում տնային տնտեսությունները հարցվել են ռոռզման համակարգերի աշխատանքների վերաբերյալ նաև հետազոտությանը նախորդող երկու տարիների գյուղատնտեսական սեզոններում (2015թ.-ին 2014թ.-ի համեմատ): Համաձայն հարցվողների 17.2%-ի՝ 2015թ.-ի գյուղատնտեսական սեզոնում՝ 2014թ.-ի համեմատ, ռոռզման համակարգի աշխատանքը փոխվել է, ընդ որում, 83.3%-ը գտնում է, որ այն էապես կամ որոշ չափով բարելավվել է:

2015թ.-ին 2014թ.-ի համեմատ հարցվողների 5.6%-ը գտնում է, որ փոխվել են հողատարածքի չափերը, ընդ որում, նրանցից 58.0%-ը համարում է, որ դրանք էապես կամ որոշ չափով ընդլայնվել են, իսկ մնացածը՝ կրճատվել:

Գյուղատնտեսական տեխնիկայի մատչելիությունը.

Գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից տնօրինվող և օգտագործվող գյուղտեխնիկայի մեծ մասը բավականին հին է՝ 6 և ավելի տարվա վաղեմության: Եթե նախորդ տարիներին 10 տեսակ գյուղտեխնիկայից մինչև 2 տարի օգտագործման տևողության 7 տեսակը չի նշվել, ապա 2016թ.-ին՝ 10-ից միայն 4-ը չի նշվել (Աղյուսակ 4.8):

Աղյուսակ 4.8. Հայաստան. Գյուղտեխնիկայի առկայությունը հող ունեցող կամ անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսություններում ըստ օգտագործման տևողության, 2016թ.-ին

	Ընդամենը	Մինչև 2 տարի	3-5 տարի	6-10 տարի	Ավելի քան 10 տարի
Տրակտոր, մինի տրակտոր	100	4.1	8.3	38.8	48.8
Բեռնատար ավտոմեքենա	100	4.9	28.1	19.0	48.0
Հացահատիկային կոմբայն	100	24.6	-	-	75.4
Տրակտորային կցասայլակ	100	5.0	27.8	39.2	28.0
Տրակտորային խոտհնձիչ	100	20.1	39.5	9.6	30.8
Կերահավաք կոմբայն	100	-	52.0	48.0	-
Հատիկագոտիչ	-	-	-	-	-
Տրակտորային շարքացան	100	-	-	43.1	56.9
Տրակտորային գութան	100	15.9	-	47.0	37.1
Կուլտիվատոր	100	-	-	20.2	79.8
Ընդամենը	100	7.3	18.6	29.2	44.9

Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

Բնական է, որ ոչ աղքատ տնային տնտեսություններն առավել մեծ հնարավորություններ ունեն ձեռք բերելու կամ վարձակալելու գյուղատնտեսական տեխնիկա, քան աղքատ տնային տնտեսությունները: 2016թ.-ի հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում գյուղտեխնիկա ունեցող տնային տնտեսություններից միայն ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններն են, որ ձեռք չեն բերել ոչ մի գյուղտեխնիկա: Գյուղատնտեսական տեխնիկա ունեցող տնային տնտեսությունների 81.3%-ը կազմել են ոչ աղքատները, իսկ 18.7%-ը՝ աղքատները (առանց ծայրահեղ աղքատների):

Ոչ աղքատ տնային տնտեսությունները հնարավորություն են ունեցել օգտագործելու գյուղտեխնիկայի գրեթե բոլոր տեսակները, բացի հատիկագտիչից, իսկ աղքատները՝ բացի կերահավաք կոմբայնից և հատիկագտիչից (Աղյուսակ 4.9):

Աղյուսակ 4.9. Հայաստան. Հող ունեցող կամ անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսություններում գյուղտեխնիկայի առկայությունն ըստ աղքատության մակարդակի, 2016թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	Ոչ աղքատ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	Ծայրահեղ աղքատ
Տրակտոր, մինի տրակտոր	100	82.6	17.4	-
Բեռնատար ավտոմեքենա	100	88.3	11.7	-
Հացահատիկային կոմբայն	100	72.0	28.0	-
Տրակտորային կցասայլակ	100	76.3	23.7	-
Տրակտորային խոտհնձիչ	100	79.0	21.0	-
Կերահավաք կոմբայն	100	100.0	-	-
Հատիկագտիչ	100	-	-	-
Տրակտորային շարքացան	100	75.3	24.7	-
Տրակտորային գութան	100	67.3	32.7	-
Կուլտիվատոր	100	82.7	17.3	-
Ընդամենը	100	81.3	18.7	-

Աղբյուրը. *SSYU2 2016թ.*

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցնելու հնարավորությունը. 2016թ.-ին գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցրել է բոլոր հետազոտված տնային տնտեսությունների 14.3%-ը, որից գյուղական բնակավայրերից՝ 95.4%-ը, քաղաքային բնակավայրերից՝ 4.6%: Նշված համախմբի տնային տնտեսությունների 99.3%-ը վարկ է վերցրել բանկից (ներառյալ ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին ստացված վարկերը), իսկ 0.7%-ը պարտք է վերցրել ընկերներից, ծնողներից, բարեկամներից կամ այլ աղբյուրներից:

2016թ.-ին գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցրել է հետազոտված գյուղաբնակ տնային տնտեսությունների 17.0%-ը: Վարկ կամ պարտք վերցնող գյուղաբնակ տնային տնտեսությունների 99.5%-ն օգտվել է բանկից (ներառյալ կառավարության և միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին ստացված վարկերը), որից՝ 76.9%-ը ոչ աղքատ տնային տնտեսություններ, 22.0%-ը՝ աղքատ տնային տնտեսություններ, իսկ 1.1%-ը՝ ծայրահեղ

աղբատները: Ավելի մանրամասն տվյալներ միայն գյուղաբնակ տնային տնտեսությունների վերաբերյալ՝ ըստ աղբատության մակարդակի, բերված են Աղյուսակ 4.10-ում:

Աղյուսակ 4.10. Հայաստան. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցրած գյուղաբնակ տնային տնտեսություններն ըստ աղբատության մակարդակի, 2008 և 2016թթ.

(տոկոսներով)

	Ոչ աղբատ		Աղբատ (առանց ծայրահեղ աղբատների)		Ծայրահեղ աղբատ	
	2008թ.	2016թ.	2008թ.	2016թ.	2008թ.	2016թ.
Վերցրել են վարկ կամ պարտք ընդամենը, այդ թվում՝	13.3	17.7	7.6	15.0	1.5	18.2
Բանկից (ներառյալ կառավարության և միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին ստացված վարկերը)	79.6	99.3	86.5	100.0	65.9	100.0
Ընկերներից և բարեկամներից	19.6	0.7	12.2	-	-	-
Այլ աղբյուրներից	0.8	-	1.3	-	34.1	-

Աղբյուրը. *SSYUՀ 2008 և 2016թթ.*

Միջին հաշվով գյուղատնտեսության եկամտաբեր չլինելը, ինչպես նաև ֆինանսական միջոցների բացակայության և հողի ոռոգման հնարավորությունը, հանդիսանում են 2016թ.-ին հողը չմշակելու հիմնական պատճառները՝ համապատասխանաբար կազմելով 23.8%, 19.5% և 19.2%, տրված պատասխանների շարքում: Հողը չմշակելու հաջորդ հիմնական պատճառներից են՝ հողի վատ որակը և հեռու լինելը, համապատասխանաբար՝ 8.8% և 8.6%: Հողը չմշակելու պատճառներն, ըստ քվինտիլային խմբերի, բերված են Աղյուսակ 4.11-ում:

Աղյուսակ 4.11. Հայաստան. Հող ունեցող բնակչության հողի չմշակման պատճառներն ըստ քվինտիլային խմբերի, 2016թ.

(տոկոսներով)

Հողը չմշակելու պատճառները	Սպառման ագրեգատի քվինտիլային խմբեր*					
	Առաջին	Երկրորդ	Երրորդ	Չորրորդ	Հինգերորդ	Ընդամենը
Շատ հեռու է	5.5	8.9	10.0	12.3	7.2	8.6
Հողը վատորակ է	6.6	12.1	7.9	8.4	9.0	8.8
Հողը չի ոռոգվում	22.1	23.1	17.3	14.7	17.9	19.2
Մշակելը ձեռնտու չէ	22.3	16.3	23.9	26.6	30.4	23.8
Մշակելու համար փող չկա	25.3	18.7	20.6	19.3	13.3	19.5
Հիվանդ է, ծեր է	12.1	12.7	11.7	10.1	15.8	12.6
Այլ	6.1	8.2	8.6	8.6	6.4	7.5
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

* սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի բաշխումը կատարվել է գյուղաբնակների ներքո:

Գյուղաբնակ տնային տնտեսությունները նշել են, որ վերջին սեզոնի ընթացքում ունեցել են որոշ դժվարություններ: Ավելի հաճախ հանդիպած հիմնական դժվարություններն են՝ ըստ առաջնահերթության սկզբունքի՝ աշխատուժի պակասը (18.6%), գյուղտեխնիկայի ձեռք բերումը (17.5%), միջնորդի հետ գործ ունենալը (12.6%), մթերքի իրացումը (11.2%), մեծածախ և մանրածախ շուկաների բացակայությունը (10.8%), ոռոգման վարձի վճարը (5.1%), ապրանքների տեղափոխումը շուկա (4.4%), աշխատանքի վարձատրությունը (3.6%), տնկիների ձեռքբերումը (2.4%), սերմերի պակասը (1.5%) և այլ դժվարությունները (12.3%):

4.4. Գյուղական ճանապարհների վիճակը և երթևեկության միջոցներից օգտվելը

Գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների ազդեցությունը հիմնականում կանխատեսելի է: Գյուղերում բնակվող այն տնային տնտեսությունները, որոնք տեղակայված են կոշտ ծածկույթով ճանապարհների և շուկաների մոտակայքում, առավել ունևոր են:

2016թ.-ի ՏՏԿԱՀ-ի տվյալներով, գյուղաբնակ տնային տնտեսությունների 43.6%-ն ունի որևէ տրանսպորտային միջոց՝ մարդատար, բեռնատար մեքենա կամ այլ տրանսպորտային միջոց: Նշված տնային տնտեսությունները, հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում, վառելիքի վրա ծախսել են միջինը 176 հազար դրամ, մեքենայի պահպանման համար, այդ թվում՝ պահեստամասեր և աշխատանքի դիմաց վճարումներ՝ 118 հազար դրամ, իսկ ավտոբուսի, երթուղային տաքսու և տաքսու վրա կատարած ծախսերը կազմել են 40 հազար դրամ:

2016թ.-ի ՏՏԿԱՀ-ի տվյալները ցույց են տալիս, թե սովորաբար ամսվա ընթացքում քանի օր են գյուղաբնակ տնային տնտեսությունները ծախսում ներքոհիշյալ փոխադրումների վրա՝ համայնքից դուրս աշխատելու համար՝ 20.7 օր, գյուղմթերք վաճառելու համար՝ 5.4 օր, պարարտանյութ, սերմեր գնելու համար՝ 1.5 օր և այլ նպատակների համար՝ 4.0 օր: Աղյուսակ 4.12-ում բերված են ճանապարհների և երթևեկության միջոցների որակի գնահատման ցուցանիշները գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից:

Աղյուսակ 4.12. Հայաստան. ճանապարհների և երթևեկության միջոցների որակի գնահատումը գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից, 2016թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	Վատ	Միջին	Լավ	Գերազանց
Ներհամայնքային ճանապարհներ	100	73.8	21.4	4.8	-
Մարզկենտրոնի, քաղաքների, շուկաների հետ կապող ճանապարհներ	100	9.9	65.5	24.5	0.1
Ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, երթևեկության այլ միջոցներ	100	10.8	66.9	22.3	-

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2016թ.

Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 4.12-ի տվյալները, գյուղաբնակ տնային տնտեսությունների 74%-ը ներհամայնքային ճանապարհների վիճակը գնահատել է վատ:

Մարզկենտրոնի, քաղաքների, շուկաների հետ կապող ճանապարհների վիճակը գյուղաբնակ տնային տնտեսությունների 10%-ի կողմից գնահատվել է վատ:

Գյուղաբնակ տնային տնտեսությունների կողմից երթևեկության միջոցների (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, երթևեկության այլ միջոցներ) որակը գնահատվել է վատ՝ 11%, նախորդ տարվա 18%-ի դիմաց:

Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների մատչելիությունը բերվում է ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 4.13. Հայաստան. Հեռավորությունը մինչև մոտակա ծառայություն տրամադրող հաստատություններ գյուղաբնակ տնային տնտեսությունների համար, 2016թ.

(տոկոսներով)

Ծառայություններ տրամադրող հաստատություններ	Մինչև 1 կմ	1-3կմ	4-5կմ	6-10կմ	10 կմ և ավել
Բուժկետ	75.9	20.0	3.0	1.0	0.1
Հիվանդանոց	2.8	7.9	10.4	40.5	38.4
Ղեղատուն	38.7	15.0	11.0	18.5	16.8
Գյուղապետարան	80.8	18.5	0.6	0.1	-
Նախադպրոցական հաստատություն	57.0	21.7	7.2	9.0	5.1
Միջնակարգ դպրոց	73.4	23.4	2.1	1.0	0.1
Գյուղարտադրանքի վաճառքի շուկա	-	6.9	9.2	34.6	49.3
Բանկ/ֆինանսական ծառայություն	0.4	5.6	12.4	36.3	45.3

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար միջին հեռավորությունը մինչև մոտակա գյուղարտադրանքի վաճառքի շուկա կազմել է՝ 12.9 կմ, բանկ/ֆինանսական ծառայություն՝ 11. 7 կմ, հիվանդանոց՝ 10. 7 կմ, դեղատուն՝ 5. 2 կմ, մանկապարտեզ՝ 2.4 կմ, բուժկետ և միջնակարգ դպրոց՝ 0.9 կմ, գյուղապետարան՝ 0.6 կմ:

Գյուղաբնակ տնային տնտեսությունները գյուղարտադրանքի վաճառքի շուկա հասնելու համար ծախսում են միջինը 21 րոպե, բանկ/ֆինանսական ծառայություն՝ 19 րոպե, հիվանդանոց՝ 16 րոպե, դեղատուն և միջնակարգ դպրոց՝ 13 րոպե, մանկապարտեզ՝ 12 րոպե, բուժկետ և գյուղապետարան՝ 11 րոպե:

Գյուղաբնակ տնային տնտեսությունների մեծ մասը ծառայություններ տրամադրող որոշ հաստատություններ (բուժկետ, գյուղապետարան, միջնակարգ դպրոց, նախադպրոցական հաստատություն) հասնելու համար չի օգտագործում ո՛չ մեքենա, ո՛չ էլ ավտոբուս/միկրոավտոբուս: Իսկ հիվանդանոց, բանկ, գյուղարտադրանքի վաճառքի շուկա և դեղատուն հասնելու համար գյուղաբնակ տնային տնտեսությունների մեծ մասն օգտվում է մեքենայից կամ ավտոբուսից: Ավելի մանրամասն տվյալները բերված են Աղյուսակ 4.14-ում:

Աղյուսակ 4.14. Հայաստան. Գյուղական բնակավայրերում ծառայություններ տրամադրող հաստատություններ հասնելու համար օգտագործվող երթևեկության միջոցներ, 2016թ.

(տոկոսներով)

Ծառայություններ տրամադրող հաստատություններ	Ընդամենը	Մեքենա	Ավտոբուս/ Միկրոավտոբուս	Այլ (ոտքով, տաքսի, սայլ, հեծանիվ, մոտոցիկլ, ձի, ավանակ)
Բուժկետ	100	10.1	3.7	86.2
Հիվանդանոց	100	70.4	8.7	20.9
Դեղատուն	100	27.4	27.9	44.7
Գյուղապետարան	100	9.0	0.3	90.7
Նախադպրոցական հաստատություն	100	14.7	17.9	67.4
Միջնակարգ դպրոց	100	10.3	3.5	86.2
Գյուղարտադրանքի վաճառքի շուկա	100	44.4	52.6	3.0
Բանկ/ֆինանսական ծառայություն	100	42.6	54.1	3.3

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Գլուխ 5. Մանկական աղքատություն

5.1. Մանկական աղքատություն

Սույն գլխում գնահատվում է մանկական աղքատությունն ըստ սպառման ագրեգատի, նյութական և կացարանային կարիքավորության, սոցիալական ապահովության նպաստների դերն աղքատությունը մեղմելու գործում: Ներկայացված են նաև 2016թ.-ի հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված «Երեխաների կարիքները» հետազոտության արդյունքները:

2016թ.-ին մինչև 18 տարեկան երեխաների 2.0%-ը ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 34.2%-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 1.8 և 29.4%-ը (Աղյուսակ 5.1): Այսպիսով, երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ, քան ամբողջ բնակչությունը: 2016թ.-ին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 24.0%-ը ստացել է ընտանեկան նպաստ, այդ թվում՝ ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 34.7%-ը, ծայրահեղ աղքատների՝ 50.3%-ը և ոչ աղքատների՝ 18.5%-ը:

2016թ.-ի տվյալները ցույց են տալիս մանկական աղքատության տարբերություններն ըստ սեռի. աղքատ է աղջիկների 36.1 և տղաների՝ 32.4%-ը (բոլոր երեխաների 34.2%-ը): Մանկական աղքատությունն ըստ տարածաշրջանների. քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 2.1%՝ գյուղական բնակավայրերում բնակվող երեխաների 1.9%-ի համեմատ, իսկ ընդհանուր աղքատության մակարդակը, համապատասխանաբար 33.1%՝ 36.0%-ի համեմատ:

Աղյուսակ 5.1. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը 2016թ.-ին

(տոկոսներով)

	0-18 տարեկան երեխաները	այդ թվում		Ամբողջ բնակչությունը (համեմատության համար)
		աղջիկներ	տղաներ	
Ծայրահեղ աղքատություն	2.0 (0.4) {1.2; 2.8}	2.2 (0.5) {1.3; 3.1}	1.8 (0.5) {0.9; 2.7}	1.8 (0.3) {1.3; 2.3}
Ընդհանուր աղքատություն	34.2 (1.5) {31.2; 37.1}	36.1 (1.7) {32.7; 39.4}	32.4 (1.7) {29.2; 35.7}	29.4(1.2) {27.1; 31.7}

Աղբյուրը. *SSՀԱՀ 2016թ.*

Մանկական աղքատության ցուցանիշների միտումները 2008-2016թթ.-ին բերված են Աղյուսակ 5.2-ում, որտեղից երևում է, որ մանկական աղքատության և այդ թվում՝ ծայրահեղ աղքատության մակարդակները 2016թ.-ին դեռ չեն հասել 2008թ.-ի մակարդակին (համապատասխանաբար՝ տարբերությունը 4.4 և 0.4 %-ային կետ):

Աղյուսակ 5.2. Հայաստան. Մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2016թթ.-ին*

(տոկոսներով)

	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ
2008թ.	1.6	29.8	70.2
2009թ.	3.8	35.7	64.3
2010թ.	3.7	41.4	58.6
2011թ.	4.7	41.9	58.1
2012թ.	3.3	36.2	63.8
2013թ.	3.3	37.3	62.7
2014թ.	3.3	34.0	66.0
2015 թ.	2.5	33.7	66.3
2016թ.	2.0	34.2	65.8

Աղբյուրը. *SSՀԱՀ 2008-2016թթ.*

*Համադրելիության բերելու նկատառումով ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ 2009թ.-ին կիրառված մեթոդաբանության:

Աղքատության միջին ցուցանիշների հետևում թաքնված է էական կախվածությունը տնային տնտեսության տարբեր բնութագրիչներից¹: Մանկական աղքատության ցուցանիշներն էապես տատանվում են՝ կախված տնային տնտեսությունում երեխաների թվաքանակից, կրտսեր երեխայի տարիքային խմբից, ինչպես նաև տնային տնտեսության գլխավորի բնութագրիչներից, այդ թվում՝ սեռից, կրթական մակարդակից և զբաղվածության կարգավիճակից: Զգալի տատանումներ են առաջացնում նաև տնային տնտեսության աշխատող անդամների մասնաբաժինը և բնակության վայրը:

Բազմանդամ ընտանիքների երեխաների աղքատ լինելու հավանականությունն ավելի բարձր է: Մինչև 18 տարեկան երեք կամ ավելի երեխա ունեցող ընտանիքներում աղքատ է երեխաների 44.6%-ը (բոլոր երեխաների մեջ 34.2%-ի համեմատ), իսկ մեծ ընտանիքներում ծայրահեղ աղքատ է երեխաների 3.8%-ը (բոլոր երեխաների 2.0 %-ի համեմատ) (Աղյուսակ 5.3):

Տարիքով ավելի փոքր երեխաների աղքատ լինելու հավանականությունն ավելի բարձր է: Աղքատության ռիսկն ավելի մեծ է այն ընտանիքների երեխաների շրջանում, որոնցում կրտսեր երեխան հինգ տարեկան է կամ ավելի փոքր: Նշված ընտանիքներում աղքատ է երեխաների 36.3 %-ը, մինչդեռ այն ընտանիքներում, որոնցում կրտսեր երեխան 6-14 տարեկան է, աղքատ է երեխաների 32.2%-ը: Ծայրահեղ աղքատության գծի համեմատ կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ծայրահեղ աղքատության մակարդակն ամենաբարձրն է 15-18 տարեկան կրտսեր երեխաներ ունեցող ընտանիքների շրջանում (3.2%), մինչդեռ այն ընտանիքներում, որոնցում կրտսեր երեխան 6-14 տարեկան է, այն ամենացածրն է (1.7%):

Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում երեխաների աղքատ լինելու հավանականությունը բարձր է: Երեխաների ընդհանուր թվաքանակի մոտ մեկ քառորդը (24.3%) ապրում է կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում, որոնց 41.6%-ն աղքատ է, իսկ տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում այն կազմում է 31.8%:

Մանկական աղքատության վրա ազդող կարևոր գործոններից է նաև տնային տնտեսության գլխավորի ամուսնական կարգավիճակը: Ամուրի (չամուսնացած), այրի կամ ամուսնալուծված գլխավորով տնային տնտեսություններում ապրող երեխաների աղքատ լինելու հավանականությունն ավելի բարձր է (40.8%), քան ամուսնացած կամ համատեղ բնակվողներինը (32.5%):

Աղքատության ռիսկը նվազում է, երբ երեխան ապրում է այնպիսի տնային տնտեսությունում, որտեղ գլխավորի կրթական մակարդակը բարձր է:

Աղքատ լինելու հավանականությունն էապես ավելի բարձր է այն երեխաների շրջանում, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնց գլխավորն ունի ոչ լրիվ միջնակարգ կրթություն (47.9%), կրթություն չունի կամ ունի տարրական կրթություն (42.5%), որոնց գլխավորն ունի միջնակարգ կրթություն (39.3%), միջին մասնագիտական կրթություն (32.7%), համեմատ այն երեխաների, որոնք բնակվում են այնպիսի տնային տնտեսություններում, որտեղ գլխավորն ունի բարձրագույն կրթություն (19.3%):

¹ Քանի որ 2016 թ.-ի ընտրանքում հաշմանդամությամբ երեխա ունեցող տնային տնտեսությունների չկշռված դեպքերի թիվը 25-ից պակաս է, այդ տվյալների վերլուծությունը սույն զեկույցում չի ներկայացվում:

Ծայրահեղ աղքատության ռիսկն ամենաբարձրն է այն երեխաների շրջանում, որոնք բնակվում են ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողի գլխավորությամբ տնային տնտեսություններում:

Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության կարգավիճակը նույնպես մանկական աղքատությունը կանխորոշող կարևոր գործոն է:

Թե՛ աղքատության, թե՛ ծայրահեղ աղքատության ռիսկն ամենացածրն է այն տնային տնտեսություններում բնակվող երեխաների մոտ, որոնց գլխավորը վերջին յոթ օրվա ընթացքում կատարել է շահութաբեր որևէ աշխատանք: Այսպես, այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնց գլխավորն աշխատում է, աղքատությունը կազմում է 29.5%՝ չաշխատողների 40.6%-ի համեմատ: Հարկ է նշել, որ բոլոր երեխաների 42%-ն ապրում է այն տնային տնտեսություններում, որտեղ գլխավորը չի աշխատում:

Տնային տնտեսության չափահաս անդամներից աշխատանք ունեցողների թվաքանակը նույնպես ազդում է մանկական աղքատության մակարդակի վրա:

Աղքատության ռիսկն ամենաբարձրն է այն երեխաների շրջանում, որոնց տնային տնտեսություններում 19-60 տարեկան չափահաս անդամներից և ոչ մեկը չի աշխատում (46.8%): Ծայրահեղ աղքատության ռիսկն ամենացածրն է այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնց անդամներից աշխատանք ունեն ոչ միայն չափահաս անդամները (0.7%): Պետք է նշել, որ երեխաների թվաքանակի գրեթե կեսը (44.5%) ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, ուր աշխատում են ոչ բոլոր չափահաս անդամները (19-60 տարեկան):

Աղյուսակ 5.3. Հայաստան. Աղքատության մակարդակը, խորությունը և կառուցվածքն ըստ տնային տնտեսության տեսակի 2016թ.-ին

(տոկոսներով)

	Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը	Երեխաների ընդհանուր աղքատության մակարդակը	Աղքատության խորությունը	%-ն աղքատ երեխաների շրջանում	%-ն բոլոր երեխաների շրջանում
Մինչև 18 տարեկան երեխաների թվաքանակը					
Մեկ	0.9	25.7	3.4	15.6	20.7
Երկու	1.5	31.9	4.6	47.8	51.2
Երեք կամ ավելի	3.8	44.6	7.4	36.6	28.1
Մեռք					
Աղջիկ	2.2	36.1	5.4	50.6	47.9
Տղա	1.8	32.4	4.9	49.4	52.1
Կրտսեր երեխայի տարիքը					
0-5	2.1	36.3	5.6	46.5	43.8
6-14	1.7	32.2	4.7	46.3	49.1
15-18	3.2	34.7	5.5	7.2	7.1
Չափահասների թվաքանակը (19 – 60 տարեկան)					
Զրո/մեկ	3.4	35.5	6.4	13.2	12.7
Երկու	1.7	31.1	4.4	46.9	51.6
Երեք	1.8	36.0	5.8	17.3	16.4
Չորս կամ ավելի	2.0	40.1	5.9	22.7	19.3
Տնային տնտեսության թոշակի անցած անդամների թվաքանակը					
Զրո	1.5	31.7	4.6	62.1	67.0
Մեկ	3.2	38.1	6.3	27.2	24.4
Երկու կամ ավելի	2.6	42.5	5.9	10.7	8.6
Հաշմանդամ չափահասների թվաքանակը					
Զրո	2.0	33.1	5.0	82.6	85.2

	Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը	Երեխաների ընդհանուր աղքատության մակարդակը	Աղքատության խորությունը	%-ն աղքատ երեխաների շրջանում	%-ն բոլոր երեխաների շրջանում
Մեկ կամ ավելի	2.0	40.6	6.4	17.5	14.8
Հաշմանդամ երեխաների թվաքանակը					
Զրո	2.0	34.3	5.2	98.6	98.3
Մեկ կամ ավելի	*	*	*	*	*
Տնային տնտեսության գլխավորի սեռը (ըստ առկա բնակչության)					
Արական	1.2	31.8	4.5	70.5	75.7
Իգական	4.4	41.6	7.3	29.5	24.3
Տնային տնտեսության գլխավորի ամուսնական կարգավիճակը					
Ամուսնացած / համատեղ բնակվող	1.6	32.5	4.6	68.0	72.7
Ամուսնացած չի եղել /այրի/ ամուսնալուծված	3.9	40.8	6.9	32.0	27.3
Տնային տնտեսության գլխավորի կրթության մակարդակը					
Տարրական և ցածր	0.6	42.5	7.2	2.1	1.7
Թերի միջնակարգ	3.6	47.9	8.6	10.3	7.9
Միջնակարգ ընդհանուր	2.6	39.3	6.0	48.9	42.6
Միջնակարգ մասնագիտական	2.2	32.7	4.8	22.1	23.1
Բարձրագույն	0.7	19.3	2.1	9.6	16.7
Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության կարգավիճակը					
Չի աշխատել հետազոտությանը նախորդող 7 օրերի ընթացքում	2.2	40.6	6.6	50.1	42.1
Աշխատել է հետազոտությանը նախորդող 7 օրերի ընթացքում	1.8	29.5	4.1	49.9	57.9
Տնային տնտեսության չափահասների (19-60 տարեկան) զբաղվածության կարգավիճակը					
Որևէ չափահաս չի աշխատում	4.4	46.8	8.8	15.8	11.5
Ոչ բոլոր չափահասներն են աշխատում	2.0	36.0	5.4	46.9	44.5
Բոլոր չափահասներն աշխատում են	1.7	28.7	4.0	28.8	34.4
Աշխատում են ոչ միայն չափահասները	0.7	30.5	3.6	8.5	9.6
Ընդամենը	2.0	34.2	5.2	100	100

Աղբյուրը. *SSYU2 2016թ.*

Նշում: Աստղանիշը ցույց է տալիս, որ ցուցանիշը հիմնված է 25-ից պակաս չկշռված դեպքերի վրա:

Մանկական աղքատության մակարդակն էապես տարբերվում է ըստ մարզերի: Աղյուսակ 5.4-ում ներկայացված են մանկական աղքատության ցուցանիշներն ըստ ք.Երևանի և հանրապետության 10 մարզերի: Մարզերի միջև տարբերությունները զգալի են թե՛ ծայրահեղ, թե ընդհանուր աղքատության առումով: Ծայրահեղ մանկական աղքատությունը տատանվում է ամենացածր՝ 0.0%-ից (Արագածոտնի մարզ) մինչև ամենաբարձր՝ 3.7% (Շիրակի մարզ): Նմանատիպ միտում է նկատվում նաև երեխաների աղքատության ընդհանուր մակարդակի առումով: Արագածոտնում երեխաների աղքատության մակարդակն ամենացածրն է՝ 11.7%, իսկ ամենաբարձրը Շիրակի մարզում է՝ 50.9%:

Աղյուսակ 5.4. Հայաստան. Աղքատության մակարդակը, պակասուրդը և կառուցվածքն ըստ մարզերի 2016թ.-ին

(տոկոսներով)

	Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը	Երեխաների ընդհանուր աղքատության մակարդակը	Աղքատության խորությունը	%-ն աղքատ երեխաների շրջանում	%-ն բոլոր երեխաների շրջանում
Երևան	1.8	27.4	4.3	24.7	30.9
Արագածոտն	0.0	11.7	1.6	1.5	4.3
Արարատ	1.7	35.6	4.2	8.5	8.2
Արմավիր	1.7	34.4	5.2	9.9	9.8
Գեղարքունիք	1.1	40.0	4.3	4.9	4.2
Լոռի	3.4	39.3	6.0	12.7	11.0
Կոտայք	1.3	42.6	5.0	14.5	11.6
Շիրակ	3.7	50.9	12.0	11.8	7.9
Սյունիք	1.5	29.1	2.9	3.9	4.6
Վայոց Ձոր	1.8	24.4	4.2	1.7	2.3
Տավուշ	3.1	40.0	6.1	5.9	5.0
Ընդամենը	2.0	34.2	5.2	100	100

Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

5.2. Նյութական զրկանքներ (կարիքավորություն)

Ի լրումն ըստ սպառման աղքատության վերլուծության, սույն բաժնում դիտարկված են Հայաստանում երեխաների նյութական չքավորության խնդիրները: Նյութական չքավորությունը չափվում է տնային տնտեսությունում երկարաժամկետ օգտագործման ապրանքների բացակայությամբ: Վերլուծության մեջ ներառվել են երկարաժամկետ օգտագործման հետևյալ 9 ապրանքները՝ սառնարան, լվացքի մեքենա, բջջային հեռախոս, փոշեկուլ, տեսամագնիտոֆոն, լուսանկարչական ապարատ, ատլիոն համակարգ, ավտոմեքենա և համակարգիչ: Այս ապրանքներն ընտրվել են, քանի որ 2009-2016 թթ-ին տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության մասնակից տնային տնտեսությունների առնվազն 10%-ը դրանցից ունեցել է: Բայց և այնպես, պարզ չէ, թե արդյո՞ք տնային տնտեսություններն այդ ապրանքները չունեն ֆինանսական խնդիրների, թե՞ ցանկության բացակայության պատճառով:

Աղքատ երեխաների շրջանում՝ երեխաների ընդհանուր թվաքանակի համեմատ, զգալիորեն ավելի բարձր է երկարաժամկետ օգտագործման վերոհիշյալ ապրանքներից որևէ մեկը չունեցող տնային տնտեսություններում ապրելու հավանականությունը: Ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում թվարկված ապրանքներից որևէ մեկը չունենալու հավանականությունն ամենաբարձրն է: Այսպես օրինակ՝ եթե երեխաների ընդհանուր թվաքանակի 2.5%-ն է ապրում սառնարան չունեցող տնային տնտեսություններում, ապա աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների՝ համապատասխանաբար 4.7 և 21.5%-ն է ապրում նշված ապրանքատեսակը չունեցող տնային տնտեսություններում: Կամ, երեխաների ընդհանուր թվաքանակի 57.5%-ն է ապրում ավտոմեքենա չունեցող տնային տնտեսություններում, մինչդեռ նույն ցուցանիշն աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում կազմում է համապատասխանաբար՝ 78.3 և 98.8%:

Աղյուսակ 5.5. Հայաստան. Երկարաժամկետ օգտագործման ապրանքների բացակայությունը, 2016թ.-ին

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Սառնարան	2.5	4.7	21.5
Լվացքի մեքենա	3.5	7.4	16.9
Բջջային հեռախոս	0	0	0
Փոշեկոլ	26.4	35.9	55.8
Տեսամագնիտոֆոն	78.0	87.6	99.1
Լուսանկարչական ապարատ	66.1	75.5	87.9
Առուի խամակարգ	68.1	76.9	94.1
Ավտոմեքենա	57.5	78.3	98.8
Համակարգիչ	23.1	39.5	70.9

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Աղքատ և ոչ աղքատ երեխաների միջև կարիքավորության մակարդակի տարբերություններն էական են: Երեխաների ընդհանուր թվաքանակի 4.8%-ն է ապրում նշված երկարաժամկետ օգտագործման ապրանքներից բոլորն ունեցող տնային տնտեսություններում, այն դեպքում, երբ աղքատ երեխաների համար այդ ցուցանիշը կազմում է 0.9%, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների համար՝ 0%: (Աղյուսակ 5.6): Որպեսզի կարիքավորության ցուցանիշը համադրելի լինի մանկական՝ ըստ սպառման աղքատության հաշվարկված 34.2% ցուցանիշին, աղքատության գիծ է համարվում թվարկված ապրանքներից չորս կամ ավելի ապրանքների բացակայությունը: Այսպիսով ստացվում է, որ երեխաների ընդհանուր թվաքանակի 44.2%-ը գտնվում է նյութական կարիքավորության մեջ: Աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների թվում նյութական կարիքավորությունն ավելի բարձր է և կազմում է, համապատասխանաբար՝ 63.4 և 88.5%:

Աղյուսակ 5.6. Հայաստան. Երկարաժամկետ օգտագործման ինն ապրանքներից քանիսն առկա չեն տնային տնտեսությունում, 2016թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
0 (բոլոր 9 առկա)	4.8	0.9	0.0
1	11.4	5.2	0.0
2	16.3	10.5	2.4
3	23.3	20.0	9.1
4	21.2	23.2	7.9
5	13.2	19.8	33.1
6	7.8	15.7	22.8
7	1.6	3.6	18.6
8	0.4	1.1	6.1
9	-	-	-

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Այս մեթոդաբանության սահմանափակումն այն է, որ պարզ հաշվարկի ինդեքսի մեջ ներառված ապրանքները կարող են հավասարապես կարևոր չլինել տնային տնտեսության բարօրության տեսակետից, մինչդեռ 2016թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության միջոցով հնարավոր չէ որոշել բոլոր

նշված երկարաժամկետ օգտագործման ապրանքների ցանկալիության կամ կարևորության աստիճանը: Այսինքն մենք չունենք տվյալներ բոլոր ապրանքների վերաբերյալ, և չենք կարող ասել, թե արդյոք տվյալ ապրանքը չունենալու պատճառը տնային տնտեսության համար դրա անմատչելիությունն է, թե համապատասխան ցանկության բացակայությունը: Այս բացը մասամբ շտկվում է կշռված կարիքավորության ինդեքսի կիրառմամբ, որով ենթադրվում է, որ տնային տնտեսությունները համեմատաբար ավելի կարիքավոր են, եթե նրանք չունեն այլ տնային տնտեսությունների մեծ մասի ունեցած ապրանքը: Օրինակ, սառնարան չունենալու կշիռն ավելի փոքր է, քան համակարգիչ չունենալունը, քանի որ սառնարան ունեցող տնային տնտեսությունների քանակը գերազանցում է համակարգիչ ունեցողներին: Յուրաքանչյուր ապրանքի բացակայության դիմաց տրվող 1 միավորը բազմապատկվում է կշռման ընտրանքի մեջ մտնող և համապատասխան ապրանքն ունեցող տնային տնտեսություններում ապրող երեխաների համամասնությամբ, ապա, յուրաքանչյուր տնային տնտեսության բոլոր ապրանքների դիմաց ստացած միավորները գումարվում են և բաժանվում ապրանքների ընդհանուր թվի, այսինքն՝ 9-ի: Ստացվող միավորը բազմապատկվում է 100-ով՝ շարունակվող փոփոխական ստանալու նպատակով, որի արժեքը տատանվում է 0-ից (բոլոր ապրանքներն առկա են) մինչև 100 (բացակայում են բոլոր այն ապրանքները, որոնք մյուս բոլոր տնային տնտեսություններն ունեն):

Կշռված կարիքավորության միավորը միջին հաշվով ավելի բարձր է աղքատ երեխաների շրջանում: Երեխաների ընդհանուր թվաքանակի միջին տոկոսը 10.5 է, մինչդեռ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում միջին տոկոսըը կազմում է համապատասխանաբար՝ 13.1 և 18.6 (Աղյուսակ 5.7): Դա վկայում է այն մասին, որ աղքատ երեխաներն ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնցում բացակայում են ոչ աղքատ տնային տնտեսություններում սովորաբար հանդիպող ապրանքները:

Աղյուսակ 5.7. Հայաստան. Տարածվածությամբ կշռված կարիքավորության միջին միավորը և կարիքավորության մակարդակը 2016թ.-ին

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Միջին	10.5	13.1	18.6
Ստանդարտ շեղում	6.0	6.4	7.5

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

5.3. Կացարանային կարիքավորություն

Կացարանային հիմնախնդիրները կարող են բացասաբար ազդել երեխաների առողջության, անվտանգության, կրթության և սոցիալական զարգացման վրա: 2016թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը ներառում է որոշ հարցեր կացարանային պայմանների մասին, ներառյալ կոմունալ ծառայությունների և օգտագործվող սենյակների քանակի, ինչպես նաև հարցեր՝ կացարանային հիմնախնդիրների և կացարանային հարմարությունների որակի վերաբերյալ հարցվողների կարծիքի մասին:

Աղքատ երեխաները հաճախ բնակվում են կացարանային կարևոր հարմարություններից զուրկ տներում: Աղքատ տնային տնտեսությունների երեխաներն ավելի հաճախ բնակվում են կարևոր հարմարություններից զուրկ՝ հոսող տաք ջուր, կենտրոնացված գազամատակարարում, ստացիոնար հեռախոս, լոգարան կամ ցնցուղ

չունեցող կացարաններում² (Աղյուսակ 5.8): Ծայրահեղ աղքատ երեխաներն ավելի հաճախ, քան աղքատ երեխաները, զրկված են այնպիսի կացարանային հարմարություններից, ինչպիսիք են հոսող տաք ջուրը, ստացիոնար հեռախոսը, կենտրոնացված գազամատակարարումը, կենտրոնացված կոյուղու համակարգին միացումը: Հարկ է նշել, որ ներկայումս ստացիոնար հեռախոսները դուրս են մղվում բջջային հեռախոսների կողմից, որոնց մատչելիությունը տնային տնտեսություններում կազմում է 97%: Մյուս կողմից ծայրահեղ աղքատ երեխաները բոլոր երեխաների համեմատ ավելի հաճախ են զրկված ստորև թվարկված բոլոր հարմարություններից (Աղյուսակ 5.8):

Աղյուսակ 5.8. Հայաստան. Կացարանային հարմարությունները բացակայում են կամ չեն գործում, 2016թ.

(տոկոսներով)

Բնակարանում չկա	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Կենտրոնացված ջրամատակարարում	2.9	3.8	5.2
Հոսող տաք ջուր	18.2	28.7	53.7
Միացում կենտրոնացված կոյուղու համակարգին	32.2	33.6	42.9
Կենտրոնացված գազամատակարարում	14.4	20.0	43.3
Լոգարան կամ ցնցուղ	7.4	12.3	35.0
Խոհանոց	2.2	4.0	16.1
Հեռախոս ստացիոնար	20.8	26.0	48.9

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Աղքատ երեխաների շրջանում, բոլոր երեխաների համեմատ, ավելի բարձր է կացարանային մեծաթիվ հարմարություններ չունենալու հավանականությունը: Երեխաների ընդհանուր թվաքանակի 52%-ն ապրում է թվարկված բոլոր հարմարություններն ունեցող տներում, մինչդեռ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 45 և 31% (Աղյուսակ 5.9): Ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում բավականին բարձր է կացարանային 7 հարմարություններից 3-ի բացակայությունը (տեսակարար կշիռը՝ 22%), միաժամանակ կացարանային բոլոր յոթ հարմարությունների բացակայություն չի գրանցվել: Միննույն ժամանակ, 7 հարմարությունների բացակայություն գրանցվել է ըստ կենսամակարդակի բաշխվածության աղքատ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում (0.2%), ինչն էլ ազդում է բոլոր երեխաների համար ցուցանիշի վրա (0.1%): Որպեսզի կացարանային կարիքավորության ցուցանիշը համադրելի լինի մանկական՝ ըստ սպառման աղքատության 2016թ.-ի ընդհանուր ցուցանիշին (34.2%), կացարանային կարիքավորության գիծ է համարվում կացարանային երկու կամ ավելի հարմարություններ չունենալը: Այս սահմանման արդյունքում ստացվում է, որ երեխաների ընդհանուր թվաքանակի 22.5%-ը զրկված է կացարանային նվազագույն քանակի հարմարություններից: Աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում ցուցանիշն էապես ավելի բարձր է, համապատասխանաբար՝ 30.2% և 55.3%:

² Կենցաղային հարմարությունը բացակայում է կամ չի գործում:

Աղյուսակ 5.9. Հայաստան. Կացարանային հարմարություններից քանիսն են բացակայում կամ չեն գործում, 2016թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
0	51.8	45.2	31.2
1	25.7	24.6	13.5
2	10.7	12.1	6.6
3	6.8	9.3	22.3
4	3.1	5.0	12.3
5	1.3	2.6	7.0
6	0.5	1.0	7.1
7	0.1	0.2	-

Աղբյուրը. *SSՀԱՀ 2016թ.*

Աղքատ երեխաների կացարանային ավելի վատ պայմաններում ապրելու հավանականությունը նույնպես բարձր է: Ըստ սպառման տնային տնտեսությունների երեխաների կացարանի հետ կապված խնդիրներ ունենալու հավանականությունը, ընդհանուր առմամբ, ավելի բարձր է, քան բոլոր երեխաներինը (Աղյուսակ 5.10): Օրինակ, անբավարար ջեռուցման խնդիր ունեցող տնային տնտեսություններում է բնակվում աղքատ երեխաների 56 և ծայրահեղ աղքատ երեխաների 48%-ը՝ երեխաների ընդհանուր թվաքանակի շրջանում արձանագրված 44%-ի համեմատ: Խոնավ տնային տնտեսություններում է բնակվում աղքատ երեխաների 36 և ծայրահեղ աղքատ երեխաների 42%-ը՝ երեխաների ընդհանուր թվաքանակի շրջանում արձանագրված 31%-ի համեմատ: Մինևույն ժամանակ, ինչպես աղքատ և ծայրահեղ աղքատ, այնպես էլ բոլոր երեխաների շրջանում 10%-ից պակասն ունեն հետևյալ խնդիրները՝ աղմուկ հարևաններից և շրջապատից, երթևեկության խցանում և արդյունաբերական արտանետում:

Աղյուսակ 5.10. Հայաստան. Կացարանի հետ կապված խնդիրները, 2016թ.

(տոկոսներով)

	Կացարանի հետ կապված խնդիրները	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
1.	Մակերեսի սակավություն	34.7	41.1	56.9
2.	Աղմուկ հարևաններից և շրջապատից	3.9	2.8	0.0
3.	Վատ լուսավորվածություն	13.0	18.6	26.1
4.	Ջեռուցման պակաս	44.0	55.7	48.3
5.	Խոնավություն	30.7	35.9	42.3
6.	Կաթող տանիք	14.9	19.0	28.5
7.	Քանդված պատեր և հատակ	24.4	37.5	59.8
8.	Քանդված փեղկեր և դռներ	21.3	31.4	40.9
9.	Երթևեկության խցանում	3.3	1.7	7.6
10.	Արդյունաբերական արտանետում	4.1	5.2	3.5
11.	Վերելակը հաճախակի չի գործում	22.8	24.0	19.0
12.	Զրամատակարարումը վատ է	15.0	18.4	20.6
13.	Աղբահանությունը վատ է	19.1	23.3	21.5
14.	Բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և բակի սպասարկումը վատ է	40.2	50.0	37.4
15.	Այլ	34.5	37.2	39.4

Աղբյուրը. *SSՀԱՀ 2016թ.*

Բացի այդ, երեխաների ընդհանուր թվաքանակի համեմատ՝ աղքատ երեխաները կացարանի հետ կապված ավելի մեծ թվով խնդիրներ ունեն: Ծայրահեղ աղքատ երեխաների 11%-ը, աղքատ երեխաների 8%-ը և բոլոր երեխաների 15%-ն ապրում է կացարանային վերոհիշյալ 15 խնդիրներից որևէ մեկը չունեցող տնային տնտեսություններում (Աղյուսակ 5.11):

Ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների երեխաների շրջանում ավելի ցածր է կացարանային 1-3 խնդիր ունեցող տնային տնտեսություններում բնակվելու և ավելի բարձր կացարանային 4 և ավելի խնդիր ունեցող տնային տնտեսություններում բնակվելու հավանականությունը: 9 կամ ավելի խնդիր ունեցող կացարաններում բնակվում է բոլոր երեխաների 1.3%-ը, աղքատ երեխաների 2.3%-ը, իսկ ծայրահեղ աղքատներից՝ 1.1%-ը: Որպեսզի կացարանային կարիքավորության ցուցանիշը համադրելի լինի մանկական՝ ըստ սպառման աղքատության 2016թ.-ի ընդհանուր ցուցանիշին (34.2%), կացարանային կարիքավորության գիծ է համարվում կացարանի հետ կապված չորս կամ ավելի խնդիրներ ունենալը (34.3%): Այս սահմանման արդյունքում ստացվում է, որ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների համապատասխանաբար՝ 48.7% և 59.8%-ն ունի կացարանային խնդիր:

Աղյուսակ 5.11. Հայաստան. Կացարանի հետ կապված խնդիրների քանակը, 2016թ.

(տոկոսներով)

Կացարանի հետ կապված խնդիրների քանակը	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
0	14.6	8.4	10.9
1	16.8	14.0	4.2
2	18.9	15.4	16.5
3	15.4	13.5	8.6
4	14.4	18.7	18.3
5	8.6	11.9	11.0
6	5.6	8.9	11.8
7	2.5	4.0	0.5
8	1.9	2.9	17.1
9	0.9	1.3	1.1
10	0.3	0.7	0.0
11-15	0.1	0.3	0.0

Աղբյուրը. *SSYUՆ 2016թ.*

Աղքատ երեխաները բնակվում են ավելի վատ համարվող կացարանային պայմաններում: Երեխաների ընդհանուր թվաքանակի 24%-ը բնակվում է կացարանային պայմանները վատ կամ շատ վատ համարող տնային տնտեսություններում, աղքատ երեխաների շրջանում այն կազմում է 33%, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում՝ 54%: Միննույն ժամանակ, երեխաների ընդհանուր թվաքանակի 61%-ը բնակվում է կացարանային պայմանները բավարար համարող տնային տնտեսություններում, իսկ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում այն կազմում է համապատասխանաբար՝ 58% և 41%: Ի հակադրություն բոլոր երեխաների լավ կամ շատ լավ համարվող կացարանային պայմաններ ունեցող տնային տնտեսություններում բնակվելու հավանականությանը, աղքատ երեխաների մոտ այն ցածր է 1.6 անգամ, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների մոտ՝ 2.5 անգամ:

Աղյուսակ 5.12. Հայաստան. Կացարանային պայմանները՝ հարցվողի սուբյեկտիվ գնահատմամբ, 2016թ.

(տոկոսներով)

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Լավ կամ շատ լավ	15.2	9.7	6.0
Բավարար	60.5	57.5	40.5
Վատ կամ շատ վատ	24.3	32.7	53.5

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Աղքատ երեխաների՝ գերբնակեցված կացարաններում բնակվելու հավանականությունն ավելի մեծ է: Հիմնական կացարանում մեկ շնչին բաժին ընկնող սենյակների (բացառությամբ խոհանոցի, լոգարանի և գուգարանի) միջին քանակը երեխաների ընդհանուր թվաքանակում ավելի բարձր է (0.61), քան աղքատ (0.60) կամ ծայրահեղ աղքատ (0.47) երեխաների շրջանում: Եթե մեկ շնչի հաշվով շեմը համարվի 0.43 կամ պակաս սենյակը, ապա երեխաների ընդհանուր թվաքանակի գերբնակեցման ցուցանիշը կկազմի 21%, աղքատ երեխաների շրջանում՝ 30%, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում՝ 49% (Աղյուսակ 5.13):

Աղյուսակ 5.13. Հայաստան. Մեկ շնչի հաշվով սենյակների միջին քանակը և գերբնակեցման աստիճանը, 2016թ.

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Մեկ շնչի հաշվով սենյակների միջին քանակը, (SD)	0.61 (0.32)	0.60 (0.25)	0.47 (0.19)
Գերբնակեցման աստիճանը. (տոկոսներով)	20.6	29.7	48.8

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Գերբնակեցված կացարաններում բնակվում է ոչ աղքատ երեխաների 16%-ը: Ամենաբարձր (49%) ցուցանիշն արձանագրվել է ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների երեխաների շրջանում (Աղյուսակ 5.14):

Աղյուսակ 5.14. Հայաստան. Գերբնակեցումն՝ ըստ աղքատության կարգավիճակի, 2016թ.

(տոկոսներով)

	Ոչ աղքատ երեխաներ	Աղքատ (առանց ծայրահեղ աղքատ երեխաների)	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Ոչ գերբնակեցված	84.1	71.5	51.2
Գերբնակեցված	15.9	28.5	48.8

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Նշում. Գերբնակեցման կարգավիճակի և աղքատության կարգավիճակի միջև փոխկապակցվածությունը վիճակագրական նշանակալիություն ունի. $p < 0.001$

5.4. Սոցիալական ապահովության նպաստների դերն աղքատությունը մեղմելու գործում

5.4.1. Կենսաթոշակներ

Կենսաթոշակներն ազդում են մանկական աղքատության միջին մակարդակի վրա: Երեխաների ընդհանուր թվաքանակի 43.5%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որոնց առնվազն մեկ անդամը, հարցմամբ ձեռք բերված տեղեկությունների համաձայն, ստանում է կենսաթոշակ: Աղյուսակ 5.15-ում ներկայացված է կենսաթոշակների ազդեցությունը երեխաների՝ ըստ սպառման աղքատության մակարդակի վրա: Եթե կենսաթոշակները հանվեն տնային տնտեսության ընդհանուր ամսական ծախսերից, և ստացված գումարը համարժեքացվի, ապա մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը 2.0%-ից կհասնի 10.2%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը՝ 34.2%-ից 38.9%-ի: Փաստորեն, կենսաթոշակային եկամուտը մեծ ազդեցություն ունի ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների վրա: Սպառման մեջ կենսաթոշակային եկամուտը հաշվի չառնելու դեպքում ծայրահեղ աղքատության մակարդակն ավելի քան հնգապատկվում է: Ենթադրվում է, որ կենսաթոշակային ողջ եկամուտը սպառվում է տնային տնտեսության կողմից:

Աղյուսակ 5.15. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը տարիքային կենսաթոշակի եկամտի հաշվարկով և առանց դրա, 2016թ.

(տոկոսներով)

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Կենսաթոշակով	Առանց կենսաթոշակի
Ծայրահեղ աղքատության գիծ	2.0	10.2
Աղքատության ընդհանուր գիծ	34.2	38.9

Աղբյուրը. SSYU2 2016թ.

Տարիքային կենսաթոշակը կարող է ազդել երեխայի աղքատ լինելու կամ չլինելու հանգամանքի վրա (միայն այն տնային տնտեսություններում, որոնցում ապրում է տարիքային կենսաթոշակ ստացող անդամ): Աղյուսակ 5.16-ում ներկայացված է, թե տարիքային կենսաթոշակն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ աղքատ (և ծերության կենսաթոշակ ստացող անդամ ունեցող) տնային տնտեսությունների վրա: Երբ այդ տնային տնտեսությունների սպառումից հանվեն կենսաթոշակները, ապա ծայրահեղ աղքատ չհամարվող երեխաների 18%-ը կդառնա ծայրահեղ աղքատ: Միննույն ժամանակ, աղքատ չհամարվող երեխաների 19%-ը կհամարվի աղքատ, եթե կենսաթոշակային եկամուտը հանվի տնային տնտեսության սպառումից:

Աղյուսակ 5.16. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը տարիքային կենսաթոշակի եկամտով և առանց դրա (այն տնային տնտեսություններում, որոնցում ապրում է տարիքային կենսաթոշակ ստացող անդամ), 2016թ.

(տոկոսներով)

	Հաղթահարել է ծայրահեղ աղքատության գիծը (կենսաթոշակով)	Հաղթահարել է ընդհանուր աղքատության գիծը (կենսաթոշակով)
Ծայրահեղ աղքատության գծից ներքև է (առանց կենսաթոշակի)	17.6	
Աղքատության ընդհանուր գծից ներքև է (առանց կենսաթոշակի)		19.4

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

5.4.2. Ընտանեկան նպաստները

Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտն ազդում է մանկական աղքատության միջին մակարդակի վրա: Երեխաների ընդհանուր թվաքանակի 24.0%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ստանում են ընտանեկան նպաստ: Աղյուսակ 5.17-ում ներկայացված է, թե ինչպես է ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտն ավելի շատ ազդում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակի, քան մանկական աղքատության ընդհանուր մակարդակի վրա: Տնային տնտեսության ընդհանուր ծախսերից ընտանեկան նպաստները հանելու դեպքում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը մոտավորապես եռապատկվում է՝ 2.0%-ից հասնելով 5.6%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակն աճում է 4.7%-ով՝ 34.2%-ից հասնելով 35.8%-ի: Դա վկայում է այն մասին, որ ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը շատ կարևոր է ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար:

Աղյուսակ 5.17. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակն ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա, 2016թ.

(տոկոսներով)

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Ընտանեկան նպաստով	Առանց ընտանեկան նպաստի
Ծայրահեղ աղքատության գիծ	2.0	5.6
Աղքատության ընդհանուր գիծ	34.2	35.8

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը կարող է ազդել նաև երեխայի աղքատ լինելու կամ չլինելու վրա (միայն ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններում): Աղյուսակ 5.18-ում ներկայացված է, թե ընտանեկան նպաստ ստացող և աղքատ չհամարվող տնային տնտեսություններում ինչպիսին կլինեք աղքատության մակարդակը, եթե նրանք չստանային ընտանեկան նպաստ: Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը նրանց սպառումից հանելու դեպքում, ծայրահեղ աղքատ չհամարվող երեխաների 16%-ը կհամարվի ծայրահեղ աղքատ: Միննույն ժամանակ, աղքատ չհամարվող երեխաների 13%-ը կհամարվի աղքատ, եթե ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը հանվի նրանց տնային տնտեսության սպառումից:

Աղյուսակ 5.18. Հայաստան. Մանկական աղքատության ցուցանիշներն ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա (ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններում), 2016թ.

(տոկոսներով)

	Հաղթահարել է ծայրահեղ աղքատության գիծը (ընտանեկան նպաստով)	Հաղթահարել է ընդհանուր աղքատության գիծը (ընտանեկան նպաստով)
Ծայրահեղ աղքատության գծից ներքև է (առանց ընտանեկան նպաստի)	15.7	
Աղքատության ընդհանուր գծից ներքև է (առանց ընտանեկան նպաստի)		13.4

Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

5.4.3. Երեխայի նպաստները

Երեխայի նպաստների տեսքով ստացվող եկամուտն ազդեցություն չունի մանկական աղքատության միջին ցուցանիշի վրա: Հետազոտության տվյալների համաձայն՝ երեխաների ընդհանուր թվաքանակի միայն 2.1%-ն է ապրում երեխայի նպաստ ստացող տնային տնտեսություններում: Աղյուսակ 5.19-ում ներկայացված է, թե մանկական աղքատության միջին ցուցանիշի վրա ինչպես է ազդում երեխայի նպաստը: Մանկական ծայրահեղ աղքատության մակարդակն առանց երեխայի նպաստի ընդհանրապես չի փոխվել, ինչպես նաև չի փոխվել ընդհանուր աղքատության մակարդակը, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ երեխայի նպաստ ստացող տնային տնտեսությունների թվաքանակը շատ փոքր է:

Աղյուսակ 5.19. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակը՝ երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա, 2016թ.

(տոկոսներով)

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Երեխայի նպաստով	Առանց երեխայի նպաստի
Ծայրահեղ աղքատության գիծ	2.0	2.0
Աղքատության ընդհանուր գիծ	34.2	34.2

Աղբյուրը. *SSYUZ 2016թ.*

Երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը որևէ ազդեցություն չունի երեխայի աղքատ լինելու կամ չլինելու հանգամանքի վրա (միայն երեխայի նպաստ ստացող տնային տնտեսություններում): Երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը նրանց սպառումից հանելու դեպքում ծայրահեղ աղքատ չհամարվող երեխաներից և ոչ մեկը ծայրահեղ աղքատ չի համարվի: Միննույն ժամանակ, աղքատ չհամարվող երեխաների 3.1%-ը կհամարվի աղքատ, եթե երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը հանվի նրանց տնային տնտեսության սպառումից:

Հաշվի առնելով երեխայի նպաստ ստացող ընտանիքների սակավաթվությունը, զարմանալի չէ, որ երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը չի ազդում մանկական աղքատության միջին մակարդակի վրա:

5.5. «Երեխաների կարիքները» մոդուլային հարցաթերթով հետազոտության հիմնական արդյունքները

Երեխաների աղքատությունն ավելի խորացված գնահատելու նպատակով, 2016թ.-ի հունվարի 1-ից հունիսի 30-ը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ, բոլոր տնային տնտեսություններում, որոնք նշված ժամանակաշրջանում ընդգրկվել են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) ընտրանքի մեջ, անց է կացրել «Երեխաների կարիքները» հատուկ մոդուլով հետազոտություն: Ընտրանքի չափը կազմել է 2 592 տնային տնտեսություն: Մոդուլի հարցերը վերաբերում են ոչ միայն երեխաների կարիքներին, այլև ներառական կրթությանը, երեխաների՝ ինչպես բոլոր, այնպես էլ մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող խնամատարությանը, հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկվածությանը հանրակրթական դպրոցում, երեխաների դաստիարակման մեթոդներին և այլն:

5.5.1. Երեխաների կարիքները

Մանկական աղքատության չափման մեկ այլ մոտեցում է երեխաների կարիքների գնահատումը: Նշված մոտեցման շրջանակում աղքատությունը դիտարկվում է սոցիալական և մշակութային տեսանկյուններից, քանի որ վերջիններս կարող են ավելի մեծ ազդեցություն թողնել երեխաների զարգացման վրա, քան նյութական կարիքները:

Բոլոր երեխաների ընդհանուր թվաքանակից առավել շատ բացասական պատասխաններ տրվել են տնից հեռու ամենամյա առնվազն մեկ շաբաթ սևողությամբ արձակուրդի անցկացման մասին հարցին՝ 67 %-ը (աղքատ երեխաներից՝ 72%-ը, ծայրահեղ աղքատ երեխաներից՝ 90%-ը) նման արձակուրդ չեն ունեցել: Չբավարարված կարիքներից երկրորդ տեղում է սպորտային ակումբ կամ նմանատիպ խմբակ ամիսն առնվազն մեկ անգամ այցելելը՝ 59 % (աղքատ երեխաներից՝ 68%-ը, ծայրահեղ աղքատ երեխաներից՝ 76%-ը): Երրորդ, չորրորդ և հինգերորդ տեղերում են գտնվում, համապատասխանաբար, երեխայի կողմից ամիսն առնվազն երկու անգամ ընկերներին ժամանցի չհրավիրելը՝ 56%, (աղքատ երեխաներից՝ 67%-ը, ծայրահեղ աղքատ երեխաներից՝ 86%-ը), երեխային ամիսն առնվազն երկու անգամ ընկերների կողմից ժամանցի չհրավիրելը՝ 52%, (աղքատ երեխաներից՝ 60%-ը, ծայրահեղ աղքատ երեխաներից՝ 86%-ը), երեխայի համար որևէ մանկական լրագիր, ամսագիր կամ նմանատիպ այլ պարբերական չգնելը՝ 52%, (աղքատ երեխաներից՝ 58%-ը, ծայրահեղ աղքատ երեխաներից՝ 78%-ը): Երբ չբավարարված կարիքները դիտարկվում են ըստ աղքատության մակարդակի, ապա պարզ է դառնում, որ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների մոտ՝ ոչ աղքատ երեխաների համեմատ, կարիքների անբավարարվածության աստիճանը հիմնականում ավելի մեծ է: Ծայրահեղ աղքատ երեխաների 88%-ը զրկված են ժամանցի համար պարագաներից, օրինակ հեծանիվ, խաղեր և այլն (ոչ աղքատ երեխաների 23%-ի համեմատ), 73%-ը՝ զրկված են սիրված զբաղմունքի (հոբբի) առարկաներից (ոչ աղքատ երեխաների 36%-ի դիմաց): Աղյուսակ 5.20-ում բերված է տնային տնտեսություններում երեխաների չբավարարված կարիքների մասնաբաժինն՝ ըստ աղքատության մակարդակի:

Աղյուսակ 5.20. Հայաստան. Տնային տնտեսություններում առկա 6-17 տարեկան երեխաների չբավարարված կարիքների մասնաբաժինն ըստ աղքատության մակարդակի, 2016թ.

(տոկոսներով)

Երեխաների կարիքները	Բոլոր երեխաները	Ոչ աղքատ երեխաներ	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Երեխային չեն տալիս ամենօրյա ծախսերի «գրպանի փող»	45.2	37.3	60.0	79.0
Երեխան չունի ուսման և տնային հանձնարարությունները կատարելու համար առանձին հարմար տեղ	23.1	19.1	30.7	51.5
Տնից դուրս չկա որևէ ապահով տեղ, որտեղ երեխան կարող է խաղալ	14.5	11.6	19.8	8.2
Երեխան չունի առարկաներ ժամանցի համար, օրինակ հեծանիվ, խաղեր և այլն	32.0	23.1	48.7	88.0
Երեխան չունի առարկաներ սիրած զբաղմունքի (հոբբի) համար	41.7	36.2	52.1	72.5
Երեխան չի այցելում սպորտային ակումբ կամ նմանատիպ խմբակ ամիսն առնվազն մեկ անգամ	59.0	54.4	67.5	75.9
Երեխան չի մասնակցում վճարովի դպրոցական էքսկուրսիաների և միջոցառումների	22.6	14.8	37.3	64.9
Երեխան չունի գրքեր, որոնք կարող է ընթերցել ազատ ժամանակ	11.1	9.8	13.5	50.3
Երեխայի համար չի գնվում որևէ մանկական լրագիր, ամսագիր կամ նմանատիպ այլ պարբերական	51.5	48.1	57.8	78.3
Երեխան ամենամյա առնվազն մեկ շաբաթ տևողությամբ արձակուրդ չի անցկացնում տնից հեռու	66.8	64.3	71.5	89.7
Երեխան ամիսն առնվազն երկու անգամ չի հրավիրվում ընկերների կողմից ժամանցի	52.2	47.8	60.4	85.6
Երեխան ամիսն առնվազն երկու անգամ չի հրավիրում ընկերներին ժամանցի	56.2	50.7	66.5	85.6
Երեխան չունի դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքներ	1.8	1.0	3.3	12.9
Երեխան չունի տարբեր զբաղմունքների համար նախատեսված կոշիկներ	11.9	6.7	21.7	45.5

Աղբյուրը. *SS4UL2 2016թ.*

Աղյուսակ 5.21-ում բերվում են երեխաների սոցիալական բացառումներին վերաբերող ցուցանիշները, որոնք լրացնում են դրամային և բազմաչափ աղքատության վերաբերյալ վերլուծությունը, ինչպես նաև վկայում են այս երեք տարբեր հասկացությունների միջև հստակ արտահայտված կապերի մասին: Բոլոր երեխաների ընդհանուր թվաքանակից առավել շատ պատասխանել են (58%), որ ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով, չեն կարողանում իրենց թույլ տալ օրական առնվազն մեկ անգամ ուտել մսով, հավով, ձկնով (կամ համարժեք բուսակերային) կերակուր, այդ թվում՝ աղքատ երեխաների շրջանում այդ ցուցանիշը կազմում է 76%, իսկ ծայրահեղ աղկատների շրջանում այն հասնում է 86%-ի: Ծայրահեղ աղքատ երեխաների 89%-ը չեն կարող իրենց թույլ տալ որոշ նոր հագուստներ ունենալ, 71%-ը՝ ստուգման նպատակով տարին առնվազն մեկ անգամ այցելել ատամնաբույժի, իսկ 61%-ը՝ ուտել թարմ մրգեր կամ բանջարեղեն օրական մեկ անգամ:

Աղյուսակ 5.21. Հայաստան. Տնային տնտեսություններում առկա 1-17 տարեկան երեխաների չբավարարված կարիքների մասնաբաժինը, ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով, ըստ աղքատության մակարդակի, 2016թ.

Երեխաների կարիքները	Բոլոր երեխաները	Ոչ աղքատ երեխաներ	Աղքատ երեխաներ	<i>(տոկոսներով)</i>
				Ծայրահեղ աղքատ երեխաներ
Երեխան ստուգման նպատակով տարին առնվազն մեկ անգամ չի այցելում ատամնաբույժի	46.1	42.3	53.4	71.1
Երեխան չունի որոշ նոր հագուստներ (չօգտագործված)	37.2	30.0	51.4	89.3
Երեխան չի ուտում թարմ մրգեր կամ բանջարեղեն օրական մեկ անգամ	25.5	21.3	33.9	60.9
Երեխան չի սնվում օրական երեք անգամ	10.7	9.4	13.3	33.0
Երեխան օրական առնվազն մեկ անգամ չի ուտում մսով, հավով, ձկնով (կամ համարժեք բուսակերային) կերակուր	58.1	48.9	76.1	85.6
Երեխան չի տոնում հատուկ առիթներ (ծնունդ, կրոնական միջոցառումներ)	15.5	9.1	27.9	69.1

Աղբյուրը. SSYUՀ 2016թ.

5.5.2. Բնակչության կարծիքը խնամատարության, սոցիալական ծառայությունների գործունեության և ներառական կրթության վերաբերյալ

Հետազոտության ընթացքում տնային տնտեսությունների 18 և բարձր տարիքի անդամներից հարցվել է կարծիք խնամատարության և ներառական կրթության վերաբերյալ: Աղյուսակ 5.22-ում բերվում են խնամատարության և ներառական կրթության մասին վերոնշված տարիքի տնային տնտեսությունների անդամների կարծիքներն ըստ աղքատության մակարդակի:

Բնակչության պատրաստակամությունն այլ երեխայի խնամատարությունը ստանձնելու խնդրում (դառնալ խնամատար ծնող) շատ ցածր է՝ ընդամենը 5.1%: Ստանձնել Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի խնամատարությունը համաձայն են հարցվածների 3.2%-ը, իսկ մտավոր հաշմանդամություն ունեցողի խնամատարությունը՝ միայն 2.5%: Ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների խնամատարություն ստանձնելու չհամաձայնված չափահաս բնակչության միայն 8%-ը կհամաձայնվի հաշմանդամություն ունեցող երեխային խնամատար ծառայություն մատուցել, եթե համայնքում առկա լինեն աջակցող /մասնագիտական, վերականգնողական ծառայություններ, և տրվի սահմանված վճարից ավելի բարձր գումար:

Չափահաս անդամների 13%-ն ընդունելի է համարում, երբ սոցիալապես անապահով ընտանիքը, ելնելով սոցիալական կամ տնտեսական վիճակից, երեխային հանձնում է հատուկ հանրակրթական հաստատություն կամ մանկատուն:

Հարցվածների մեծամասնությունը (70% ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում և 46% մտավոր հաշմանդամության պատճառով) ընդունելի չի համարում երեխային մանկատուն կամ հատուկ հանրակրթական հաստատություն հանձնելը, միաժամանակ մոտավորապես ամեն իններորդը (11.3%) ֆիզիկական և ամեն ութերորդը (12.9%) մտավոր հաշմանդամության պատճառով ընդունելի է համարում երեխային մանկատուն կամ հատուկ հանրակրթական հաստատություն հանձնելը: Հարցվածների 15.1%-ը մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում ընդունելի է համարում երեխային հանձնել հատուկ հանրակրթական հաստատություն, բայց ոչ մանկատուն, իսկ 1.8%-ը՝ մանկատուն, բայց ոչ հատուկ հանրակրթական հաստատություն:

Հարցվածների 40%-ը համաձայն է, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան հաճախի սովորական հանրակրթական դպրոց, իսկ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում այն կազմել է 71%: Հարցվածների 25%-ը համաձայն է, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան իրենց երեխայի հետ համատեղ սովորի նույն դասարանում, իսկ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի դեպքում՝ 40%-ը:

Աղյուսակ 5.22. Հայաստան. Տնային տնտեսությունների 18 և բարձր տարիքի անդամների կարծիքները մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ հարցերի վերաբերյալ ըստ աղքատության մակարդակի, 2016թ.

(տոկոսներով)

	Հետազոտված տնային տնտեսությունների չափահաս անդամների կարծիքը	այդ թվում		
		ոչ աղքատ	աղքատ	ծայրահեղ աղքատ
Կհամաձայնվեին ստանձնել այլ երեխայի խնամատարությունը (դառնալ խնամատար ծնող)	5.1	5.3	4.4	1.0
Կհամաձայնվեին ստանձնել մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի խնամատարությունը	2.5	2.6	2.1	-
Կհամաձայնվեին ստանձնել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի խնամատարությունը	3.2	3.5	2.4	-
Կհամաձայնվեին հաշմանդամություն ունեցող երեխային խնամատար ծառայություն մատուցել, եթե համայնքում առկա լինեին աջակցող /մասնագիտական, վերականգնողական ծառայություններ, և տրվեր սահմանված վճարից ավելի բարձր գումար:	8.0	8.6	6.5	8.7
Ընդունելի են համարում, երբ սոցիալապես անապահով ընտանիքը, ելնելով սոցիալական կամ տնտեսական վիճակից, երեխային հանձնում է հատուկ հանրակրթական հաստատություն կամ մանկատուն	12.6	14.1	8.7	4.1
<u>Ընդունելի են համարում, երբ ընտանիքը մտավոր հաշմանդամության պատճառով երեխային հանձնում է մանկատուն կամ հատուկ հանրակրթական հաստատություն</u>				
<i>այո, և մանկատուն, և հատուկ հանրակրթական հաստատություն</i>	12.9	14.7	8.5	5.0
<i>այո մանկատուն, բայց ոչ հատուկ հանրակրթական հաստատություն</i>	1.8	2.2	0.7	-
<i>այո հատուկ հանրակրթական հաստատություն, բայց ոչ մանկատուն</i>	15.1	14.5	16.8	24.1
<i>ոչ մանկատուն, ոչ հատուկ հանրակրթական հաստատություն</i>	46.0	44.2	50.6	41.4

	Հետազոտ-ված տնային տնտեսությունների չափահաս անդամների կարծիքը	այդ թվում		
		ոչ աղքատ	աղքատ	ծայրահեղ աղքատ
<i>Պժվարանում եմ պատասխանել</i>	24.2	24.5	23.4	29.5
<u>Ընդունելի են համարում, երբ ընտանիքը ֆիզիկական հաշմանդամության պատճառով երեխային հանձնում է մանկատուն կամ հատուկ հանրակրթական հաստատություն</u>				
<i>այո</i>	11.3	11.9	9.7	6.7
<i>ոչ</i>	69.5	67.7	74.1	68.5
<i>Պժվարանում եմ պատասխանել</i>	18.4	19.5	15.7	22.7
Համաձայն են, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան հաճախի սովորական հանրակրթական դպրոց	40.3	38.9	44.0	50.4
Համաձայն են, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան հաճախի սովորական հանրակրթական դպրոց	71.3	70.6	73.0	82.9
Համաձայն են, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան իրենց երեխաների հետ համատեղ սովորի նույն դասարանում	24.8	23.2	28.8	25.4
Համաձայն են, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան իրենց երեխաների հետ համատեղ սովորի նույն դասարանում	39.9	37.7	45.6	44.4

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

Բնակչության կարծիքը սոցիալական ծառայությունների վերաբերյալ. Հետազոտության ընթացքում տնային տնտեսությունների 18 և բարձր տարիքի անդամներից հարցվել է կարծիք սոցիալական ծառայությունների վերաբերյալ:

Բնակչության իրազեկվածությունը տնտեսական դժվարությունների հետ բախվելու դեպքում սոցիալական ծառայությունների տարածքային գրասենյակների գործունեության մասին բավականին բարձր է: Դժվարությունների առկայության դեպքում տարածքային գրասենյակներ կղիմեն 18 և բարձր տարիքի տնային տնտեսության անդամների 77%-ը: Սակայն բնակչության իրազեկվածությունը սոցիալական աշխատողների (դեպքի վարողների) գործունեության վերաբերյալ, որոնց օգնությանը կարող են դիմել ընտանեկան դժվարությունների հետ բախվելու դեպքում, կրկնակի ցածր է (34%): Մեծահասակ հարցվողների 40%-ը պատրաստ էին համագործակցել սոցիալական աշխատողի կամ սոցիալական դեպք վարողի հետ՝ լուծելու ընտանիքի և երեխաների հետ կապված խնդիրները:

Սոցիալական աշխատողից կամ սոցիալական դեպք վարողից ակնկալվող աջակցության առումով հարցվածների մեծ մասն ակնկալում են հետևյալ աջակցությունները. միայն ֆինանսական/նյութական (նպաստների, միանվագ վճարումների, բարեգործական օգնության բաշխում)՝ 23%, սոցիալ-հոգեբանական/վերականգնողական, իրավական՝ 4.5%, նշված երկուսը՝ 25%: Միննույն ժամանակ հարցվածների 28% ոչ մի աջակցություն չի սպասում:

Զնայաց նրան, որ մեծահասակ հարցվողների միայն 1.3%-ն է պատասխանել, որ իրենց ընտանիքին առնչվող որևէ դեպք վարվել է սոցիալական աշխատողի կամ սոցիալական դեպք վարողի կողմից (բացառությամբ ֆինանսական-նյութական աջակցությունից), սակայն բավարարվածության աստիճանը սոցիալական աշխատողի կամ դեպք վարողի կատարած աշխատանքից շատ բարձր է՝ 79%:

Ղաստիարակման մեթոդները. Հետազոտության ընթացքում երեխա ունեցող տնային տնտեսությունների մեծահասակ (18 և բարձր տարիքի) անդամները հարցվել են երեխայի ղաստիարակմանն ուղղված մեթոդների վերաբերյալ (Աղյուսակ 5.23):

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ.

- 43.3%-ը երեխաներին խրախուսել կամ շահավետ առաջարկ են արել լավ պահվածքի համար, օրինակ գովասանք, նվերներ, սիրած զբաղմունքի և ժամանցի ապահովում;

-47.2%-ը բացատրել են, թե ինչու է երեխայի վարքագիծը սխալ, փորձել են զբաղեցնել նրան որևիցե այլ զբաղմունքով;

-25.3%-ը արտոնություններից զրկել են, արգելել են սիրելի զբաղմունքով զբաղվել կամ չեն թույլատրել տնից դուրս գալ որոշ ժամանակով;

-19.8%-ը բղավել, ճչացել կամ հանդիմանալ են երեխային, անվանել հիմար, ծուլիկ/անբան կամ այլ ածականներ են օգտագործել:

- 6.4%-ը ապտակել կամ հարվածել են երեխային, նրա հետույքին կամ մարմնի այլ մասերին ձեռքով կամ գոտիով, փայտով կամ այլ գործիքով, ծեծել են՝ անընդհատ հարվածելով երեսին, գլխին, ականջներին, ոտքերին, ձեռքերին կամ արմունկներին: Ընդ որում՝ ծայրահեղ աղքատները կիրառել են սույն մեթոդը 1.7 անգամ հաճախ, քան ոչ աղքատները:

Աղյուսակ 5.23. Հայաստան. Տնային տնտեսություններում առկա 18 և բարձր տարիքի անդամների կարծիքը ղաստիարակմանն ուղղված մի քանի մեթոդների մասին, ըստ աղքատության մակարդակի, 2016թ.

(տոկոսներով)

<i>Հետազոտությանը նախորդող ամսվա ընթացքում ՏՏ չափահաս որևէ անդամը կիրառել է հետևյալը ղաստիարակչական մեթոդ</i>	Հետազոտված տնային տնտեսությունների չափահաս անդամների կիրառած մեթոդները	այդ թվում		
		ոչ աղքատ	աղքատ	ծայրահեղ աղքատ
խրախուսող կամ շահավետ առաջարկ լավ պահվածքի համար, օրինակ գովասանք, նվերներ, սիրած զբաղմունքի և ժամանցի ապահովում	43.3	41.7	47.4	39.4

<i>Հետազոտությանը նախորդող ամսվա ընթացքում ՏՏ չափահաս որևէ անդամը կիրառել է հետևյալը դաստիարակչական մեթոդ</i>	Հետազոտված տնային տնտեսությունների չափահաս անդամների կիրառած մեթոդները	այդ թվում		
		ոչ աղքատ	աղքատ	ծայրահեղ աղքատ
Որևէ առիթով բացատրել է, թե ինչու է նրա վարքագիծը սխալ, փորձել է զբաղեցնել նրան որևիցե այլ զբաղմունքով:	47.2	45.0	52.8	45.2
Զրկել է արտոնություններից, արգելել է զբաղվել սիրելի զբաղմունքով, կամ չէր թույլատրել տնից դուրս գալ:	25.3	24.0	28.8	17.4
Բղավել, ճչացել կամ հանդիմանել է երեխային, անվանել հիմար, ծույլիկ/անբան կամ այլ ածականով:	19.8	18.8	22.4	15.3
Ապտակել կամ հարվածել է նրա հետույքին կամ մարմնի այլ մասերին՝ ձեռքով կամ գոտիով, փայտով կամ այլ գործիքով կամ ծեծել են նրան անընդհատ հարվածելով երեսին, գլխին, ականջներին, ոտքերին, ձեռքերին կամ արմուկներին:	6.4	6.2	7.0	10.7

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2016թ.

Երեխաների մասնակցությունը բնապահպանական միջոցառումներին: Երեխա ունեցող տնային տնտեսությունների չափահաս անդամների 51.6%-ը պատասխանել են, որ իրենց երեխաները երբեք չեն մասնակցել բնապահպանական միջոցառումների (օր.՝ ծառատունկ, բնապահպանական արշավներ, գիտելիքների տարածում/հանրային իրազեկում, համայնքային բնապահպանական/մաքրման աշխատանքներ, թռչնադիտում և այլն): Երեխա ունեցող տնային տնտեսությունների չափահաս անդամների 41.7% պատասխանել է, որ իրենց երեխաները մասնակցել են այդ միջոցառումներին տարին մեկից երկու անգամ, իսկ 5.2%-ը՝ տարին երեքից չորս անգամ: Ամեն ամիս միջոցառումներին մասնակցել են երեխաների 0.6%, իսկ ամեն շաբաթ՝ 0.9%:

Աղետներով պայմանավորված բնակչության կորուստները: Վերջին մեկ տարվա ընթացքում չափահաս հարցվածների 6.8%-ը ունեցել են տարաբնույթ աղետներով պայմանավորված կորուստներ՝ կապված առողջության և ապրելու միջոցների՝ բերքի, անասնազրկաբանակի, հիմնական և կենսական նշանակություն ունեցող միջոցների՝ գույքի և այլնի հետ: Բախվողների թվից 95.7%-ը նշել են եղանակային ծայրահեղ պայմանների կամ կլիմայի փոփոխության արդյունքում ծագած աղետները, իսկ 0.1%-ը նշել են այլ բնական և տեխնածին երևույթների արդյունքում առաջացած աղետները: Ներքին ընդհարումների, պատերազմների, այլ կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում առաջացած աղետալի հետևանքների հետ բախվել են 1.1%-ը և 3.1%՝ այլ աղետների հետ: Տարաբնույթ աղետներով պայմանավորված կորուստներ ունեցել են նաև երեխաներ ունեցող տնային տնտեսությունները:

5.5.3. Մինչև 6 ամսական հասակը բացառապես կրծքով սնուցվող երեխաներ

Կրծքի կաթը լավագույն սնունդն է նորածինների համար: Բացառապես կրծքով կերակրումը հանդիսանում է նորածնի անհրաժեշտ սննդի կամ հեղուկի միակ աղբյուրը: Բացառապես կրծքով կերակրումը խորհուրդ է տրվում մինչև մանկան 6 ամսական դառնալը, քանի որ այդ կերպ ապահովվում է նորածնի անհրաժեշտ սնուցումը, և սահմանափակվում է հիվանդածին մանրէների հնարավոր ազդեցությունը: Մինչև 5 տարեկան երեխա ունեցող մայրերին տրվել է հարց՝ կերակրե՞լ եք արդյոք Ձեր երեխային բացառապես կրծքով մինչև 6 ամսական հասակը (բացառելով լրացուցիչ սնունդը կամ հեղուկը, և նույնիսկ ջուրը): Ինչպես երևում է Աղյուսակ 5.24-ից, բացառապես կրծքով կերակրել են 2016թ.-ին մայրերի 42%-ը: Ոչ աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում բացառապես կրծքով կերակրել են մինչև մանկան 6 ամսական դառնալը մայրերի 41-42%-ը, իսկ աղքատների մոտ այդ ցուցանիշն ավելի բարձր է՝ 44%:

Աղյուսակ 5.24. Հայաստան. Տնային տնտեսությունների մինչև 5 տարեկան երեխաների տոկոսը, որոնց մայրերը մինչև 6 ամսական հասակը կերակրել են բացառապես կրծքով ըստ աղքատության մակարդակի, 2016թ.

	<i>(տոկոսներով)</i>			
	Բոլոր մինչև 5 տարեկան երեխաները	Ոչ աղքատ տնային տնտեսության երեխաներ	Աղքատ տնային տնտեսության երեխաներ	Ծայրահեղ աղքատ տնային տնտեսության երեխաներ
Մինչև 5 տարեկան երեխաների տոկոսը, որոնց մայրերը մինչև 6 ամսական հասակը կերակրել են բացառապես կրծքով	42.4	41.9	43.6	41.2

Աղբյուրը. *SSYUՀ 2016թ.*

5.6. Մանկական բազմաչափ աղքատության ազգային գնահատում

Այս ենթազույգը ներկայացնում է Հայաստանում մանկական բազմաչափ աղքատության ազգային գնահատումը: Ուսումնասիրությունը հիմնվում է ՄՄԿ-ի մանկական հիմնադրամի կողմից մշակված Բազմակի և համընկնող խոցելիության վերլուծության մեթոդաբանության (MODA) վրա: Օգտագործվել են 2013 և 2014թ.-ների տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության, ինչպես նաև 2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. հունիսի 30 ընկած ժամանակահատվածում իրականացված «Երեխայի կարիքները» հետազոտության արդյունքները: ՀՀ ԱՎԾ-ն գնահատել է 2016թ.-ի մանկական բազմաչափ աղքատությունը՝ օգտագործելով MODA մեթոդաբանությունը և հիմնվելով 2016թ. SSYUՀ և «Երեխայի կարիքները» հետազոտության արդյունքների վրա:

Ուսումնասիրությունը չափում է խոցելիությունն աղքատության մի շարք չափելի դրսևորումներում (Աղյուսակ 5.25): Չափումների ընտրությունը կատարվել է ազգային և զարգացման գործընկերների հետ լայն խորհրդակցական գործընթացի միջոցով՝ որպես ուղեցուցային սկզբունք օգտագործելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան: Սույն մեթոդաբանությունը կիրառում է կենսափուլային մոտեցում, հետևաբար վերլուծությունը տրոհված է երեք տարիքային խմբերի (0-5, 6-14, 15-17): Բացի այդ, MODA-ն ունի հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

- վերլուծության միավորը երեխան է, այլ ոչ թե տնային տնտեսությունը, քանի որ մանկական աղքատությունն զգալիորեն տարբերվում է մեծահասակների աղքատությունից;
- կիրառվում է երեխայի կարիքների ամբողջական դիտարկման մոտեցում;
- միաժամանակ չափվում են դրամական աղքատությունն ու բազմաչափ խոցելիությունը;
- հարստացվում է համընկնող խոցելիության վերլուծության և (բազմակիորեն) խոցելիների աշխարհագրական և սոցիալ-տնտեսական նկարագրի վերաբերյալ գիտելիքը՝ մատնանշելով արդյունավետ քաղաքականության մշակման մեխանիզմները:


Աղյուսակ 5.25 . Հայաստան. Աղքատության դրսևորումների և ցուցանիշների ցանկ

Աղքատության դրսևորում	Ցուցանիշ	0-5 տարեկան	6-14 տարեկան	15-17 տարեկան
Սնուցում	Բացառապես կրծքով կերակրում առնվազն մինչև 6 ամսական ¹	X		
Վաղ մանկության կրթություն և խնամք (ՎՄԿՆ)	Հաճախում նախադպրոցական հաստատություն (3-5 տարեկան) ²	X		
Կրթություն	Տնային աշխատանքները կատարելու տեղ		X	
	Դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքներ		X	
	Ընդգրկված չէ զբաղվածության կամ կրթության համակարգերում			X
Ժամանց	Դրսում խաղալու վայր		X	X
	Ժամանցային միջոցներ (խաղալիքներ, հեծանիվ)		X	
	Գրքեր			X
Սոցիալական փոխհարաբերություններ	Ընկերներ		X	X
Հագուստ	Կոշիկներ		X	X
Տեղեկատվություն	Տանը համակարգչի բացակայություն	X	X	
	Ինտերնետային կապի բացակայություն	X	X	
	Համակարգչից օգտվելու հնարավորության բացակայություն			X
	Համացանցից օգտվելու հնարավորության բացակայություն			X
Կոմունալ ծառայություններ	Ջրամատակարարում (հասանելի է օրական 8 ժամից պակաս կամ ամսական 20 օրից պակաս)	X	X	X
	Ջեռուցում (չկա կամ օգտագործվում է փայտե վառելիք)	X	X	X
Բնակարանային պայմաններ	Գերբնակեցված	X	X	X
	Բնակարանային պայմանների հետ կապված խնդիրներ	X	X	X


Նշումներ: (1) Հարցը տրվել է հետահայաց, 0-5 տարեկան բոլոր երեխաների համար; (2) Սահմանվում է միայն 3-5 տարեկան երեխաների համար, 0-3 տարեկան երեխաները համարվում են ոչ խոցելի:

Աղբյուրը. *SSԿԱՀ 2013/2014-2016թթ.*


Գծապատկեր 5.1. Հայաստան. Խոցելիությունն ըստ չափման և բնակավայրի, 2013/2014, %



Գծապատկեր 5.2. Հայաստան. Խոցելիությունն ըստ չափման և բնակավայրի, 2015, %



Գծապատկեր 5.3. Հայաստան. Խոցելիությունն ըստ չափման և բնակավայրի, 2016, %




Աղբյուրը. *SSYSUՀ 2013/2014, 2015թ, 2016թ.*

Ինչպես 2013/2014թթ., այնպես էլ 2015 և 2016թթ. Հայաստանում երեխաների մեծ մասը գրկված է կոմունալ ծառայություններից: 2016թ.-ին 2013/2014թթ.-երի համեմատ խոցելիության մակարդակը նվազել է բոլոր դրսևորումներով: Սնուցման, հագուստի և սոցիալական չափումներում խոցելիության մակարդակի անկումը հատկապես նշանակալի է: Քաղաք-գյուղ տարբերությունները 2016թ.-ին բավականին խորն են հատկապես կոմունալ ծառայությունների տեսանկյունից, որին հետևել են տարբերությունները հագուստի և տեղեկատվության չափումներում:

2016թ. տվյալներով երկու և ավելի դրսևորմամբ խոցելի երեխաները մեծամասամբ ապրում են գյուղական բնակավայրերում, ունեն մեծ թվով քույրեր/եղբայրներ, նրանց SS գլխավորն աշխատում է գյուղատնտեսության ոլորտում և ունի ցածր կրթական մակարդակ:

Գծապատկեր 5.4. Հայաստան. Բազմակի դրսևորումներում խոցելի երեխաները



Աղբյուրը. SSԿԱՀ 2016թ.

Աղյուսակ 5.26. Հայաստան. Երեխաների խոցելիության մասնաբաժինը, 2013/2014-2016թթ.

(տոկոսներով)

	Ազգային	Քաղաքային	Գյուղական
2013/2014թթ.	63.7	52.5	81.7
2015թ.	64.5	54.1	80.0
2016թ.	57.4	50.8	68.7

Աղբյուրը. SSԿԱՀ 2013/14-2016թթ.

Հայաստանում երեխաների 57.4% խոցելի է աղքատության 2 և ավելի չափերի դրսևորման ուղղությամբ՝ համաձայն 2016թ. տվյալների (2013/2014թթ. 64%-ի համեմատ): Խոցելի երեխաների մասնաբաժինը հասնում է 69%-ի գյուղական բնակավայրերում (82% 2013-2014թթ.), մինչդեռ այն 51% է քաղաքային բնակավայրերում (53% 2013-2014թթ.): Այսպիսով, 2016թ.-ին մանկական բազմաչափ աղքատության տեսանկյունից քաղաք-գյուղ տարբերությունը մեղմացել է:


Աղյուսակ 5.27. Հայաստան. Խոցելիության (2+) և դրամական աղքատության համընկնումը, 2016թ.

(տոկոսներով)

	Ազգային	Քաղաքային	Գյուղական
Աղքատ և խոցելի	25.2	23.1	29.0
Միայն խոցելի	32.2	27.8	39.7
Միայն աղքատ	9.2	11.0	6.3
Ոչ աղքատ, ոչ խոցելի	33.4	38.1	25.0

Աղբյուրը. SSԿԱՀ 2016թ.

Գծապատկեր 5.5. Հայաստան. Խոցելի և/կամ աղքատ երեխաների մասնաբաժինը, 2016թ.



Աղբյուրը. *SSYLL 2016թ.*

Առկա է դրամական աղքատության և խոցելիության զգալի համընկնում: Երկու և ավելի դրսևորումների տարանջատման կետով երեխաների 25.2%-ը թե՛ աղքատ է, թե՛ խոցելի: Հատկանշական է, որ երեխաների 32.2%-ը խոցելի է, չնայած չի ապրում աղքատ SS-ում: Սա այն երեխաներն են, որոնք, ամենայն հավանականությամբ, դուրս են մնում միայն դրամական աղքատության հաղթահարմանն ուղղված միջամտություններից, և հատուկ նպատակային ծրագրերի կարիք ունեն: